



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.


պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

61



1867

94.2003

8-93

8-44

ՀԵՂՈՒԹՈՒ ՄԱՆԿԱՆՅ

ՀԵՂՈՒԹՈՒ

Զ

ԾԵՐ ԳԻՒԳԱՄՈՒՐ

ԶՈՏԿՈՒԹՈՒ ՀՈԼԿՈԹԱՆԵՐ

ՎԵՆԵՑԻԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅՆ ԴԱԶՈՐՈՒ

1867

ԶԲՈՍԱՐԱՆ ՄԱՆԿԱՆՑ

Զ

ԾԵՐ ՊԻՒԳՄԱՆԸ

…≈≈…

ԶԱՏԿԱԿԱՆ ՀԱԽԿԻԹՆԵՐ

8 - 93

8 - 44

մշ.

ԾԵՐ

Պ Ի Ւ Գ Մ Ա Ն Ը

(1001
Զ 039)

ԵՐԿՐՈՐԴ ՏՎԱԿՐՈՒԹԻՒՆ



Ի Վ Ե Ն Ե Տ Ի Կ

15816-58

7

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄՐԵՈՑՆ ԴԱԶԱՐՈՒ

1904

32029-4. հ.

ԾԵՐ ՊԻԼԳՄԱՆ

ԾԵՐ ՊԻՒԳԴՄԱՆԸ

Ա

Ակրպուրիի Բերդը

Աշանային գեղեցիկ իրիկուն մը երբ
արևը իր փայլուն ճառագայթներով կ'ոսկե-
զօծէր Օտէնվալու և Մէլիպոգուս լերանց
ծայրերը, որոնք ծանօթ են այն ամէն վա-
ճառականաց՝ որ Ֆրանդֆորդի տօնավա-
ճառը կ'երթան Հունոսի ճամբով։ Վաճա-
ռաց ծանրաբեռն կառքերը՝ որոնք նոյն օրէ
ինչուան Հիվընպէրկ պիտի երթային դան-
դաղութեամբ և անիւները ճռնչելով առաջ
կ'երթային։ իսկ ճանապարհորդները որպէս
զի շուտառվ Տարմշգատ հասնին գիշերը հոն
անցնելու համար, շտապաւ կ'անցնէին այն
լեռները։

Ահաւասիկ պատկեր ճշգրիտ մարդկային կենաց, ուր մէկը իր բեռը շալիած ծանրաւ քայլ կը քալէ, մինչդեռ ուրիշ մը արագաւ քայլ և զուարթութեամբ կը վաղէ. կը մնայ գուշակել թէ այս երկուքէն արգեօք ո՞րը պիտի հասնի ապահով իր նպաստակին: Ծերունի մը կ'երթար այն կողմէն որ աւելի շուտ և կարճ ճամբով Աէրպախէն կը հանէր Աէրպուրկի աւերակները, որ կը կոչուի Սոտիւ — մէկվը, ծերուն գէպի գետին խոնարհած զլուխը՝ կ'իմացընէր իր մըտածովը, և կոշտ գաւաղանի մը վրայ կը յենուր, որուն նմանը քիչ անդամ կը տեսնուին մեր կողմերը: Թէ որ ճամբուն վրայ իւրեն տղայ մը հանդիպէր, որ ոչխարները արծելէն գարձնէր, կամ օրիորդ մը երկուրդ օրուան համար խորճ մը ճիւղերու ժողուած տուն գաւանար, երկշուռութեամբ մը կ'ողջ յունէին զծերունին, և քանի մը քայլ ընելն ետքը անգամ մըն ալ կը գարձնէին զլուխնին, և աչք մը կը ձգէին անոր ետեւէն, վասն զի այս մարդս եղական կերպարանք մը ունէր և զգեստներուն ձևն ալ տեղացւոց սովորութենէն տարբեր: Վերջապէս իր վիճակական հին բերդին աւերակներուն հասաւ, ուր աշտարակ մը և քանի մը փըլփըլկած պատեր միայն մնացած էին. արեւ հորիզոնէն վար խոնարհելու ատեն քարակուտի մը վրայ նասաւ, և աչքերը դիմացի շըլակայիցը վրայ գարձնէլով, գործվալից սրտով մը այս խօսքերս ըստ:

« ԱՇ, վերջապէս հեղ մըն ալ զիս հոս կը տեսնամ, քառասուն տարիէն ետքը, ուրուն ամենենին չէի յուսար, ողջոյն ձեղ, հին բարեկամք իմ՝ կանանչաղարդ անտառներ, և զու պատկառելի Հոկենոս. շատ անգամ յիշեր եմ զեկը և սոէպ մաքովս զիս հոս երևակյաեր եմ, ինչ բան է հայրենիքը, բայց սակայն չիայ ճշմարիս հայրենիք մը, երկնքէն զատ: Բարէ, հոն են այսօրուան օրս բոլոր անոնք զոր կը սիրէի և որոնք զիս մինակ թողուցին. Ենչպէս ամեն բան կը փոխուի այս աշխարհիս վրայ »:

Նատաւ կոշտ քարի մը վրայ և պատին կոթնելով Անգղիական երգ մը երգեց այսպէս :

« Հովը կը ծածանէ այսօր ծաղիները, վաղը շառաշմամբ կը տապալէ կաղնին, այսօր քամին օղը կը մաքրէ, վաղը մեզի ժանտախտ կը բերէ, երեկոյեան գէմ կը զովացընէ հոգնած ճամբորդը, և կէս զիշերուն բոլոր շըլակայքը փոթորիկ կը յարուցանէ :

« Առաւոտը արեւուն քաղցր ճառագայթները կը փթթեցնեն հովտին գեղեցկագոյն ծաղկունքը. իրիկունը արեւուն սաստկութիւնը կը խամրէ անոնց փայլուն գոյները: Հոս արեւ կը տաքցընէ ժերուն ընդարձացեալ անդամները, անդ կը նեղէ զպանցուխտը իր շերմութեամբն:

« Մայիս ամսայն մէջ թեթև նաւակ մը զուարթութեամբ կը շարժի Ովկիանոսի վը-

բայ, իսկ աշնան ալիքները՝ ցասմամբ ուրիշ բան չեն բերեր իրենց ափունքը, բայց եթէ կոտրած ասխատակներ, և դիակնաց ած նաւասատիներ ափունքը կը զարնէ՝ որոնց կանայքը կու բան վրանին ցաւագին հեծութեամբ։

« Երբոր յայսը կը համի իր բարձրագոյն կէտին՝ անկէ եսքը կը սկսի նուռաղի և ուրախութիւնը կը փարասի, անիկայ որ կ'ամբարհաւաճէր երեկ իրը Տէր աշխարհի, այսօր ախուր կերպով գերեզման կիջնայ, ըսել է, թէ կենաց բաժակը՝ թոյն միայն պաշտեր է իրեն։

« Ալիքները փոփոխական են. փոթորիկը կը մանչէ, արեւուն ձառագայթները կ'անշատուին եկեղեցւոյ խաչէն. ծալուն երեսը յուղեալ է, մեծամեծք կ'անշանան երկրիս երեսէն. ինչպէս որ այնշափ փոշւոյ հասիկները՝ հովը կը ցրուէ։ Բան մը միայն ազատ է յեղափոխամանէ որ է միտքը և անշփոփս կամին սէրը »։

Մինչդեռ այսպէս կ'երգէր ծերը՝ գողգոնն բայց յասակ ձայնով մը, յանկարծ երկու աղաք ելան աւերակաց մէջէն և մըտագրութեամբ անշարժ կէցան՝ իր ետեր։

Երբոր երգը լմնցաւ, աղաքը իրենք զիրեն յայտնել ուզելով, սկսան երկշոտութեամբ մը հազար, փափաքելով անշուշտ որ ծերուն երեսը տեսնեն։ Ծերը դարձաւ և տեսաւ այս երկու երիտասարդներն մաքուր հագուած որոնք մեկէն բարեկցին

զինքը շնորհալից կերպով մը. բայց ծերունին դեռ պատասխան չի տուած տեսաւ անոնց հօրեղբօր գալը՝ որ այն վրձակայքը խստ հանելու զրագած ըլլալով երգին վերջի տունը միայն լսած էր։ Կը մտածէր որ երգովը Անգլիացի պիտի ըլլար, որովհետեւ երգածը Անգլիերէն եղանակ մըն էր՝ ուստի ծերուն մօտենալով ըստ իրեն անգլիերէն։

— Պարոն, գուք թէպէտ ինծի բոլորովին անծանօթ էք, բայց ձեր երգին վերջը, որ բոլորովին կը՝ աեսնուէր թէ ձեր սրտին խորէն կը բղիսէր, ինծի կասկած կուսայ թէ գուք պէտք է որ ճանշնաք մեր ամենա նուա երկնաւոր Հայրը։ Ասիկայ բաւական է ինծի, ես սա մօտիկ գեղիս ժողովրդապետն եմ զոր լերանս ստորոտը կը տեսնաք։ Թէ որ օսարական էք հոս և պարզութիւն կը սիրէք՝ կը հրաւիրեմ զձեզ բուլը սրտավլս մեր զիւղական բնակարանը»։ Ծերը զերմաններէն պատասխոնեց։ « Հասնորհակալ եմ ձեր ազնիւ հրաւիրանայը և կ'ընդունիմ յօժարութեամբ։ Հին նաւապետէ մը շատ քաղաքավարութիւն չի պահանջունուիր»։ Աս ըսերով սկսան երեկոյեան վերջապյուսին ժամանակ զէպ ի զիւղը երթալ, որուն զանգակատունը կեռասենոյ անսառի մը մէջ շինուած էր. նաւապետը ճամբան երթալու տուեն պատմեց ժողովրդապետին, թէ այն օրը հասած էր Աէրպահի իջևանը, և իր առաջին զործը այն եղաւ որ Աէրպարկի հին բերգին այցելութեան երթայ։

Բ

Ժողովրդապետին Տունը.

Գիշերը կոխած ատեն հասան գեղը, մինչ դեռ լուսինը լեռանց ետևէն կը բարձրանար: Ժողովրդապետին քոյրը առաջոց իւմացած ըլլալով՝ տղայոցմէ թէ օտարական մը կ'ընկերէր իրենց ուսուցչին, աճապարեց գնաց մտերմութեամբ եկողներուն ընդ առաջ: «Մի՛ վախնաք նոր եկաւորի մը այցելութենէն, ըստ իրեն նաւապետը, ձեզի ծանրութիւն չեմ ուզեր ըլլալ»: Թէ որ գուք գոհ էք մեր մարդասիրութենէն, պատասխանեց ծողովրդապետին քոյրը, տարաշոյս մի ունենաք որ մեզի ծանրութիւն կ'ըլլաք»: Այս խօսքը ըսելին ետքը խուցը մատ բարի մատակարարը, և զեղին զինիկն շիշ մը բերաւ որ զիւգագնի էր այն կողմերը, և սեղանի նատեցան. իսկ տղաքը գացին անկիւն մը նստան, և անհամբերութեամբ ծերուն պատմութիւններուն կ'ըսպասէին, որպէստեւ պատմական և հետաքրքրական բաներ շատ կը սիրէին, և կը յուսային նաւապետէ մը տեսակ տեսակ բաներ լսելու՝ մտածելով որ անտարակոյս մեծամեծ համբորդութիւններ ըրած պիտի ըլլայ: Եւ յիրաւի այս մարդը շատ ըսե-

մենէր ունէր իրենց. բայց պատմելու շատ պատրաստական չէր ցուցըներ ինքզինքը: Հիւրը շրջակայ զիւղերուն վրայ սկսու հարցմունքներ ընել ժողովրդապետին, և այն կողմերը գտնուած ընտանիքները ճանչնալու շատ հետաքրքիր կ'երեար:

Վերջապէս հարցուց թէ արդեօք ծեր Պիւգմանին ազգականներէն կը գտնուէ՞ն դեռ, որ քառասուն տարի առաջ ժողովը զատկան էր այս կողմերս: — Զեմ ճանչցած զինքը, պատասխանեց ժողովրդապետը, միայն զիւրեմ որ ինքը սրիկայ եղբօրորդի մը ունէր, և հիմա ուր գոցած ըլլալը մարդ չզիւրէր. երբէք իր վրայօք լուր մը լսուած չէ: Եւ միթէ կը ճանչնայի՞ք գուք այն ծեր Պիւգմանը: « Այս պատասխանեց նստապետը, իմ հօրեղբայրս էր »:

Ժողովրդապետը դուզալով մը կանչեց: « Կարելի՞ է որ դուք ըլլաք այն չարագործ Ֆրանձը, որուն վրայօք գեղին քանի մը ծերերը շատ բաներ կը պատմեն: Ո՛հ, թուզութիւն ըրէք ինձի որ ես ձեր վրայօք մեկէն չարագործի մը պէս խօսեցայ. ի՞նչպէս կրնայի մտածել որ դուք ըլլաք այն յիմար Ֆրանձը, որ քաղցրաբարոյ և բարեպաշտ կը տեսնուիք հիմա »: Հրամերես, ես եմ, օրհնեալ ըլլայ Աստուած, ըստ նաւապետը, ցաւագին ձայնով մը. զթած Աստուած զիս ուղղեց խիստ փորձով և սոսկալ պատուհասներով: Բայց այսօր թողոնք այս բաներս, ցաւալի է ինձի հիմա կենացս մանր գէպ-

քերուն իջնալլ: Ալդէն վշտացած եմ մտածելով որ ահա կ'ուտեմ և կը քնանամ այն յարկին տակ ուր կը բնակէի տափէ յիսուն տարի տառջ, ուր իմ Հօրեղբայրս կնքեց իր ցաւագին կեանքը»: Պէտք եղաւ որ ժողովրդապետը իրեն մտիկ ընէ, թէպէտ անհամբէր էր ուրիշ կողմանէ ալ լսելու այս մարդուս հետաքրքրական պատմութիւնը. իր քոյրը և իրեն իրկու պատմնի աշակերտքը սաստիկ հետաքրքրութեամբ ուշ կը դնէին այս օտարականին խօսքերուն. բայց ընթրիքէն առաջ շատ չխօսեցաւ:

Երբոր ընթրիքը լմնցաւ, տղաքը սահպեալ էին անկողին երթալու, թէպէտ կը մտածէին ալ որ անշուշտ հիմա պիտի սկսի պատմել, և իրենք կը փափաքէին մտիկ ընել, բայց ըստ իրենց սովորական կանոնին առանց զժուարութեան ելան դնացին :

Տղոց պառկելէն ետքը նաւապետը իմացուց ժողովրդապետին որ կը փափաքէր կենացը մնացած օրերը իր ծննդեան երկիրը անցնելու, և թէ արդէն իր ամեն կահկարասիքը Աէրպախ փոխազրած էր ուստի կը մնար տեղեկանալու թէ արդեօք իրեն համար փայելուշ բնակութիւն մը կը զտնուի այն կողմերը զոր կարենայ վարձել կամ զնել: Ժողովրդապետը շատ ուրսաւացաւ այս բանիս վրայ և իմացուց իրեն թէ իր ժողովրդապետական տանը քով ժախու տուն մը կայ՝ որ անտառաց տեսչինն էր, և թէ-

պէտ պղտիկ և պարզ էր, բայց բարեվայեւուչ: Ասիկա յարմարեցաւ նաւապետին, և գիշերը առանց իմանալնուն առաջ գնաց, որովհետեւ տանը ծախուելուն պայմաններուն վրայ խօսելով զբաղեցան, ինչուան որ մատակարարը իմացուց որ ժամացոյցը բաւական ատենէ, ի վեր 10 զարկեր էր: Այն ատեն ելան անկողին գացին բայց ժողովը զապետը կը լսէր երկայն ատեն որ իր նոր սեղանակիցը սենեկին մէջ վեր վար կը քաշեր որ իրենինին վրայ էր և բարձր ձայնով աղօթք կընէր, ասով ինքն ալ գոհ եղած անուշ գուն մը եղաւ: Յաջորդ օրը երկու տղաքը առտուն կանուխ ելալով, որոնք արդէն խկ գարժած էին, վասն զի չորս տարեկան եղած առենը լսած էր անդամ մը Ոգոստինոս թէ «Ամօթ բան է թողուց որ արեւը կանխէ մեզմէ առաջ որն որ այնշափ համբայ պիտի ընէ օրուան մէջ»: Արթըննալնուն պէտ, մեկէն իրենց առաւօտեան աղօթքը կ'ընէին և կ'երթային երեսնին և ձեռուընին լուալու, և ետքը իրենց ուսուցչին հետ կ'ելլային շրջան մը ընելու մերձաւոր լերանց վրայ կամ անսառներու մէջ, ուստի շատ առնկեր կը բերէին, զորոնք ժողովրդապետն աղէկ կը ճանչնար, և անոնց այլեւ այլ տեսակներուն վրայօք տեղեկութիւններ կուտար իրենց: Բայց այն օրը այն բաներէն և ոչ մէկը ըրին և ծերուն պատմութիւններէն զատ բան մը չէին մը տածէր. կընայ մարդ երևակայել անոնց ու-

լախութիւնը երբոր իմացան ժողովրդապետին քրոջմէն որ գեղին մէջ պիտի կենար և հաւանականաբար անստառապետին տունը պիտի բնակէր։ Այսպիսի պզտի գիւղի մը մէջ, որ նոր բան քիչ կը պատահի, հասարակաց ճամրէն հեռու ըլլալուն պատճառաւ, ամեն ճամրող իջևանին դիմացը որ ճամնէր՝ իր ձին հանգչեցնելու համար, մասնաւոր գէպք մը կը համարուէր, և ամենուն հետաքրքրութեան նիւթ կըլլար, և թէ որ ըստ գիպաց մէկու մը հետ խօսէր, կամ պզտի ծանօթութիւն մը տար, երեք օր ամեն տան մէջ խօսելու նիւթ կ'ըլլար։ Ուստի երբոր Հողանատայէն եկած օտարական նաւապետին գտալուսոր հոչակուեցաւ, և թէ ժողովրդապետին քոլը իշնալով այս գեղը բնակելու միտք ունէր, և թէ այս նաւապետը այս սրիկայ Ֆրանձն էր, կրնայ մակարերուի թէ ինչ մեծ շարժմունք պատճառած ըլլայ այս լուրը բոլոր գեղին մէջ։ Ամենքը իրենց աշխատութիւնները մոռցած և խմբովին ճամրուն վրայ խոնած կը ջանային այլ և այլ թէպէր պատմել իրարութէպէտ և ոչ ոք ստոյդ տեղեկութիւն մը ունէր։

» Ես անսայ գեղին մէջ մտնալը երէկ իրիկուն բայց շատ մութ էր, ըստ պառաւ Աննան։ — Կ'ըսեն թէ շատ հարուստ է, ըստ Քերորէն, որպէս զի ինքն ալ բան մը ըստած ըլլայ։ — Ուրիշ կերպով չի կրնար ըլլալ նաւապետ մը, պատասխա-

նեց Եղիսարեթը, առանց միլիոններ ունենալու։ — Ի՞նչ տեսակ մտածութիւն է այս, ըստ ծեր սատիկանը, ապահով եղիք որ մեծատուն մը չիգար այս ողորմելի գեղը բնակելու։ — Թէ որ ինչուան հիմա չէ փոխուած՝ ըստ ծեր Նիկողոսը՝ մեծ ինայութիւն մը ըրած պիտի չըլլայ. վասն զի ես առաջին բարեկամութիւնս իրեն հետ ըրեր եմ, և երիտասարդութենէն ի վեր զինքը լսու. կը ճանչնամ, ձեռքէն դիւրաւ բան չըլլար։» Վերջապէս ամենքը միտքերնին զրին որ այս իրենց խօսակցութիւններէն լաւագոյն է նաւապետին սպասել և իրմէն լսելու գլխէն անցածները, որով և իւրաքանչիւր մարդ իր գործոյն գնաց։ Ան միշնցին ժողովրդապետին տունը որաշեցին որ նաւապետին փայտէ և կաշիէ սնաւուկները, Աէրպախի իշւանէն Տօրնհակէն բերել տան։ Ինչպէս որ այս օտարականին տունը անստաներու հին տեսչինն էր՝ որ ան միշնցին ինքը Տօրնհակէնի սատիկանն էր՝ նաւապետը կրցաւ մէկէն հօն փոխադրութիւն։ Ժողովրդապետին քոյրն ալ փոխ տուաւ անոր հարկաւոր եղած կահկարսափը։ Երբոր սընստուններով լեցուած կառքը Աէրպախէն հօն հասաւ, աղայոց և ծերերուն հետաքրքրութիւնը աւելցաւ։ — «Ի՞նչ կրնայ ըլլալ այս սնտունին մէջ կ'ըսէին, սափիս անշուշտ ստակով լեցուն պիտի ըլլայ, վասն զի երկու հոգի չեն կրնար զայն տանելու և չըրնար ըլլալ որ մարդ մը զգեստներով



լեցուն վեց սնտուկ ունենայ: — « Ի՞նչ է՞ն
կը հանես դու ուրեմն որ ինքը մինակ ըլ-
լայ, բայտ ուրիշ մը. թերեւ իր ընտանիքն
ալ մէկտեղ պիտի գոյ: — Հաւանական է,
բայց չեմ կարծեր »: Ոգոսախնոսը և իր
կարողու եղայրը կ'ուղէին զիտնալ թէ ինչ
գանձեր ունի՞ արգեօք նաւապետը իր սրն-
տուկներու մէջ: Այս բանս ժողովրդապետին
հարցուցին բայց անիկայ պատսախանեց որ
ինքն ալ չէր զիտեր, ուստի պէտք եղաւ
անոնց բացուերուն սպասերու: Առաջին օքը
նաւապետը մէկէն բացաւ սնտուկները, բայց
ութը օր մարդու ալ չթողուց զինքը տես-
նալու, նաև իր պառաւ աղախնոյն ալ զոր
քոյլը առած էր, արդիեց սնտուկներուն
խուցը մտնալու: Եւ կերակորն ալ ժողո-
վրդապետին տունը կ'ուղէր, որ քանի մը
քայլ հեռու էր կեցած տեղէն, շատ անգամ
նոյն խալ պարտեղէն սննդին կ'անցնէր. և
այս կերպը բաներով աղատ եղաւ առանձին
խոհակերոց մը վարձելու:

¤

Անտառապահին ջունը.

Ութ օրէն ետքը, վերջապէս նաւապետը
հրաւիրեց բոլոր ժողովրդապետին ընտա-
նիքը, գալ թէյ մը խմել իր տունը, որ
շատ փառաւոր զարգարած էր, և հոն պա-
տին դիմացը սև գերիներ կեցած էին,

ըսնք թէյ և ծխախոս կը հրամցնէին :
Ոգոսախնոս և կարողուը տեսնալով զանոնք՝
վախ մը զգացին սրտերնուն մէջ, բայց եր-
բոր մօտեցան անոնց, իմացան որ անոնք
օթոցներու վրայ սև նկարներ էին:

Նաև հաւանեցան, վասն զի այնպիսի զե-
ղեցիկ օթոցներ ամեննեին չէին տեսած :
Նաւապետը աղնիւ թէյը հրամցուց շինա-
ցի ամսններով, նաև գեղեցիկ նարինջներ
ընծայեց զորոնք Մալզայէն բերած էր: Մո-
ւոգի կղզիներէն սնտուկ մը լեցուն շինու-
թէյ և համեմներ ունէր հետու, և ուրիշ
արկղներու մէջ արևմտեան Հնդկաստանի
շաքար և սուրճ. և վիրգինեայ ծխախոտէն,
արեների մետաքսէ կերպասներ, և ուրիշ
տեսակ բաններ որոնք սմանց աւե-
լորդ կը համարուին և ուրիշներու կարեսոր.
բայց ժողովրդապետին և իր աշակերտացը
սաստիկ հետաքրքրութիւնը շարժող ոչ այն-
շափ այս մեծագին բաներս էին, զորոնք իր
քոյլը կ'ախորժէր, որչափ բնութեան բեր-
քերու ճոխ հաւաքում մը զորոնք վերջի
ութը օրուան մէջ կարգի գրած էր:

Ունէր նաև Զինու քօքօ ընկոյզ, Պրա-
զիկ թիթեռնիկներ, սև ծովու սաթ, կը-
րէնանսայի կտաւաքար, ծովիկերեայ գե-
ղեցիկ խոտեր, տեսակ տեսակ բուսաեր,
ծովու սպնիներ, խեցեմորթներ, ծովու մի-
ջատներ և ուրիշ գեղեցիկ ժըժմունքներ:
Ուրիշ պղտի արկղիկի մը մէջ ալ ունէր
գեղեցիկ հաւաքում մը Հնդկաստանի և

Պարակաստանի աղուոր քարերու՝ որ մարշու աշքը չէր կշանար նայելով։ Օգոստինսոս կ'ուրախանար մասմակով որ պիտի կարենայ շատ անդամ հոն գալ այս բառներս զննելու և տեսնելու ուզածին պէս, որուն համար հրաման ալ ընդունեցաւ։ Աշմեն օր այս երկու աղաքը կ'երթային քանի մը ժամ նաւապետին տունը անցընելու։ Երբեմն իրենց գեղեցիկ զիրք մը կու տար որ միասեղ կը կարգային տանը դիմաց եղած նասարանին վրայ, երբեմն իրենց կը սարսակցներ Անդզիերէն և Գաղղիերէն, և երրոր ուշադրութեամբ և մտադրութեամբ մտիկ կ'ընէին՝ իրենց քանի մը չտեսած բաներէն ալ կը ցուցընէր, և կամ այնպիսի բաներ կու տար որ աղայոց հաճոյ կ'անցնէր, երբեմն ալ արմաւենի, թուզ, ժժմունք և ասոնց նման բաներ կու տար իրենց, և կամ Անդզիերէն զիրք մը կը կարգացընէր և զայն գերմաներէն կը թարգմանէր, իրենց հասկնալի ընելու չափ. նաև կը մեկնէր ինչ որ չէին բարոներ, և աւելի պարզելու համար իր բեղմաւոր մտքէն օրինակներ կը բերէր անոնց։ Օր մըն ալ ճպառն և մըջման առակը բերնուց սորվեցնելով իրենց՝ հարցուց թէ ճպուռը որուն կը բանցը նմանցնել »։ Տեսակ մը մարգու, պատասխանեց կարստաը. բայց ի՞նչ տեսակ մարդու. Խնձի կ'երեայ թէ, ըստ Օգոստինոսը, այն տեսակ մարդկանց՝ որոնք անշնորութեամբ և առանց բան մը սորվելու

կ'անցնեն ժամանակնին։ Այնպիսիք չեն գիտեր որ քիչ մը ետքը պատիժնին կը զըտնան, վասն զի մարդ ալ չկրնար զիրենք բանի մը գործածել, այն ատեն պիտի ըսեն իրենց. Խնչու համար դուք աւելի վաւթաշն չէք եղած ձեր պղոտիկութեան ժամանակ»։ — Տուած մեկնութիւնդ շատ աղէկէ, ըստ նաւապետը։

Դ

Արիկայ Ջրահնձ.

Ամեն անդամ որ ժողովրդապետը այցելութեան կ'երթար նաւապետին, կը տեսնար որ անիկա ատեն ատեն ախուր կերպով մը կը նայէր դիմացը կախուած քաղարկեալ պատկերի մը վրայ. և երբեմն այնշափ կ'զգացուէր որ աշքերէն արցանք կը թափէր։ Առջի բերան ժողովրդապետը համարձակեցաւ հարցընել նաւապետին խորունկ հասաշանացը պատճառը, բայց վերը մտածելով իրեն հետ ունեցած բարեկամութիւնը և իր պաշտօնը, որոնք զինքը կ'ստիպէին, գէթ փորձ մը ընելու խեցնին նեղութիւնները մեղմացնելու համար, որուն պատճառը թերևս մեծ բան մը հանդիպած կ'երենար։ Այս մտածութեամբ՝ օր մը երբ մինակ էր նաւապետին հետ՝ և զիրքն ալ յարմար, ըստ իրեն։ « Բարեկամ ի՞նչ է պատճառը որ դու ստէպ կը նայիս այն

պատկերին վրայ, և անով շատ անդամ կը տիրիս: Ո՞չ սիրելի ժողովրդապետ, պատասխանեց նաւապետը, անիկա է որ իմ վշտացս ազբերը կ'ընդարձակէ և վիճակս կը թշուառացընէ: Ինչ երջանիկ կ'ըլլայի ես հոս՝ կենաց ամեն կարեոր միջոցները անենալովս, եթէ այս մարդուն պատկերը որ կը տեսնաք հոս, զիս ամեն վայրկեան չիխումիբ: — Ուրեմն ի՞նչ պատկեր է այն, հարցուց ժողովրդապետը: — Ասիկա իմ հօրեղօրս կենդանագիրն է, ըստու մէ կալլ, բայց բանը աղէկ հասկընալու համար պէտք է որ մանրամասնաբար պատմեմ ձեզի դիմէս անցածները . բայց կանչել առոր մէկանոնք ալ, որպէս զի դիմնան իրենք ալ թէ ինչ է եղեր իմ ճակատազիրս »:

Ժողովրդապետին քոյրը և երկու աշակերտները երրոր ներս եկան, նաւապետն ալ հանդարտ ձայնով մը սկսաւ պատմել ըսելով :

» Ես այս գերս ծնած եմ, ինչպէս որ դուք ալ զիտէք 1754ին ե տարբերքէն մայրս մեռաւ: Հայրս ալ քիչ ատենէն մեռնելով հօրեղօրս զիս քոյրը առաւ որ զիւզիս ժողովրդապետն էր: Ասիկայ կրթեալ և երկիւլած մարդ մը ըլլալով շատ պատիժ կու տար իր եղբօրորդուոյն զինքը բաւ կըրթելու համար առաքինութեան ճամրուն մէջ: Բայց իր վիճակին պարտգերը և առանձնական զինքը չին թողուր մասու-

նաւորապէս ինծի ալ ուշ գնելու. և տանը մէջ ալ ծեր և խուլ հօրաքոյրէ մը զատ ուշ րիշ մարդ չունէր, որուն շատ դժուարին էր կրակոս և աշխոյժ ազու մը ուշ գնել: Ուստի թիւները չեն պականեր շակելու իմ լրութիւններս և յանդզնութիւններս: Սորուելու այ շատ յաջող էի և թէպէտ հօրեղօրայրս ինծի երկու ժամ ատեն կու տար գասերս պատրաստելու, բայց ևս կէս ժամ կը զրոյի ե անոնց, խայ մնացած ատենս ընկերներուն չետ կ'անցնէի և անոնց չետ կ'ընէի իմ ամեն տեսակ խորամանկութիւններս և յիմարութիւններս: Երբոր հօրեղօրայրս կ'իմանար այս բաներս, խսուիւ կը պատմէք զիս, բայց ևս գարձեալ միջոցներ կը գոնայի անկէց փախչելու: Հօրեղօրայրս զիս եկեղեցական վիճակի մէջ գնել կ'ուշ գէր, բայց բարբարին ուրիշ վիճակի էր սէրս և ամենէն աւելի ճանապարհորդութեան. թէպէտն չէի համարձակեր գէմ գնել հօրեղօրս կամացը, ուստի 18 տարեկան եղած ատենս՝ ստիպուեցայ Գիւլյէնկի համալսարանն մտնալ: Խըրեւ ուսանող հոն ունեցած ազատութիւնս ինծի շատ ախորժելի եկաւ և զիս այն խիստ տեսչութենէ ազատ տեսնելով՝ ուզեցի ըստ իմ հաճոյիցս կեանք մը անցնելու: Առջի բերան եռանշեամբ կը սորուէի, և որովհետեւ զիւրութեամբ միաք կ'առնէի գասերս, ասով ինծի բաւական ժամանակ ազատ կը մնար, որով առանձներս ուրիշ առանձնագոյն չետ աղոյու-

կան զբօսանքներով կ'անցնէի. կամաց կամաց միտքս այնպէս զբաղեցաւ այն բաներուն՝ որ ալ բնաւ չէի աշխատեր, զրեթէ բոլոր օրս սրճանոցներու մէջ և գաշտերը քալելով կ'անցնէի: Արդէն սունը իմ անունս Սրբիայ Ֆրանց զբած էին: Համաստարանն մէջ ես կատարեալ արժանի եղայ այս անուան: Կրնաք երեակայել թէ ինչպէս հօրեղբայրո նեղացաւ երբար այս արխուր լուրը առաւ: Ինձի սրտաշարժ նումակներ զրեց որոնք մեծ ազգեցութիւն կ'ընէին իմ վրաս, բայց նոյն վայրկեանը միայն. և երբոր նորէն իմ ընկերներս կը տեսնէի, իրենց խեղկատակութիւնները բուրավին կը ջնջէին սրտէս այն բարի խրառաները, և կ'ամչնայի ըրածներուս վրայ զրդչալ ցուցընել անոնց գիմաց. որով և մէկէն կը սկսէի նոր նոր յանցանքներու մէջ իշնալ: Իմ վրաս կը ճշմարտէր Գաղղիացի մատենազրի մը այն առածը որ կ'ըսէ «աշրեաց վրայ ամչնալը ձամբայ մըն է մեծամեծ թշուառութեանց»: Հօրեղբայրո ահանելով որ ոչ իր խրառաները, և ոչ իմ առւած խոստմունքներս կը կատարէի՝ ալ գաղքեցուց ինձի ստակ խրկելը զիս խնայութեան և կանոնաւոր ընթայքի մը վարժեցնելու համար: Բայց այս հնարք ալ իմ վրաս երկայն աստեն ազգեցութիւն չբաւ, որով այլ և այլ պարագեր ըրի: Երբոր ալ մէկն չուղեց ինձի փոխ ստակ տալ՝ ես ալ ծախեցի գրքերս, և անոնց նման ստակ ընող բաներս.

մէկէն կառք մը մտայ Ամսողերտամ երթաւրու ուսկից կ'առդէի նաւ մտնալ. Այս ձամբարդութիւնը շատ ախորժելի երեցաւ ինձի, նաև կառքին մէջ ինձի յարմար ընկերութիւն մը գտայ, որով ժամանակս շատ ուրախութեամբ անցուցի, և շատ անդամ անմտութեամբ կը փափաքէի որ այն վիճակս կարենայի միշտ շարունակել:

Ե

Եաւը

Գիւղէնկէն մեկնելէս սոսաջ՝ գրեցի հօրեղբար միաքանչելով իրեն և ինչուան յանդկնեցայ իրմէ ստակ ուղելու, ձամբարդութեան համար: Այս բանիս վրայ ստատիկ բարկացաւ. ինձի և Ամսողերտամ հասնելիս ետքը խիստ նամակ մը ընդունեցայ իրմէ՝ որուն մէջ կը զրէր համառօտ և խիստ ոճակ մը որ ինձի 50 տուգադ կը խաւուէ այն պայմանաւ որ իրեն քայլ գտմի, բուհով որ եթէ մտիկ չընեմ իրեն խօսքին՝ և իմ անխելք մտածութեանցս ետևէն երթամ, սպահով զիանամ որ իր անէծքը ամեն ժամանակ իմ վրաս պիտի ըլլայ: Այս նամակը միրսս շատ կակիցաւց և երկայն աստեն մտածեցի թէ ինչ ընեմ, արդեօք սուն գտնամ հօրեղբար քով, թէ երթամ ձամբարդութիւն ընեմ, որուն կարգէ զուրս սէր և փափաք անէի. միւս կողմանէ ալ իրեն ինձի ըրտծ

սպառնալիքը բանի տեղ չդնելով չկրցայ աշ-
ղէկ որոշում ընել : Բայց շատ չանցաւ և
ահա հօրեղօրս սպառնալիքը լիտլին կատա-
րսեցաւ վրաս, զի ծովու ճամբորդութիւն
ընելու փափաքալ լցուած միաքս զրի նու մը
գտնալ որ Հնդկաստանի և կամ Հինդսային
Ամերիկայ կողմերը երթայ, ուստի այս փա-
փաքալ ունեցած ստակ հետո առած շիտակ
նաւահանգիստը գնացի, և հնա քանի մը հար-
կաւոր տեղեկութիւններ առնելէս եաքը՝ մոյա
պղտիկ նաւակի մը մէջ, ու դէպ ի Սիւրի-
նամ երթալու պարաստուած երեքիայմետն
նաւու մը մօտեցայ որ անալ ճամբայ ելլամ:
Խօսեցայ նաւապետին հետ, բայց չկարենա-
լով յարմանել ստիփուեցայ նորէն ետ գառ-
նալու: Ի գարձնին երրոր իջած պանդոկին՝
քարէ սանդուխին վեր կ'ելլայի, տեսայ զրան
առջև հագուեած պարոն մը, որ կարծես թէ
ինձի կ'սպասէք, զիս շատ աղնաւութեամբ
բարեկէն եաքը, ինձի մօտենալով գերմա-
ներէն սկսաւ հետի ըսկով: «Կարծեմ
որ հրամանքդ օստարական են՝ պարոն, ինչ-
պէս նաև ես ալ, բայց ուրախ եմ որ վեր-
ջապէս հայրենակից մը գտայ որ իմ լեզուն
կը հսակնայ»: Այս սիրելի խօսքերը ինձի
շատ հաճոյ անցան, ես ալ յայտնեցի իրեն՝
իրարու հանգիստելուս վրայ զգացած ուրա-
խութիւնու: Երրոր ըստ թէ Ամերիկա երթա-
լու փափաք ունիմ, և թէ կ'ուզեմ նու մը
գտնալ՝ շատ որպահացաւ, և բառու որ նա-
խընթաց օրը իրեն համար տեղ մը վարձեր

էր, Կիւեօրք քաղաքը երթալու նաւու մը
մէջ, և թէ զեռ ուրիշ ճամբորդի համար
ու տեղ ունէր:

Բայց զիտես ի՞նչ, ըստ ինձի, բանը յա-
ջողյնելու համար շուտ մը նաւապետին եր-
թանք, որ շատ հեռու չէ ասկից, և քիչ
մըն ալ առաջ երթալով կը տեսնանք իր
նաւը, որ անմիջապէս ծովեղերաց մօք է»:
Ես ալ ասոր կը սպասէի և քիչ մը ժամա-
նակ գէսպի ծովեղերը յառաջանալէն եաքը,
ինձի ցուցուց երեքիայմեան նաւ մը բոլո-
րովին սև ներկուած՝ Ոէզինլի անուստիք:
Անկից ուզգակի նաւապետին սունը գացինք,
որ նաւէն բաւականապէս հետո էր զիր-
ջապէս հասանք տուն մը որուն իմ քովի պաշ-
տոնա շատ ծանօթ կերեար. մեկէն զիս ա-
ռանձին խուց մը տարաւ, և ըստ որ քիչ
մը համբերեմ մինչև որ երթայ նաւապետը
կանչելու: Այս ըստ և զուրը կրպելով զուրս
եւսա խցէն: Այս բանս մեծ վախ մը և կաս-
կած ձգեց սրտիս մէջ, ջանացի զուրը բա-
նալու, բայց 'ի զուր, վասն զի ամուր փա-
կեր էր, պատուհաններն ալ երկաթէ վան-
դակներով ցոցած էին, ուսկից զուրու ելլեւ
անկարելի էր: Ան ատեն իմացայ որ մար-
զու մսավաճառի մը ձեռք ընկեր եմ, կա-
տաղութենէս ոսքերս գետին կը զարնէի,
կը պոռայի և կը կանչվառէի՝ բայց փառ-
տեղը, խցին ապակեայ փեղկերը զամուած
էին և մութ բակի մը վրայ կը նայէին,
ուսկից մարդ չէր տեսնուեր, ապա թէ ոչ

չարդուբուրդ կ'ընէի զանոնք՝ մարդ մը կանշելու համար։ Վերջապէս այսպիսի ասպնաւպով երկու ժամ՝ անցնելէն ետքը, տեսայոր երկու հոգի խուցս մտան ձեռքերնին մէյմէկ ատրճանակ, և ստիպեցին զիս զգեստներս իրենց տալու, և նաւազարի զիս զգեստ մը հազնելու, զոր առաջուց ինծի համար պատրաստած էին։ Խմ ըրած ողբերուս և առաջարկութեանց բնաւ մտիկ չըրին և զիսացս քիչ մը բան բերին որ ուտեմք զիշեր տաեն զիս նաւ մը տանելով խցի մը մէջ ուրիշ մարդկանց հետ փակեցին որոնց տիսուր գէմքերնին կ'երեար որ ինծի պէս զժբաղդ վիճակի մը մէջ էին։ Մտածեցի որ զէմ զնելը պարապ բան է և միայն իմ վիճակս ծանրացնելու պատճառ պիտի ըլլայի, ուստի բոլորովին լուեցի։ Խստիւ կը հսկէին մեր վրայ՝ ինչուան որ նաւը ծովուն խորը առաջ գնաց, և անկից ետև ստիպեցին զմեզ նաւասաւոյ պաշտօն կասարելու որ շատ անս սովոր էր ոմանց համար, որոնք ինծի պէս՝ ի մանկութենէ ծովութեան փարժած էին, և ուսումը իրենց շատ դժուարին կ'երեար։ Ասանկով հօրեղօրս անէծքը սկսաւ կատարուիլ վրաս։

Զ

Թշուառութիւնը

«Եթէ ըսէի, թէ մարդս զիրք մըն է լեցուն սխալ տպագրութեամբ, կարծեմ շատ սույգ գատասատն մը ըրած կ'ըլլայի»։ Արդզէն նաւը մըսած տաենս շատ այլայլած էի, բայց ևս առաւել երբոր նաւասակաց մէջ այնպիսի զարհուրելի բաներ տեսայ և լացի, որ կը դարսայի և զիսուս մազերը տընկուեցան։ Շատ կ'ուղէի ուրիշ բանի զրազել որպէս զիս այս ամբարիշած մարդկանց հետ միշտ միտաեղ չգանաւիմ որոնց մէջ ևս պըզատիկ սուրբ մըն էի, բայց ափան որ անհոգ եղած էի պին գեղեցիկ պատեհ ժամանակը ինծի օգաակար ընկւու երբ հօրեղօրս սունը եղած տաենս առիթ ունէի հըմտանալու մասնաւորապէս թուաբանական ուսմանց, որով չկրցայ նաւապետին ինծի յանձնել ուզած գործը ընդունել։ Մեր նաւը ձավակ կրզւոյն Պագապիս քաղաքը ուղղուած էր երթալու՝ որով բոլորմին յոյսս կտրեցի ազատելու իմ տառապեցուցիչ աշխատութենէս և ուրիշ վայելուչ գործ մը զտնելու։ Բայց իմ վիճակս շատ աւելի գառնացաւ ինծի, երբոր իմացայ որ Պագապիս հաննելուս պէս, Հոլանտացի զնդի մէջ պիտի զըրուեմ, որոհետեւ ամէն բանէն աւելի զիսուորական վիճակը կ'ատէի։ վասն զիս ես

աղասութիւն և անկրախութիւն կը սիրէի: Բայց տես ինչ պատահէցաւ, երբար ճամբան մոլորելով Առւրի Հեղինէ կղզւոյն դիմացները հասանեք, յանկարծ հարաւային ուժով քանի մը սկսաւ զմեզ քովնափ մղել, և մինչ զեռ կը ջանայինք նաւերնիս գէպ ՚ի արեւ մըսեան կողմը շըտկել, յանկարծ բուռն փոթորիկ մը եղաւ որով ստիպուեցանք ամեն չանք թափելու մեր փրկութեանը համար: Երկինքը նե ամպիրով պատած էր՝ մինք ալ բոլոր օրը թանձը աղջամղջի մը մէջ ծած կուած էնք որ միայն փայլակներու լոյսը երբեմն կը անմայինք և որոտան սոսկալի հարուածները մեծ փախ կը պատճառէին մեղի: Կաւը լեռնածե ալիքներէն մըզուելով ասդիս անդին կը ծփէր, բոլոր նաւաստիք շուարած էին, ամենքնիս ջուր գարձած սաստիկ ալեկոծութենէն՝ անդադար կ'աշխատէնքնին ամփափելու առաջասաները զորնք հովը մեր ձեռքէն կը խլէր, և երբեմն ջուր հանելու, որ նաւուն յատակը մեծ ծակէ մը կրկեցուէր: «Քառասուն տարուան մէջ շատ փոթորիկներու հանգիստը էի բայց սոսր պէս ոչ: Կաւը տկար ըլլալով, երկայն տաեն չկրցաւ դէմ դնել փոթորկին սասակութեանը և մտքերնէս չանցած ժամանակը, նոր տեսարան մը բացուեցաւ դիմացնիս որով ամեն մարդ կրցածին չափ իր կեանքը աղատելու կը ջանար, վասն զի նաւը ջրով լեցուելով ընկղմեցաւ բարորովին: Ան միջոցին ես ալ կոստած կայմի մը վրայ նետուե-

լով, ինքզինքս ալեաց սուեփ, եւրիշ նաւաստովներ ալ աղատելու կը ջանային կոստրած բաներու ապաւինելով, բայց քիչ տաենէն, ալ մարդ մը չտեսայ: զիս միայն կը կարծէի բոլոր տիեզերաց մէջ: Փոթորիկը բոլոր զիշերը տեսեց, և ալ ոյժ չունէի զիս վեր բանկու՝ թրջած և սահուն գերանին վրայ: Ահաւասիկ հօրեղորս անէծքը, կ'ըսէի միշտ ես ինծի: Կուզէի աղօթել և այն տառկը միաբա կ'ուզար որ կ'ըսէ «Ծովու վրայ խրկեցէք այն մարդը որ աղօթելու եռանդ շղգար» Բայց հօրեղորս անէծքին յիշատակը ոյժու կը տկարացնէր՝ և գիտակցութիւնս միշտ կ'ըսէր ինծի. Ինչու համար անտառակ որդույն պէս չդարձար հօրեղորդ տունը, մինչդեռ նա յօժարութեամբ կը փափաքէր զիշեր ընդունելու: Այս երկայն զիշերոյն վերջը հասաւ, և երբոր լուսնցաւ տեսայ մօտերը ժայս մը որուն հասնելու բոլոր ուժու թափեցի. բայց վերջապէս հասայ, զոր ուժով մը բանելով տեսայ հեռուէն նաւ մը որ կրնար զիս փրկել, բայց ինչպէս կրնայի զիս ժայսին ամուր բանել և միանգամայն նաւուն նշան մը տալ իմ փափաքանացս հանելու: Խակ ժայսին գազաթը մեծ զըժուարութիւն կար կը լու, և ուրիշ կերպով չկրցայ հոն հասնելու մինչեւ որ արեամբս այն սուր քարերը ներկեցի, և որպէս զի ինքզինքս հեռուն եղաղ նաւաստեաց յայտնելու նշան մը տամ, շապիկս հանեցի և սկսայ շարժել զայն դրօշակի մը պէս: բայց

ի զուր, վասն զի նաւը շատ հեռու էր: Իմ զիրքս երկիւզափ էր՝ բոլոր ժայռը 40 կամ 50 սուբ տարածութիւն ունէր ուր քիչ մը մամոէ և խոտէ զատ ուրիշ բան չկար, կարծես թէ ծովէն ազատեր էի՝ հոս անօթութեանէ մեռնելու համար՝ որ գեռ աւելի սակալի էր: Կաւը կարծես թէ երթալով հեռանալու վրայ էր, բայց Աստուած հով մը հանեց յանկարձ որ նաւը ինձի մօտիկ մղեց, ան ատեն սկսայ նորէն շարժել իմ շապիկու, և ինչ ուրախութիւն էր զգացած երբ իմացայ որ նաւէն տեսան զիս: Անկէն նաւակ մը եկաւ զիս առնելու և կէս ժամէն զիս, Լուչիա ըստուծ նաւուն եզերքը գտայ, որ Անդզիացի վաճառականի մըն էր, որ Արևելեակ Հնդկաստանէն Անդզիա կը դառնար: Նաւասահքը զիս շատ մարդասիրութեամբ հոգացին մէկէն չըր զգեստներ տալով զիս կերակրեցին և խմցուցին և ես ալ պասմեցի իրենց իմ դժբաղդութիւնս որուն մտիկ կ'ընէին: Այսու տմինայնիւ հոս պէտք եղաւ որ ես նաւաստույ պաշտօն կատարեմ իմ ապրաւստ գտնալու համար, և այնչափ յօդնեցայ ծովուն վրայի աշխատութենէն որ հաստատուն առաջադրութեամբ միաքս զրի՝ մէյմն ալ ստքս նաւու մէջ չզնեմ հայրենիքու հասնելէն ետքը: Բայց ինչ մարդուս որոշմունքը ուրիշ բան չէ, բայց եթէ ունայնութիւն ունայնութիւն ունայնութեանց:

Է

Գմբաղդ լուրը

«Յաջող նաւարկութենէ մը ետքը, Բորգը մը լող հասանէք: Նաւապեսը ինձի քանի մը շինկ տալէն ետքը, արձակեց զիս, բայց բոլորովին օտարական ըլլալովս քաղաքին մէջ ունեցած պղոփ գումարս քիչ ատենէն լմեցաւ, որով և ուրիշ հնարք չմնաց ինձի՝ բայց եթէ Հոգանատ զացող նաւու մը մէջ մտնալու իրեւ նաւաստի և անով շիտակ հայրենիքս դառնարու: Վերջապէս ութ օրէն ետքը հասանէք Ոտղէրտամ, և այն օրը կիրակի ըլլալով մէկէն գացի եկեղեցին և Աստուածոյ շնորհակալ եղայ զիս փրկելուն համար: Անսարակայս հիմա պիտի կարծէք թէ իմ գժբախտութիւնս զիս բոլորովին փոխած ըլլայ, և թէ ես ալ երկիւզած մարդ մը ըլլամ: Իրաւ ծանրութիւն մը ստացած էի և աւելի գյաստացած, բայց մտածութիւնս գեռ նոյն էր: Ես զիս ուզզած կը կարծէի, բայց թէ որ քարոզին ըսածներուն մտիկ ըրած ըլլայի, պէտք էր որ աւելի խստիւ քննած ըլլայի զիս, և ապահովապէս աւելի հիմնալին զիս կը ճանչնայի: Վասն զի քարոզիչը ուրիշ բաներէ զատ այս ալ ըստ թէ «Աստուած չքններ միայն ինչ որ մարդու կը զործէ, այլ թէ որով եղանակաւ կը զործէ, աւելի ներքինը կը քննէ քան թէ ար-

տաքինը, ներքինը հոգին է խակ արտաքինը գործը: Աստուած կը յարգէ հասկը և ոչ ցօղունը, զանձը կը նայի և ոչ արկը, սուրը և ոչ պատեանը: Ի՞նչ օգուտ երբոր պատեանը ոսկիէ ըլլայ և սուրը ժանդառած, ինչ բանի կը ծառայէ եթէ մնառեկը հասատառն ըլլայ, երբոր մէջը կեղծ սասակէ զատ բան ըլլայ, նոյնպէս ինչ օգուտ թէ որ ցօղունը ըլլայ բարձր և ուղիղ, երբ հասկը դասարկէ, ինչ յարգ կ'ունենայ եթէ կեղեկ մափուր ըլլայ և միջուկը որդերով լեցուն»:

Նոյն օրը գրեցի մէկէն հօրեղորս և իւմացոցի իրեն իմ վիճակս, զինքը ապահովցներով, որ ըրածներուս վրայ զղջացեր եմ, և դարձի եկած եմ, ուստի քիչ մը սասակ ինպրեցի իրմէն որպէս զի կարենամ քավը գառնալու: Պատասխանին սպասելու միջոցս քանի մը քավս մնացած գահեկանաներով ապրեցայ զրանք ուրբաթ իրիկունը լմնցուցի և ալ քավս ստակ չմնաց. ի վերայ այս ամենայնի դեռ չորս օր պէտք էր թղթիս պատասխանը և միանգամայն ստակը ընդունելու: Ի՞նչպէս ապրէի, ո՞ւր քուն ըլլայի ան միջոցին, ես ալ չէի գիտեր բայց ճար չխար, պէտք էր պատասխանին սպասելու, մուրալու ալ կ'ամչնայի, թէպէտ ամեն մուրացկաներէն աւելի ապբատ էի: Ասլորաբար ուր որ մարդս օդնականութեան մը ակնիալութիւն չունենայ, դժուարին կ'ըլլայ որ Աստուծոյ վրայ հաւատք ունենայ:

Ինքինքս անօթի կենալու կը վարժեցնէի, շարաթ օրը ամեննեին բան մը չկերայ և այնպիսի կէտի մը հասայ որ նեղութիւն կը զգայի, և ինքիրեն կ'ըսէի. Աչա հօրեղորս անէծքը, որովհետեւ շատ անգամ անկարգացեր եմ, հիմա ալ պէտք է անոնց պատիմ քաշեմ. գիշերները նաւարանի մը մէջ ողնափայտի մը վրայ կը քնանայի: Ուղեցի նորէն երթալ պատարագ մը աւենալ և քարոզ մը լսել, թերեւս հոն կը քաջալերուիմ լսելով, ինչպէս որ եղաւ ալ: Գացի եկեղեցին, քարտզին բնարանը այն էր որ Աստուած կը ինամէ ամեն իր արարածները և իրեւ հայր մը կը սիրէ զմարդիկ: Կարծեան թէ այս քարոզը ինծի համար միայն շինուած էր, և ես ինամերով պահեցի մինչեւ հիմա այն թղթի կոտորը որուն վրայ գրեցի քարոզին մէկ մասք՝ որուն բովանդակութիւնը այս էր:

« Աստթէսս Աւետարանին վեցերորդ գրւխուն 26 երրորդ համարին մէջ: Նայեցէք օգուն մէջի թռչունները անկէց կրնաք ձեզի աղէկ օրինակ մը առնուլ: Թռչնիկի մը կեանքն աւելի ինչ նուազ յարգի բան կրնայ ըլլալ ինչպէս նաև ձընձզուկի մը կամ ազաւնւոյ մը, ով կը ինամէ զանոնք, թէպէտ գեղեցիկ արարածներ են ասոնք սրոնք կը թռչին օգուն մէջ, և գեղեցիկ կերպով կ'երգեն իրենց քաղցր երզը, փետուրը գեղեցիկ և չնորհայի կենդանութիւն մը ունին, բնակութիւննին ծառերու ծայրն է, ընթացքնին

օգու մեջէն է որոնք աւելի երկնային կը համարուին քան երկրաւոր։ Տեսէք իրենք ոչ կը մերմանեն և ոչ ալ կը հնձեն, ոչ կը ժողովեն, և ոչ կը մշտկեն, և իրենց շանկած բաները կը տեսնան որ կը բունի, և անշ կէ իրենց հարկաւոր եղածը կ'առնուն, առանց նայելու թէ ուսկից կու գայ իրենց։ Բնաւ իրենց ասպառատին վրայ չեն հոգար, և տանց մտածութեան կը գտնան իրենց կերակրութ։ Նայեցէք աշխարհիս ցած կենադանիներուն վրայ ալ, մրջունները, խլուրդները և բոլոր հողին տակի բնակիչքը, Ե՞նչ պէս կ'ամբարեն և Աստուած զանոնք ալ կը մնուցանէ հաւասարապէս։ բայց տանցմէ աւելի երկնից թռչնոց վրայ Աստուած խը նամք ունի։

« Իրենց կենացը էութիւնը, իրենց երգը և զնծութիւնն է որով Աստուածոյ մեծայիւթ չութիւնը կը քարոզեն, իրենց գեղգեղանքը զալութեան, և առ Աստուած շնորհակալութեան երգեր են։ Արդ մէ կը մնուցանէ այս զուարթուն և մնչող արարածը, եթէ ոչ ձեր երկնաւոր հայրը։ Բայց միթէ ազուաւներուն ալ հայրն է, ճնճուկներուն ալ հայրն է։ Ոչ, այլ անոնց արարին է, և անոնց վրայ ալ հոգ ունի, որեմն որշափի ևս տուաւել ձեր վրայ խնամք ունի որ ձեր հայրն է։ Գորովագութ հայր է, և կը սիրէ զամենքը որոնք կը լսեն հաւասարով իրեն սորվեցուած վարդապետութեանցը։ Հայրն է Յիսուսի Քրիստոսի աեան մերոյ, և ինքն

է որ Քրիստոսի ձեռքավ տուաւ ձեզի ամեն հոգեսր բարիքները, զորոնք մեր վրայ իջեցուց հոգին սուրբ։ Կայեցէք երկնից թռչունները, որոնք կ'երգեն և կը զրօննուն, և ահա այն է բավանդակ իրենց էութիւնը, բայց դուք միթէ անոնցմէ աւելի չէք մի։ Որդիք Աստուածոյ ժամանգարգը երկնից, որ բոլորովին երկնից համար էք և պանդուխտուածութեանցութեան պատուակաւոր երկրիս վրայ, սեղանակից Աստուածոյ և քաղաքակիցը պրաց, ամենք ալ որ այս աշխարհին վրայ մեր հաւասարովը Յիսուսի Քրիստոսի հետ միացած ենք պիտի տեսնանք զԱստուած դէմ յանդիման իր ամեն փաստաւորութեամբը, միթէ անոնցմէ աւելի չենք մի արքեր»։

Աս միջոցին Օգոստինոսը ընդմիջեց նաւապետին խօսքը, ըսելով. Ուրեմն ինչպէս կ'ըլլայ որ ճպտութ կը յանդիմանեն ձեռուան համար բան չպատրաստելուն վրայ և այս բանն չատ կը պատուհի թռչնոց մէջ. չեմ ընդունիր այս վճիռը։

Ժողովրդապետը պատասխանեց իրեն։ Կենդանիք իրենց բնական աղքեցութեամբը կը զործեն զոր Աստուած իրենց բնութեանը մէջ զրած է որով մարզիկ պէտք չէ ոչ զովին և ոչ ալ պարաւեն զանոնք։ Բայց այլ և այլ օրինակաւ անոնք մեզի կը ցուցընեն թէ ինչ է մարդու, և այս նկատմամբ կրնանք օգտակար բարոյական մը հետեցնել անոնցմէ իւրաքանչիւրը պատկերելով ամեն

մարդ իր անձին վրայ. ինչպէս ծոյլը պէտք է մրջունէն աշխատելու և հացը ճարելու օրինակ առնու. ագահը և անհաւատը պէտք է յաղթահարուի թռչող օրինակէն, որ մէջ կը կրնայ առանց նախապատրաստութեան՝ վշտերէ աղաս ըլլալ, քանի որ կը թագուորէ երկինքը Աստուած մը. զարձեալ թէ պէտք չէ շատ հոգալ և անհանդիստ ըլլալ յաջորդ օրուան համար, և ոչ ալ շատ նախատես ըլլալ: Բայց խնդրեմ, սիրելի բարեկամ, թէ որ կարելի է շարունակես պատմութիւնդ: Կաւապեաը շարունակելով ըստ դարձեալ:

« Այս քարտը զիս քաջալերեց՝ ըսի ես ինքիրեն՝ զու թէպէտ օտարական մըն ևս այս գեղիս մէջ, բայց նա որ յերկինս է զգեղ կը հանչնայ և զգեղ կը տեսնայ, իրեն զիւրին պիտի ըլլայ քեզի հաց զանալ: Վաճառանոցին մէջէն անցնելու տաենս երրոր Երազմի յիշտասկարանին քովին կ'անցնէի մարդ մը լսաիներէն արձանազիր մը կարգալու զբաղուծ էր: Ասոր զէմքը ինծի անձանօթ չէր երեար, բայց չէի կըրնար իր անունը յիշել, գէպի ինծի գոտուալուն պէս զիս տեսաւ, և ես աղաղակեցի. Գորպէզ, զու ես, Այս, ես եմ, պատասխանեց ինծի, բայց չեմ յիշեր երբեք որ զգեղ տեսած ըլլամ. ան ատեն իմացայ, որ իմ նաւասաւոյ հագուստու ու վասուժած և արել այրած երեսս զիս անձանաչելի ըրած էին: Անունս ըսելուս պէս ձանցաւ իր հաւ-

մալսարանի հին ընկերը: Կերպարանքէս իւ մացաւ տիրութեան մէջ ըլլալս, ուստի զիս տարաւ պանդոկ մը և ըստ ախորժակիս ինծի կերակուր հրամցուց զորոնք մէծ տարժակ կերայ, և զինւոյ շիշ մը պարպելով պատմեցի իմ զիսէս անցածները:

« Գթաց իմ վրաս և ըստու. Կը ցաւիմ որ չեմ կրնար քեզի աւելի օգտակար ըլլալ, ինչ ընեմ՝ պէտք է որ խնայողութեամբ զործածեմ սուսկս, վասն զի վազը Հոլանտացւոյ նաւ մը պիտի մտնամ իրբե բժիշկ, և զեռ հոս վճարելու բաներ ունիմ: Աս ըսելով ինծի երկու ոսկի տուաւ որոնք ընդունեցայ մեծաւ շնորհակալութեամբ և սիրով, կրնայի զեռ քանի մը օր անկողին մը գանալ և քանի մը տեսակ կերակուր ուտել: Այսպէս ահա Աստուած կը խնամէ երկնից թռչունները, հոգաց նաև զիս ալ, և զինքը զեռ աղէկ մը չի ճանչցած, ինքը ինծի հարկաւոր եղածը տուաւ, ինչու ևս երախտապէտ չէի եղած և այն վայրկեանները որ իրեն կարօտ չէի ըլլար՝ կը չեսանայի իրմէ: Վերջապէս չորեկարթի իրիկունը նամակ մը ընդունեցայ, բայց ոչ իմ ժաղավագապէտ հօրեղբօրմէս, այլ իր ուստիկան եղորմէն որ կ'իմացնէր ինծի թէ զեղի հօրեղբայրս մեռած էր իմ նամակիս հաննելէն երկու օր առաջ, և թէ իր ժառանգութիւնը ճիշդ պիտի բաւեր իմ Դիւ պէնկի մէջ ըրած պարտփերս վճարելու: Կամակիս մէջ հինգ ոսկի գտայ զոր ոստիկան

Հօրեղայրս զրած էր. և չէի զիտեր թէ
ինչ ընեմ, առնէն գոռնամ, թէ առաջ առնիմ
իմ ճամբորդութիւնս։ Այ դուք մտածեցէք
թէ ինչ կրնայի զգալ երբ կարդացի այս
նամակը։ Այս իմ հօրեղօրս անէծքն է կ'ը-
սէի, ինքիրենս աթսափ մը վրայ իշնալով
ինքինքս կորոնցուցած, և շատ արցունք
թափելով մխիթարուեցայ քիչ մը։ Լայի բո-
լոր գիշերը և երրոր առաւօտ եղաւ ինքի-
րենս ինձի հանդարտեցուցիչ հարցմունքներ
կ'ընէի, որոնք առանց պատասխանի մեա-
ցին։ Ինչ ընեմ վերջապէս, որ կողմը եր-
թար ։ Ինչ որ ուզեմ ընել և ինչ բանի որ
ձեռք զարնեմ հօրեղօրս անէծքը ամեն ա-
տեն զիմացս պիտի ելլէ։

« Ինքը ինձի առաջուց ըստած էր, զիս չէր
խարած, բայց հիմս մեռաւ, և ետ չառաւ
իր անէծքը. եթէ զինքը հիմա կենդանի
գտնայի կ'իյնայի կը չփէի իր առջեր ին-
չուան որ վերջներ իր անէծքը վրայէս օրհ-
նութեան փոխելով զայն. բայց առաջ որ
շատ ուշ էր, իր անէծքը իմ վրաս ամեն
ժամանակ պիտի աղդէ։ Այսպէս խօսելով,
զացի գնառելու այն նաւը որ զիս բերած
էր, և զեռ երկաթ նեսած կ'սպասէր հոն՝
ուր նորէն ծառայութեան մտնալով նաւաս-
տի եղայ։ Այս անգամ աւելի նաւալ աշխա-
տելի գործոյ վրայ գրուեցայ. և նաւապէտն
ալ վրաս մասնաւոր ինսամք ունենալով, ին-
ձի նաւապարութեան արուեստը սորուեցուց։
Մեր առաջին ճամբորդութիւնը լոնտրայէն

գէպ ի արևելեան Հնդկաստան եղաւ. այս
ճամբորդութեան ատեն երկրորդ նաւապէտ-
ալին աեղը անցայ, որ զինովութեամբ ծովը
ինկիր էր, և անկէ եսաքը երեք ճամբորդու-
թիւն ընելէս եակ առաջին նաւապէտ եղայ։
Ամեն աեղ ճարտար նաւապէտի անուն հա-
նեցի, և քանի մը տարրիէն եսաքը, Խվլրուկի
վաճառականի տունի մը ինձի յանձնուեցաւ
նաւ մը, որ Բերու պիտի երթար։ Ճամբոր-
դութիւնը շատ յաջորդութեամբ ըրի և աղէկ
շնչաւոր ալ եղաւ, և այսպէս տասը տարրիի
չափ նոյն տանը ծառայութիւն ըրի իրբե-
նաւապէտ՝ որով բաւական սասակ շահէլէս
ետքը՝ նաւ մը գնեցի ինձի, և անով սկսայ
վաճառականութիւն ընել իմ տունձին շա-
հուս համար։ Անկէց եսաքը ալ ժամանակ չու-
նէի հօրեղօրս վրայ մտածելու, և ամենեւին
եռունդ մը չունէի աղօթելու, թէպէտ հա-
մեսա և յաւ մարդու մը պէս կ'ապրիէի ա-
ռանց ամենեւին Աստուծոյ ոգնականութեանը
կարօտ ըլլալու։

Ը

Կենդանագիրը

«Երեսունը հինգ տարուան եղած ատենա կարգուեցայ Խիլլրուլ քարդաքը, և այն վայր կեանէն ետքը, բարերազդութիւնս գնաց վրայէս: Հարսնիքէս առաջ ժողովրդապետին առունը երթալով խոստվանութեանս վկայագիրը առնելու համար, պատին վրայ հայլիի մը տակ կախուած մեռած չօրեղօրս կենազագիրը տեսայ, և այնպէս ասուակի դուզալ սկսայ որ հարկ եղաւ ստոլի մը կոթնիմ: Ժաղովրդապետը տեսնելով զիս այլայլած հարցուց թէ ակարութիւն մը ունիմ: Զէ ըսի իրեն, և աչքերս աւելի ևս մտազութեամբ սկսայ պատկերին վրայ ձգել: Կարծես թէ գեռ կենդանի էր և աչքերը վրաս սկսուած բարձրածայն կը գոչէր: «Անէծքս քու ետեւէդ պիտի երթայ: Ոչ ոչ, պատախանէցի վերջապէս բարձրածայն այլ չի կարենալով լունել զիս ներքին յուզմունքէս: Ժաղովրդապետը յանկարծակիի գալով իմ այս ձայնէս, հարցուց ինծի պատճառը, ևս ալ իրեն ըսի թէ այն ունեցած պատկերը իմ հօրեղօրս կենդանագիրն է որ իմ վրաս յանկարծակի մեծ ազգեցութիւն մը ըրաւ:

«Ժաղովրդապետը պատին վար առնելով պատկերը ցըցուց ինծի անոր վարի ծայրը դրուած անունը, որ անիկայ հօրեղօրս

դէմքը չէր, այլ շատոնց ի վեր մեռած անդ զիացի ժողովրդապետի մըն էր, և թէ այս նմանութիւնը զիացածական բան մը եղած է: Այս դէմքին վրայ հարկ եղաւ որ իմ պատմութիւնս պատմեմ իրեն՝ որն որ շատ ջանաց քաջալերելու զիս ըսելով որ հօրեղօրը մը անէծքը չէր կրնար տեել այն մարդուն վրայ որ իր սխալանացը վրայ զղացերէ է, և բարեպաշտութեան ճամբուն մէջ կը դոնուի: բայց իր իրախուսական խօսքերը բնաւ ազգեցութիւն մը ըըրին վրաս, և ես վերատին իմ յուզմանցս մէջն էի: Նորէն ծովով ճամբորդութիւն մը ըրի, բայց բազդու չի բանեցաւ. վասն զի մըրիկներու պատաշելով վաճառքներու վաստակովը գառնալու տեղ՝ քանի մը հազար զալէր կորուստ ունեցայ. հօրեղօրս անէծքն է այս, կըսէր ինծի խղճմանիքս: Երբոր առն գտրձայ, կինս ընդ առաջ ելաւ ինծի անդրանիկ աղջիկ զաւկին հետ՝ որ գիրկը բանած էր, զոր աւենալով անձկանօք առի ձեռքէն, և աշքերս գէպ ի երկինք գարձուցած, ինդրեցի Աստուծմէ ըսելով. Գոնէ այս անմեղ տղան, ով Տէր, վրաս եղած անէծքն ազատ ըրէ: «Անէ ետքը գեռ երկու տղայ ալ ունեցայ, մէկը մանչ և միւսը աղջիկ: Երբոր աւենէն պզափի աղջիկս վեց ամսական էր, երիկուն մը կինս երեք աղաքներովը աւանը զրան զիսմաց յատած ժամանակը, անկարող մարգուն մէկը որուն սուքին մէկը փայտէ էր, մօտենալով իրենց՝ ողորմութիւն խնդրեց:

Օննիկ մէկէն ինզրեց մօրմէն գրամ մը՝
աբքատին տալու համար. խակ կինս դարձաւ
ըստ աղքատին: « Անշոշտ անօթի պիտի
ըլլան՝ թէ որ կ'ուզես, քեզի ուտելու բան
մը տամ, խեղճ մարդը շնորհակալութեամբ
ընդունեցաւ, և հաղիւ թէ կերակուրը լինցու-
ցած էր, մէյթ ալ ես ներս մտայ որ բա-
րեկամիներէս մէկուն այցելութենէ կը գառ-
նայի, աղջունեցի այն աղքատը և աղաչեցի
որ նատի և ինծի պատմէ իր զմիկն ան-
ցածները: Ամսղերասմի մէջ ծնած եմ ըստ
ինծի, որով ես մէկէն ձանցայ զինքը թէ
այն գերեվաճան էր՝ որ զիս կապկաց և
զրաւ այն նաւուն մէջ որով նաւորեկու-
թեան հանդիպեցայ. իրեն բան մը չիմացուցի
և թողուցի որ պատմութիւնը տանի:
Պատմեց ինծի թէ ինչ տեսակ գժրախառու-
թիւններով ստիպուած էր Անզղիս ծառայու-
թեան մոնալու, և թէ նաւական պատերազ-
մի մը մէջ իր ձախ ոսքը կորսնցանելով
հիմա այն սղորմելի վիճակին մէջ կը գտա-
նուեր: Երբոր իր պատմութիւնը բինցուց, ես
լուս կեցած վրան կը նայէի, բայց սիրառ
այլ և այլ հակառակ զգացմունքներով յու-
զեցան իրեն գէմ: Վերջապէս հարցուցի
իրեն թէ զիս կը ճանչնայ մի, որուն պա-
տասխանեց թէ ամենեին չէր ճանչնար:
Այն տեսն ես ալ պատմեցի իմ զիմէս ան-
ցածները զոր երր լսեց, երեսին զոյնը նե-
տեց, և վախէն կարծես թէ արձան դար-
ձաւ:

« Մի վախնար, բաի ես իրեն, ահա Աս-
տուած պատմեց զքեզ, և ալ պիտի չի կա-
րենաս գերեվաճառութիւն ընել: Բայց չեմ
ուզեր որ մէջմին ալ աշքիս առջելը երևնաս:
ինչ կ'ըսէք, աղաքս, կը համիկ իմ ըրտ-
ծիս:

Կարորս: — Այն կողմանէ որ իրեն չա-
րեք մը չըրիր՝ աղէկ եղեր է:

Օգոստինս: — Այնպէս է, բայց Աստուած
չըսնաւ մի մեղի որ մեր թշնամիները պէտք
ենք սիրել, որով պէտք չէր զննքը այսպէս
անզմութեամբ վոնտել:

Նաւապետը: — Իրաւունք ունիս, ըստ
Հայրը, բայց նոյն խակ ճշմարիտ քրիստո-
նէաբար մտածելով, ևս իրեն բարեկ ըրի,
վասն զի ճեար այս կերպով վարուելով իրեն
թերես խրատ մը ըլլայ, և միանդամայն
թերես հնարք մը, արգսրութեան ճամբան
գտնալու, իրեն յանցանքը ճանչնալով: Բայց
այս միջոցին ես զիս ամենեին չէի մտածեր
և ոչ խակ ըրուծ մեղքերս, և ընդ հակառա-
կը կը կարծէի թէ աղէկ բան մը կ'ընեմ,
մոէժխնդիր ըլլալով այն ողորմեւոյն՝ ինծի
գէմ ըրած ցածութեանցը և անզթութեանցը
համար: Ես շտու տարիներ այս յամառեալ
կարծեացս մէջ հպարտացած կ'ապրէի ին-
չուան որ Աստուած ինծի այնպիսի գժբաղդ
և ցաւալի գէտքեր խաւընց որոնք սորվեցու-
ցին ինծի թէ ինչ է քրիստոնէական խո-
նարհութիւնը: Համառօտիւ մը կը պատմեմ
հոս, յաջորդ եօթը ութը տարուան պատ-

մութիւնս՝ որոնց մէջ բազդս ամենելին չի
բանեցաւ, և ամեն բանս ձախորդ գնաց:
Տղաքս օրէ օր կը մեծնային և կ'երջանկա-
նային՝ բայց ևս անհանգիստ կ'ըլլայի իրենց
ապագան մտածելով. վասն զի ինքիրենս
կ'ըսէի թէ ինչուոն որ իմ գործերս լաւա-
զայն զիրք մը չառնուն չեմ կրնար ապա-
հովցնել իրենց վիճակը: Բնաւ չէի կրնար
զուշակել այն գառն զժրախսութիւնը որ
զիսէս պիտի անցնէին: Երկու մեծ որդիքու՝
Թողմաս և Յովհաննէս, զնացին օր մը ծո-
վեղերքը տեսակ տեսակ ժժմունք ժողուելու:
Մինչդեռ ալիքներուն եղերքէն քաշուելու
ժամանակ տղաքը կը վաղէին անոնց հետքին
վրայէն ծովու ժժմունքներ բնտուելու, յան-
կարծակի գալով՝ մեծ ալիքէ մը բոնուեցան
Հոն, և շփոթած՝ ժամանակ չունեցան փախ-
չելու: Ան միջոցին ուժով քամի մըն ալ եւ-
լելով՝ պարապ տեղ փորձեցին խեղճ տղաքը
խարսելու, և վերջապէս ալիքները տարին
քշեցին զիրենք ծովուն խորը: Թողէք զիս
անցնելու շուտ այս աղխողորմ դէպքէն՝ վասն
զի այս գառն յիշատակը բոլոր իմ ցաւերս
կը նորոգէ: Երկու զիսկները քիչ տեսնէն
ծովուն ափանցը վրայ ձգուեցան՝ զորոնք
տեսնալով իրենց մայրը, այն աստիճանի
սրափ ցաւ ունեցաւ որ իր կեանքն ալ վր-
տանգի մէջ ընկաւ: Ես այս միջոցս, ճանա-
պարհորդութիւն կ'ընէի և այս թշուտ դէպ-
քը ան ատեն իմացայ երբ ճամբորդութենէս
դարձած ցամաք ելայ: Հօրեղօրս անէծքն

է այս, ըսի մտքէս: Հազիւ ինքինկաս տուն
կրցայ ձգել ուր արցունքներս աղբիւրի պէս
սկսան վաղել աչքերէս, խեղճ կնիկս վիզու
պլուելով ինքն ալ արցունք կը թափէր,
նոյնալիս նաև մէկ հատիկ մնացած տղաս:
Ո՞հ չեմ կրնար պատմել այս աղիտղորմ և
տասապագին վիճակս: Իմ խեղճութիւններս
որ երբեմ թէպէտ անհանգստութիւն կը
պատճառէին ինծի իմ որգւոցս ապագան
մտածելով, բայց ի վերայ այսր ամենայնի
անսնք՝ մի միայն միխթարութիւնս էին,
անսնալով անոնց յառաջադիմութիւնը յա-
մենայնի, որով սրտիս մէջ ամբարտաւանու-
թիւն մը կ'զգայի, և միանգամայն անոնց
հանգերձեալ կենաց երջանկութեանը յայս
մը ունէի, բայց հիմա կը տեսնամ որ գե-
ղեցիկ պալատին ակրոջ զէպքը բոլորովին
ձշգրտեցաւ անոնց վրայ:

Օգոստինոս. — Ի՞նչ զէպք է այս մար-
դուն զիմէն անցածը:

Նաւապիտը. — Հարուստ մարդուն մէկը
գեղեցիկ պալատ մը շնուկ տուեր էր և շատ
սիրուն ալ զարդարեր: Իր ունայնամուռ-
թեսմբը գոհ կ'ըլլար ցուցընելով միայն իրեն
պէս ունայնամիտաներուն այս շնչքին ներքին
կարգաւորութիւնը և գեղեցիկութիւնը:

Ճանապարհորդին մէկը այս տանը գեղեց-
կութեանը վրայ զմայլած, ըստ որ մեծ
պակասութիւն մը կը զանար անոր վրայ:
Տան տէրը վրայ հասնելով հարցուց թէ ի՞նչ
է արդեօք այս պակասութիւնը, որուն պա-

տասախանեց ճանապարհորդը թէ « Դուռը պատով գոցերու մոոցեր են, ուսկից մահը կրնայ ներս մտնալ : » Բայց ահա կը շարունակեմ իմ պատմութիւնս :

Այս աղիոզորմ գիտուածէն ետքը՝ փոխանակ ամենանկարող Աստուծոյն կամացը յանձնելու զիս, առգոչութիւն և տրատոնջ ցըցուցի իրեն զէմ, իմ Աստուծոյս զէմ իշրաւոնք կ'ուզէի, ևս թշուառ մեզաւորս և փոշիո՝ ուզեցի զինքը դատել : Ի՞նչ աստիշ ճանի էր իմ յիմորութիւնս և ինչ աստիշ ճանի իր երկայնամտութիւնը իմ վրաս : Քաշնի կ'երթայի աւելի կը մաղձոտէի և կը տարակուտէի Աստուծոյ արգարաւութեանը վըրայ : Կնիկս ինձմէ աւելի ճնազանդ ըլլալով, Աստուծոյ կամացը՝ զիս մխիթարել կուզէր, բայց ամեն բան ընդունայն էր և Աստուծոյ իմաստութիւնը ուզեց աւելի ևս զիս պատուշասէլ, իմ բարձրամտութիւնս բոլորավին ջախճախելու համար : Ասոր վրայ, քիչ ասենէն կինո հիւանդացաւ և մեռաւ, ու քանի մը շարութէն ետքը երրորդ որդիս ալ մեռաւ տարախոխիկ հիւանդութիւնէ մը, ուսկից շտամարդիկ ալ մեռան : Թիւրես կարծէք զուք որ այս ամեն ձախորդութիւնները վրաս փոփոխութիւն մը կամ աղօցութիւն մը ըլլած ըլլան, այլ չէ ամենեին . և որ գէշն է՝ օրէ օր աւելի անզգայ կ'ըլլայի, կուզէի Աստուծոյս զէմ դառնալ, և իմ այն զառանցանացս ժամանակի, մոռցայ որ ես պարտակաշնութիւն մը ունիմ ամենակարսղ կակի մը :

Ա՛ս ասոնք հօրեղբօրս անէծքն են, կ'ըսէի միշտ ես ինծի, բայց սիրար երթարով կը խստանար և Աստուծոյ ճամբէն օրէ օր կը չեռանայի, և կ'ըսէի ինքիրենս . Ուրեմն թէ որ ես անիմուած եմ գէթ այս ճակատագրիս արժանի ըլլամ: Ով կրնայ կարծէլ, որ մարդու փոքրիկ արարած մը, ու երկրիս վրայ որդ մը՝ կարենայ այնչափ ամբարտաւանիլ Աստուծոյ զէմ, թէ որ մէկը զայն անձամբ փորձած չըլլայ: Ինձմէ փարատելու և չեռացնելու համար այս նեղացուցիչ մտածութիւնները, որ զիս կը խսովէին իմ միայնութեանս մէջ, սկսայ իմ առջի ախտերուս ձեռք զարնել, որոնց գէշ հետևանքը իմաւագով, թողած էի, բոլոր օրերս թեթե ու անհամեստ մարզկանց ընկերութեամբը կ'անցէի, և ականջներս կը զոցէի այն մարդկանց խրամաններուն, որոնք իմ աղէկութիւնն կ'ուզէին: Իմ բարեկամներս որոնք իմ զըժրազգութեանս մասնակից եղան՝ զթացին վրաս և ամեն չանիք ըլլին՝ զիս ևս զարձնելու՝ բայց ևս զանոնք մերժեցի և կը ծաղրէի իրենց բարի խրամները, և զէմ ալ կը խօսէի իրենց թափանձանացը ըսելով . ի՞նչ բանի կը ծառայէ զիս ուզգելը, մինչդեռ ևս անիմեալ եմ:

Ուրիշ բան չէր, բայց եթէ յուսահասութիւնը՝ որ ինծի արագէս խօսել կու ասար: Այսպիսի կեանք մը չէր կրնար երկայն անել ևս առաւել որ վերջի ասրիները շատ պարտք ուղի: Տեսնելով որ անկարգ կեանք մը

կանցնեմ, և թէ իմ վիճակս երթալով կը գէջնար, պարտատէրներս կը զայրանային վրաս և կ'ուղէին որ վճարեմ պարտաքերու: Բայց իրենց շակէ շխառկ բախ որ չեմ կրնար վճարել իրենց, անալ զիս դասասաւանի կանչելով նաւս, տունս, և ինչ բան որ ուշնէի ամենն ալ ծախսեցին. բայց անոնք ալ բաւական չեղան իմ պարտաքերա վճարելու. մարդ մը չի կրցայ զանալ որ ինձի երաշխառը ըլլայ՝ որով և սոխովեցայ բանտ մտնալ:

Փշուտութիւնս ալ կատարեալ եղաւ. հօրեղօրս անէծքն է այս, ըսի ևս ինձի, և որ և իցէ զբադմունքներավ չէի կրնար հեռացնել զայն մոռքէս:

Անկրոնխս վրայ ընկայ, զառն և մթին ցնորքերով պաշարուած, և ժամ մը առաջ մեսնի կը փափաքէի: Եթէ իմ ուզութեանս վրայ ինչուան ան առեն փոյթ ունեցած ըլլայի, և յօյս Աստուծոյ վրայ զրած, անշուշտ այս առասկ զառն թշուառութիւնք չէին պաշարեր զիս, և որ գէշն էր ամեննեին չէի ուզեր Աստուծոյ տանիւը իսնարհիւ, և միշտ կը հակառակէի յամառութեամբ ամենոյն յորդորանաց՝ և չէի զլչար: Երբեմն կ'ուղէի աղօթել և զԱստուծ ինձի օգնութեան կանչել, բայց իմ սիրսս խօնարձ ըլլալով կրնաք մտածել թէ իմ աղօթքս ալ ինչպէս կըլլար, որով և իմ զլուխս ալ Պամերայ որդւոցը գէպքը պատահեցաւ:

Ի՞նչ բան, ըստ ժապարգապեար:

— Պամերայ որդիքը, շեմ զիտեր սուրբ զբոյ որ զբին մէջ կը յիշուի, Յորազ և Թոփէլ, որոնցմէ մէկը երաժշտութեան աշխատար զտու, խակ միւսը դարբնութեանը: Երբոր այս երկու եղբայրները մէկանդ կը բնակէին, պէտք էր որ մեծ աղապակ և շփոթութիւն ըլլար նոյն առներ մէջ, վասն զի Յորազ վերի զստիկնը նասած կ'երգէր և Թոփէլ վարի յարմկը՝ սալը կը զարնէր, վերը երգեհանին համար փուք մը ունէր, և վարը ուրիշ մը գարբնացին համար. Հսն որինդներու և եղեգներու ձայնը կը լսուէր, հսն ուշ բազներու հարաւածները և խարսացներու շառաչը: Ահա այս բնակարանիս կը նմանի անզեղ մեղաւարն ալ երր աղօթք կ'ընէ :

Ասածին յարկին մէջ որ է ըսել իր ըերնէն Աստուծոյ զօհութիւն կը լսուի, ասորին յարկին մէջ, որ է ըսել իր սրտին մէջ՝ մեղքը կը ծփի իր անձկութիւններովէ: Վերը ամենակարսոց Աստուծութը կը պաշտեն, վարը Բենակարայ կը զսէն. լեզուն Մարիսմայ հետ կ'երգէ և սիրտը Հերովզիսզայ հետ կը կաքաւէ:

Օգոստինս. — Ուրեմն երգեհանը երաշըստթեան հետ մէկանդ չնարաւած է:

Ժողովրդապեար. — Այնպէս յայսնի չէ, բայց տնիկա վնաս մը չի սար, վասն զի նմանութիւնը զարձեալ կը յարմարի:

Կատաղեար. — Չեմ զիտեր ինչ կ'ըսայի եթէ բանաին մէջ ևս ինձի մեայի. մարգիկ մոսցան զիս, բայց ոչ նոյնպէս և Աստուծ,

ինչպէս որ չի մոռցաւ զՅովակի՞՝ որ անմեշտւթեամբ բանտ զրուած էր։ Այն ժողովրդապեար որուն առունը իմ հօրեղօրոս նման պատկերը տեսած էի լսելով որ իմ վրայօքս կը խօսուի, յիշեց մէկէն ինչ որ ևս իրեն պատմած էի. և ի գութ շարժելով իմ խաւարային բանափս մէջի քաշոծ նեղութիւնՆերուս վրայ, ինձի տեսութեան եկաւ։ Զարհութեցայ զինքը տեսնալովս, և ըսի իրեն. Կը տեսնամ որ իրաւունք ունիմ, նայէ ուրբերաւ զիս հօրեղօրոս անէծքը։ — Ոչ, պատասխանեց ժողովրդապետը, ասիկայ հօրեղօրդ անէծքը չէ, հապա քու մեղացդ պատիթը. եթէ զու ճշմարտապէս Աստուծոյ դարձած ըլլայիր՝ այն անէծքը անշուշա քեզմէկ կը վերցուէր, և օրհնութեան կը փոխուէր։ Ասկայն ևս չի համազուեցայ իրեն ըսածին, և կը պնդէի որ Աստուծած զիս դժբաղդ ըւրամու ասհմանած էր, և ամենեին բան մը զիս չէր կրնար պատել ասկէ։

Զգուշացիր, կրիմնեց ժողովրդապետը, աւելի չծանրացնելու քու վիճակդ. ինչուան հիմա բաւական փորձեցիր որ անօգուտ է Աստուծոյ կամացը հակառակիլ որուն ձեռքն է ամենայն ինչ. ըսէ ինձի, արդեօք փորձած ես սիալինենքներդ ճանչնալով աղաչել զԱստուծած որ քեզի ողորմի։ Ոչ, ըսի, ամենեին չեմ փորձած և երբէք պիտի չի փորձեմ՝ վասն զինքին որ վիճակի մէկէն իրար ինքը զինաց, սկսայ մտածել թէ ինչ ընկած ևմ որուն կէսին իսկ արժանի չեմ ըղուած, մինչդեռ կը տեսնամ որ ինձմէ աւելի

մեղաւոր և անհոգ մարդկանց շատախն բանը աւելի յաջող կ'երթայ։ — Այս ինդըոյդ նկատմամբ կ'ուզեմ պատասխանել քեզի, ըստ ինձի ժողովրդապետը։ Չես մի լսած և կարդացած որ մահացու մեղք մըն ալ բաւական է զմարդ դժոխվ տանելու, ինչպէս ուրիմն կրնաս լսել որ քու դժբաղդութեանդ կէսին անդամ արժանի եղած չըլլաս։ Իսկ այն մարդիկը որ այս աշխարհիս վրայ իրենց մեղաց պատիթը չեն քաշեր, ամենեին պատճու մը չունինք զանոնք երջանիկ համարելու, վասն զի այնպիսին պատիթը յաւետենականութեան պահուած է, որով անոնք աւելի ցաւակցութեան արժանի են։ բայց կը տեսնամ որ Աստուծած քու վրադ տառած ձին սէր ունենալով չուզեր զգեղ թողուէ որ կորսուիս, և աչս այն է պատճառը որ յանցանքներուդ պատուհասը անմիջապէս մէկէն կը իրէի վրադ։ Ուրիմն իր կողինէ ամէն միջոց զործածեր է զգեղ զլջումի և ուղղութեան բերելու։ Ըստածներուն ամենեին չի կրցայ հաւատալ, սակայն այսու ամենայնիւ չէի ալ զազրեր իրեն չետ վիճարանելու։ Ան ասեն խեղճը նոր կատկարսն մը ձեռքս ասլով աղաչեց որ ուշագրութեամբ Հառմայեցոց թզթերը կարգամ մինչեւ որ քիչ մը զործածութեան համար զուրս երթայ, խօսք տարով որ քիչ ասենէն կը զառնայ։ Երբոր ինքը զինաց, սկսայ մտածել թէ ինչ ընկած այս զիրքը զոր շատ անդամ կարգացած էի վարժարանը, վասն զի կը տեսնազի

որ նոր փոխախռոթիւն մը չի կոյ մէջը, և յիրափ յնաւ փափստութիւն չի կոյր վրան և առ էր անոր արժեքը որ անփոփոխ կը մնայ Աստուծոյ պէս: Բայց ես փախուած էի, և շատ ծուզութեամբ անցուցեր էի աշակերտութեան ժամանակո և միտքս այնպէս զգացմի փախուած էր որ շատ անդամ ես ինձի կը հարցնէի, երբոր այս գիրքը ակամայ կամօք առի և սկսայ հարդար Համմայեցաց թղթերը, թէ ասիկայ արգեօք նոյն գիրքն էր, ինչ որ Գիւպէնկ եղած առենա կարգաց ցեր էի: Ինձի կերեար որ զայն առաջ առանելով ուրիշ տարբեր բան պիտի զանամ: Երբ ոյն անըլլ հասայ ուր որ կ'ըսէր թէ «Ամենայն բերանք խցին և ամենայն աշխարհ պարտական լիցի Աստուծոյ» զարդութեցայ, և 32—36 տուներն ալ կարգալով իմացայ Աստուծոյ մեծվայելութիւնը, միանգամայն նայն միջոցին մխիթարական լոյս մը ծագեցաւ սրտիս մէջ և բարձրանայն գոչելով ըսի. Ով աստուած իմ, եթէ ամենուն վրայ կը զթաս, զթա նաև իմ վրաս ալ: Կամաց կամաց այն նորհաց լոյսը տարածուեցաւ վրաս և բար սիրս զրաւեց, և արցանքներս գետի պէս սկսան վազել ինչուան որ ժարմագագեաը տուն զարձաւ, որ ներս մտնալով. Օրչնեալ ըլլայ Աստուած, կանչեց բարձրանայն, տեսնալով վիս որ կուշամ զառնապէս: ահա վերջապէս Աստուած որորմեցաւ քեզի: Դառն հեծեծանբներէս՝ արգիլուեցայ իրեն պատասխանելու, և ինձի

հետ գետին չոգելով այնպիսի սրտաշարժ և եռանդնալից կերպով աղօթեց, որ իմ սիրս ալ վրաեց ջերմեանգութեամբ, և բոլոր սրաովս ոկայ պարատիլ առ Աստուած: Աշնօդուած չեղաւ այս աղօթքս, որովհետեւ երկնային անդորրութիւն մը զրաւեց սիրսու և անմիշ ետքը հաւասարցի որ փրկչին մահը առ Աստուած մերձենալու ճամբան՝ ինձի համար ալ գիւրցուցած էր և թէ ես ալ ուրիշ մեղաւորներու պէս կրնամ՝ Աստուծմէ օգնութիւն գտնալու: Ոնկէ ետքը ամեն բանս աղէկ գնաց, ճանչցայ խոնարհութեամբ որ ես մեղաւոր էի և Աստուած արգար էր, և զիս ինչուան այն օրը իր անհուն երկայնամասութեամբը պահպանած էր առանց որոյ շատոնց կորսաւած կ'ըլլայի, և իր անսահման սիրոյն յայտնի ցոյցերն էին այն ամենայն շարիքները որ իմ զիսէս անցան և թէ Աստուած մեղաւորին մահը չուզեր՝ այլ անոր դարձը: Ամէկ ետքը Աստուծոյ խօսքը ինձի գարձը: Ամէկ ետքը Աստուծոյ խօսքը ինձի գարզըր սփոփանք մըն էր և բոլոր ժամանակս այս պատաւական զիրքը կարգալով կ'անցնէի: Ժողովրդապետը ինձի ուզեց ուշից հոգեսր զրքեր ալ բերել, բայց ես չնորդակալ եղայ, զիրք զրոցը միայն զիս կը պահեմ, այսինքն այն առետարանը որ այն աստուածարեալ մարզը ինձի տուաւ: Շատ արցունք թափեցի այն զրքին վրայ, որոնք ցողի պէս կ'իշնային աշքերէս: Իմ հոգւոյ փրկութեանը վրայ ինամբ ունենալին ետքը աղնիւ ժողովրդապետը ուզեց նաև իմ ժա-

մանակաւոր գործերս կարգի դնել։ Ես աւ
չնորհակալ եղայ իր այսպիսի բարեկարառու-
թեանը, նոյնպէս նաև իր բազմաթիւ բա-
րեկարացը՝ որ ազատութիւնս նորէն կրցայ
ձեռք ձգել, որով և վայելուշ գործ մը կը
փնտուի որով կարենամ լաւ ծառայել Առ-
տուծոյ զոր չի գտայ ծովու վրայ, ինչուան
որ զիս խաւարային բանտը ապրաւ ուր որ
սիրով նորէն հաշտուեցայ Աստուծոյ հետ։

Իրաւցնէ յաջողեցաւ բազզս բարի քրիս-
տոնեայներու միջնորդութեամբը, որոնք ին-
ձի բաւական ստակ փոխ տուին. ձկնորսի
անակ մը զնեցի ծովու մը եղերքը, որ որ
ամառը ձուկ որսարալ, իսկ ձմեռը կողովա-
գործութեամբ առենս կանցունէի: Ժաղովը-
զապետին աղաչեցի որ ժողովրդապետ հօ-
րելքորս կենդանազիբը ինձի չնորհէ՝ որպէս
զի միշտ յիշեցնէ ինձի այն բարեկործու-
թիւնը՝ որ Աստուծած ըրաւ ինձի: Այս պատ-
կերքը առնելով անակիս մէջ կախեցի:

Թ

Եաւաստիմ

Աստուծոյ օրհնութիւնը կ'օգնէր ինձի
այս նոր արուեստիս մէջ, վասն զի Պետրոս
առաքելոցն ովէս Աստուծոյ վստահանալով
ուռկաններս ծովը կը ձգէի, և միշտ լիցուն
կը քաշէի՝ այնպէս որ քիչ ատենէն վճարե-
ցի այն պարաքերս զոր այս ձկնորսի հիւզու
զնելու համար փոխ առած էի: Այս մար-
դիկներէն մէկը որ այս անակին տէրն էր՝
հարուստ վաճառական մըն էր՝ որ ծովու
վրայ շատ նաւեր ուներ: Ինչպէս կ'ըլլայ
իր նաւապետներէն մէկը կը մեռնի, և զիտ-
նալով որ ևս վարպետ նաւաստի՝ մըն էի,
իր նաւուն վերալացու դրաւ զիս: Խրաւ
գժուարութեամբ ձգեցի իմ միայնութիւնն՝
որուն վարժեր էի առըրք զրքեր կարգալով
և բարեկաչաւ մտածութիւններ ընելով, սա-
կայն չէի կրնար այս ասածարկութիւնը մեր-
ժել որ անկարծելի կերպով մը զիմացու եւաւ,
մէկէն գացի ժաղովրդապետը գտնալու որուն
այնքան երախտագէտ էի, և որուն վրայ
կարգէ դուրս վստահութիւն ունէի: Ինձի
հարցուց թէ արդեօք սիրու լաւ մը քննած
եմ, և թէ այս առաջարկութիւնս, արդեօք
սրախ մէջ անմոքուր մտածութիւն մը չէ
մի ծնուցեր, և զինքը ապահովցուցի որ առ-
ժամս այնպիսի մտածութիւններէ ազատ կը

գտնալի ինքզինքու, և ոչ եթէ ևս ինծի վասահացած, այլ Աստուծոյ շնորհացը ապաւինելով կը յաւայի, որ անով միջոց մը ունենամ պարտքերս վճարելու, որոնք գեռչէի կրցած բոլորովին ջնջել:

Այս քու մասմաւթիւնդ պարաւաելի չէ, ըստ ժողովրդապեսը, և չաս գո՞չ եմ քու այս զիտաւարութեանդ վրայ, և քեզմէ որ այս բանս լսեցի, կրնամ ևս ալ քեզի ըսել հիմայ թէ այն վաճառականին ևս առաջարկեցի զեեկ նաւապես առնելու իր նաւուն, վասահ ըլլալով քու սրտիդ վրայ Աստուածային շնորհացը ըրած ազգեցութիւնցը: Կարեոր հմտութիւն և յաջողութիւն ունիս այս բանիս, ուստի աղէկ է որ օգտակար ըլլաս անով ուրիշներուն ալ: Ես ալ բոլորին ապահովցած այս խօսքերէն՝ իմ առաջին պատրաստութիւնքս եղան՝ երթալ և անգամ մըն ալ մօտենալ ապաշխարռութեան և հաղորդութեան խորհրդայն. ասից եաքը իմ պրտի հիւզ աղքատ ձինորսի մը վարձու տուած ըլլալով՝ հօրեղքօրս կենդանագիրը առնելով իմ բնակարանս կախեցի, և աստուծոյ շնորհքովը առաջասաներս բացած համբայ ելայ: Բայց պատմութիւնս լմացնելէս առաջ կը փափաքիմ որ ինծի երգէք, սիրելի աղաքս, ճշմարիս սիրոյն երգը:

Ան առեն աղաքը սկսան երգել այսպէս:

« Օր մը հաւ մը տեսայ, որ թեերուն տակ ձագերու խումբ մը ուներ, և ապաստանարան մը կը բնակարան վասահացը մը ուներ: Որ մը շատ գո՞չ աղջկան առաջ մը ապամութիւնը բացի որ թոքերէն արիւն կը հաներ՝ իր ձագերը կերակերու համար: Ամօթ չը մի բու այս բանս քրիստոնեայ ժողովրդան մը: »

» Օր մը հաւաբասի. մը պատմութիւնը բացի որ թոքերէն արիւն կը հաներ՝ իր ձագերը կերակերու համար: Ամօթ չը մի բու այս բանս քրիստոնեայ ժողովրդան մը: »

» Օր մը աղջիկ մը տեսայ որ իր թեերուն վրայ զանոնէկ մը առած ամեն ինամք կընէր անոր, և զրկած մը տաքցնէր զանիւկա, զարմացայ՝ տեսնալով այս աղջկան գութը:

» Տեսայ մայրական գութը, ինչպէս կնիկ մը իր որդիքը կը ինամէ և ինչպէս նաև մեսնելէն եաքը զան կը զրկէ. խորհրդածեցի որ այն էր ճշմարտագոյն սէրը:

» Բայց երբար միաքս անոր զնաց որուն անսամբը մկանուած եմ՝ որ երկնային առ թուուն ի խան սուրբ խոնարհեցաւ և իր արեամբը զեեկ զնեց՝ իմ սիրսս և բերանս փառաւորեցին Քրիստոսի սէրը »:

Նաւապեար, Շատ աղէկ է աղքատս, շնորհակալ եմ ձեզի՝ և կ'ուզեմ նորէն շարունակել իմ պատմութիւնս: Այս անզամ զէս ի միջերկրական ծովը ուղեցի նաւս, ուր այլ և այլ նաւահանգիստներէ շատ մը վաճառք զնեցի և ծափեցի: Շատ մը վաճառքականի նաւերու չետ Գորսիկա կղզիէն բաժնուեցանք, բայց իմ նուս ամենէն աւելի առաջասառաւորուած ըլլալով անոնցմէ շատ առաջ անցաւ: Օքը շատ զեղեցիկ էր օրով և շատ զործողութիւններ զլուի հաներան:

ցի առողջ ու զուարթ: Կաւաստիներուն մէջ կը տեսաւ յանկարծ հետուէն նաև մը՝ զոր դիտելով, վերջապէս իմացանք որ ելուզակ ներու նաև մըն է եղեր: Զէինք կրնար անոր դիմացէն փախչի և անանկով զմեզ աւելի վտանգի մէջ կը ձգէինք, աւստի բոլոր նաւաստիք 17 հոգի և եօթն ալ ճանապարհորդք յանձն առին ինչուան արեան վերջի կաթիւնին թափելու, քան թէ անոնց ձեռքը գերի մասնուելու: Մ'եկէն սկանք պատրաստուի ամեն կարևոր հնարքը ընելով, և թնդանօթները պատրաստեցինք նաւուն եղերքը: Երբոր ելուզակաց նաւը իմացաւ որ մենք պատրաստուած էինք իրենց դէմ զնելու, իրենք ալ իրենց յարձակման պատրաստութիւնները ըրին՝ ևս առաւել երբ տեսան որ մեր առագաստները վար կ'իջեցնենք: Մեր առաջին գնտակը թշնամեաց նաւագետին գուշիը ջախջախեց՝ և որովհետեւ իր նաւաստիքը բազմաթիւ չէին, մեր յարձակմունքը այնպիսի շվաթութիւն մը ձգեց մէջերնին որ մենք զիւրութեամբ ժանիքներով իրենց նաւուր բանելով նուածնեցինք իրենց նաւաստիքը որոնք 13 հոգի էին: Ասոնք նախընթաց զիշերը շատ մարդ կարսնցուցեր էին Ամերիկացի նաւու մը չետ կառւերւ ատեն, բայց բարեխաղաբար անոր ձեռքէն կրցեր են փախչի: Ելուզակաց նաւուն մէջի եզած մարդիկը ձիբարագար չամնեցի որոնք հոն պատերազմական ատենի առջե քննուելով զատասպարտուեցան: Խոկ նաւը՝ որ աղեկ վի-

ճակի մէջ էր Անդրիս ասարի որուն մէջը չարուսաս զանձեր գոտնիք, զորոնք ելուզակի ները կաղոպասած էին ասդիէն աղիէն, և քանի մը նաւաստինը և ճամբարդներ գերի բանի մը նաւաստինը և ճամբարդներ գերի յանած, նաւուն մէջը խորը ձգուած էին ուրոնց անձամբ իմացացի թէ ալ ազատ են: Ենչպէս յանկարծակիի եկայ, երր իրենց մէջ տեսայ իմ չին Գորպէզ բարեկամն, Նոլանտացի նաւուն բժիշկը, որն որ զիս Ժահուանէ աղատեր էր Ուզէրտամի մէջ: Մէծ եղաւ իրաւցնէ իր ուրախութիւնն ալ և զարմանքը երբոր իմացաւ որ նաւուն նաւապետը իր այն բարեկամն էր՝ որուն չամար կը կարծէր թէ բոլոր կեանքը որի կայութեամբ պիտի անցնէր:

Միատեղ խցիկ մը նաւելով բոլոր զիմէս անցածները պատմեցի իրեն. ինքն ալ փոխարձ իրենինը ինծի պատմեց որ իմինիս չաւասոր բազմավէս էր, բայս ոչ այնպէս առաջանելի:

Տիրութեամբ իմացայ, թէ իմ բարեկամն, որ իր հօրը տունը քրիստոնէական կրթութիւն առած էր և բարեպաշտ աղքականներ ունէր, աւելի սաստիկ ալէկոծութիւն մը ունեցեր էր քան ինչ որ ևս Ամբիկէի ծովափունքը, կուզեմ ըսել չաւասոյ ալեկոծութիւն մը: Ավշեցուց զիս, երբ լսեցի որ ինքը և ոչ Աստուծոյ զոյսութեանը կը հաւատայ, բայց կ'ըսէր նաև թէ չաւասուլ չկարենալուն համար ալ շատ կը նեղուէր, բայց թէ բնութեան վրայ ըրտծ տեսութիւնքը

իրեն այնպէս մը կ'երկեցնէին որ աշխարհս
պարզ մեքենայ մըն էր և թէ չկայ Արարիչ
մը: Ո՞չ սիրելի բարեկամ, ըսի ևս իրեն, թէ
որ բնութիւնը մանրամանաբար քննած րե-
ւայիր տեղն տեղ գտած կ'ըլլայիր Աստուծոյ
ունենակարողին հետքը, վասն զի երկիրս իր
բարութեամբքը լեցուն է: — Այսեն մը ևս
ու այնպէս կը մտածէի, ըստ Գորպէզ,
բայց անոնք տպայութեանս գաղափարներն
էին: Վասնի որ աշխարհիս գրգծոց մէջ մտայ
և իմ գաղափարներս և ակնկալութիւններս
ընդառաջնեցան և անդպատճառութիւնքս ու
բացուեցան, սկսայ աշխարհքս բարողին ու-
րիշ երեսութօվ մը աւենալ: — Անարակայս
սիալ երեսյթներով, ըսի ևս իրեն, և ինչո՞ւ
համար տպայութեանդ հաւատքը չանիս: :
Քիսասոս տէրն մեր ըստու: « Եթէ ոչ գարձ-
չիք և մինիչիք երբե զմանկաի, ոչ մտանիշ-
ցէք յարքայութիւն երկնից »: Ես ալ այս
փրկարկան հաւատքը տահն մը կորսնցուցած
էի որոնց վրայ շատ արտասուք թափելն
եաքը նորէն ստացայ, բայց վասոք Աստու-
ծոյ որ հիմա հաստատան ևմ անոնց վրայ,
և բնաս պիտի չի թողամ զանոնք: Գորպէզը
ձամբարդութիւն մը ըրած ըլլալով Ազիսոսոս,
պարերէն կը հասկնար: Իր ազատութեան
երկրորդ օրը նոտած էինք մինակ իմ խցիկս,
և միշտ Աստուծոյ էութեանը վրայ կը խօ-
սէի՝ զոր ինքը շարունակ կ'ուրանար, յան-
կարծ ձայն մը լսեցինք որ կ'ազարակէր « Ա-
լոհազագպէր » որ ըստի է Աստուծոծ միծ է:

Գորպէզ զարհութեցաւ այս ձայնէն, ինչպէս
տղայ մը՝ որ գողութիւն ընելու ժամանակ
կը բանուի, կը կարծէր որ մարդ ու չէր
հասկընար արարերէն նաւոն մէջ, և թէ
մենք մինակ էինք խցին մէջ, և քանի որ
չորս զին կը նայէր թէ ուսկից կրնար այս
ձայնը գտալ: Գորպէզ ահաս որ թութակ
մը վանդակի մը մէջէն կ'ըսէր այս խօս-
քերս:

Այս թութակը Կոստանդնուպօլիս մէկէ
մը գներ էի, որոն սորվեցուցած էին բակու-
այս խօսքերս: « Ալլահազագպէր », և որպէս հանե-
այն ծախողին քանի մը ծառայութիւններ
ըրած էի, անոր համար ոչինչ զնով մը ինծի
առաւ զանիկա:

Տես բարեկամ, ըսի ևս իրեն, որ բնու-
թիւնն անզամ, որուն վրայ ըրած գիտողու-
թիւններով Աստուծոյ էութիւնը կ'ուրա-
նաս, անիկոս ու Աստուծոյ իմաստութիւնը
կը քարոզէ: Ես հաւատարապէս իրեն ցառ-
մանը և սիրոյն փարձը ունեցեր ևմ: Մի աշ-
նազանիր գու ու իրեն մեծութիւնը ձանչ-
նայու, զեեկ րուրդովին չէ թշուասցուցած: :
Այն խօսքերուս վրայ, այլայլած երկայն աշ-
տեն, պատասխան չի կրցաւ տալ. իր երե-
սին վրայ նկարուած սոսկումը բարի նշան
մը երեցաւ ինծի. իմացայ որ խղճմանքը
բարորմին անզամ չէ եղեր: Բոլոր զիշերը
րրեն համար եռանդեամբ կ'ազօթէի, ին-
չուան որ փրկիչն յօժարեցաւ վառելու իր
որտին մէջ երիստասարդութեան ժամանակ

ունեցած բարի տպաւորութիւնքը, տպալով
իրեն իր բարեացը բարձրագոյն չնորհքը։
Երկրորդ օրը նախաճաշի չեկառ և երրոր
կերակուրի իջաւ, զայնը նետած ու գէմքը
բոլորավին փախուած էր, սեղանին վրայ ամեւ-
նեին չի խօսեցաւ։ Իրիկուան ալ նոյնակա-
էր, իրեք օր այսպէս շարունակեց որով ևս
ալ չուզեցի իր մատածութիւնքը շփոթել. վեր-
ջապէս չորրորդ օրը ինձմէ Աստուածայունը
զիրքը ուզեց։ Բոլոր ճամբորգութեանը ժա-
մանակ այս ասաւուածեղէն զիրքը կարգարու-
զրադցաւ, և երրոր Անդզիս հասանք ինձի
աղաչեց որ զինքը ան քահանային տառնը
տանիմ, որ իմ վրաս Ասմարացւոյն գութը
ունեցեր էր։ Շատ մը տարակոյսներ ուներ
որոնց վրայ կը փափաքէր լուսաւորութ, այս
տարակոյսները շուտ մը ցըրուեցան, և կեր-
պարանքը մէկէն ասաւուածային չնորհքով
լեցուեցաւ՝ վասն զի կրկին զիրութիւնէ մը
ազատած էր, վասն զի իրաւամբ կրնար մէ-
կը բաել իրեն այն խօսքը, ինչ որ հին երդի
մը մէջ գտուած էեթէ ծովաչէնք կը յափշտա-
կեն մարդկանց մարմինը, բաւական է որ
Քրիստոս զերեաց հոգիները աղատէ. հարկ
չիկայ ըսելու որ անկէ եաքը ևս ուելի եր-
ջանիկ վիճակի մը մէջ գտնուելով, ինձի
Ռոդերամ ըրած բարեացը՝ հարիւրապա-
տիկ իրեն հատուցի։ Անզիսայ մէջ հաստա-
տուեցաւ, և քանի մը տարիեն եաքը Աս-
տուածոյ չնորհացը մէջ մեռաւ՝ որուն յիշա-
տակը ինձի մեծապէս քաղցը է։

Ճ

Գարձը

Ճամբորգութեանս դէսքը, ինձի սերտ
բարեկամութեան պատճառ եղաւ նաւուն
ափողը հետ, նաև մեծ զումարի մը տէր
ըլլալու, որով կրցայ վճարել առջի ըրած բո-
րբ պարտաքերս ինչուան վերջի նաքարակիւ-
տը, որն որ ինձի մեծ միմիթարութեան պատ-
ճառ եղաւ։ բայց որովհետեւ հանգիստ ապրե-
րու համար բաւական սատկ չունէի, միտքս
զիր որ նորէն ծովու վրայ ճամբորգութիւն
մը ընեմ, թէպէտ և զժուարին ալ ըլլայ։
Բանտին մէջ այն երկնային խստամունքը
ունենալէս ի վեր, որ Աստուած յանցանացս
կը ներէ, ապահով էի յաւիտենական փրկու-
թեանս վրայ և կը յուսայի որ Աստուած
զիս իր պաշտպանութեանը տակ առած էր։
Բայց գեռ չէի կրնար բոլորին հեռացնել
մաքէս հօրեղօրս անիծից երկիւլը։ Կը մը-
տածէի Աստուածոյ չորրորդ պատուիրանը,
որուն կաստրուելէն կը կախուին առ ժա-
մանակեայ երջանկութիւնքը և թշուառու-
թիւնքը։ Ով որ կը պատուէ իր ծնողքը եր-
ջանիկ կ'ըլլայ՝ և երկայն կ'ապրի այս աշխար-
հիս վրայ։ Բայց ասիկա չի բաւեր սակաւին
ապահովելու իր հանդերձեալ երջանկութիւ-
նը, վասն զի ով որ կ'ուզէ իր յաւիտենա-
կան փրկութիւնը, պէտք է որ պատուէ նաև

գԱստուած, և հնազանդի իրեն պատուիրառացը, և ևս, պէտք է հաւասարյ թէ Քրիստոս որդի է Աստուծոյ, առանց որոյ անկարեկի է Քրկութեան համնի՝ թէ և շատ առաքինութիւններ ալ ըլլած ըլլայ երկրիս վրայ: Անիկա որ անհնազանդ եղած է իր ծնողացը, չի կրնար երջանիկ ըլլալ յայսմաշխարհի, վասն զի իրենց անէծքը զինքը կը հալածեն, իսկ եթէ իր յանցանքը ճանչնայ, և զզջայ, Աստուած իրեն կը ներէ և կրնայ փրկութեան համնի: Որչափ ալ ապահով ըլլայի որ Աստուած զիս սահմանած ըլլայ յաւիտենական փրկութեան համար, հանդերձ այնու կը վախնայի որ հօրեղբօրս անէծքը ըլլայ թէ վրաս ստուգուի: Անոր համար զողովզալով ճամբորդութեան ձեռք զարկի, վախնալով միշտ նորանոր դժբաղդութիւններէ: Բայց հօրեղբօրս կենդանազիրը այս վախնը կը վարատէր սրտէս: Յաշնող զէպիկը ձախորդներուն պէս հաւասար երկիւզ կը պատճառէին ինծի, որովհետեւ չէի հաւասար բաղդին հաւատարմութեանը, վասն զի աւելի ծանր է մարդուս կորսնցնել ստացած բարիքը, քան թէ ձեռք չկարենալ բերել ապագայ յուսացածը. սակայն պատճառ մը չունեցայ ցաւելու այս ճամբորդութեան վրայ, որովհետեւ քան զառաջինները աւելի բարեյածող գնաց, և մեծ վաստակով տուն դարձայ: Նորէն նաւարկութիւն մը ըրի նոյն տանը հաշուին, այն ալ այնպէս յաջողեցաւ որ կրցայ ինծի նաւ մը զնել և

վերջապէս իմ հաշուիս ճամբորդութիւն ընել: Այս վերջի ճանապարհորդութիւնս շատ աղէկ յաջողեցաւ ինծի, որով և մեծ հարասութեան տէր եղայ: Վաթսուն տարեկան էի և ծովու վրայ ճամբայ ընելէն ալ ճանձրացած ըլլալով, կը վափաբէի մնացած օրերս հանգստեամբ անցնել վառարաներով զԱստուած, և պատրաստել զիս յաւիտենական կենաց: Իմ անցուցած կենացս ընթացքը մեծ զիրք մը կրնար ըլլալ եթէ իւրաքանչչւր օրուան զէպիկը զրել ուզենայի: Աւ հաստատուն միտքս զրի որ իմ հայրենիքս դառնամ, հրաժարականս տալով Անգլիա բարեկամներուս, նաւս վաճառեցի, և բոլոր կահկարասիքս հետս առած՝ դարձայ Հողանատա: Ի՞նչ նեղութիւններ քաշեցի ես այս քառասուն տարուան մէջ, Հողանտայէն բաժնուելէս ետքը ինչուան վերատին հայրենիքս դարձայ: Զէի գիտեր ինչպէս շնորհակալ ըլլամ Աստուծոյ՝ որուն պարտական էի. գիշեր ու ցորեկ զոհութիւն տալէն չէի դազրեր իրեն, բայց այնու հանգերձ բոլոր նաւարկութեանս ատեն չէի կրնար հօրեղբօրս երկիւզը հանել արտէս, վախնալով որ ըլլայ թէ իր անէծքը նորէն դժբաղդութիւն մը բերէ զիսուս: Երբեմն կ'անցնէր մտքէս՝ չըլլայ թէ զիս տանող նաւը ընկդմի այնպէս որ Ամողերտամ հասնելէս ետքն ալ զեռ կը դողայի, ըլլայ որ ունեցած հարստութիւններս գողցուին: Վերջապէս ողջ և առողջ հասայ իմ հայրենիքս իմ խաղաղութեան օթևանս:

Հանդերձ այսու՝ երբեմն դեռ անհանգըստ տութիւն մը կը զգայի, և շատ զիշեր կը տագնապէր սիրսոս երեակայելով որ չըլլայ թէ տունը վրաս փլչի, որովհետեւ ծնողաց օրհնէնքը որդւոց տուն շինեց, և անոնց աշնէքը զանոնք քանդեց. քանի որ կը նայէի այս կենդանազրոյն վրայ, իր սպասնալից երեսը զիս կը վախցնէր, և միայն եռանդնալից աղօթքներուն ուժովը կրցայ վերստին հոգւոյս խաղաղութիւնը գտնալ: Այս եղու ահաւապեսկ նաւապետին պատմութիւնը, զոր լուսվ ունկնդիրք ցաւակցութեամբ զգացուեցան ամենքն ա: Ժողովրդապետը շատ ջանաց համոզել զինքը որ այն ունեցած վախը ալ սրարապ էր բոլորսին և անհիմն, բայց իր այս յորդորները չի կրցան զինքը բոլորսին համրոզել վասն զի նաւապետը՝ իր անձին փորձալը վկայ էր զիմէն անցածներուն:

ԺԱ

Միրտուրեան գիրքը

Տարի մը անցաւ որ ժեր Պիւգմանը ժողովրդապետին տունը կը նստէր մեծ բարեկամութեամբ, և իրենց այս մտարմութիւնը երթալով աւելի շատցաւ. տղաքը ամեն օր կը զուարձանացին, երեկոյեան հանդէսները մաքերնին բերելով, որ սովորաբար նաւա-

պետին տունը կ'անցնէին: Հոն զրեթէ ամեն իրիկուն թէյ խմելով կը զուարձանացին, և ժեր Պիւգմանն ալ իր գիտցած ու տեսածներէն այլեայլ զուարձալի և միանգամայն հրաշանգիշ զէպքէր կը պատմէր իրենց: Ժողովրդապետը շատ կը չանար բարեկամին սրտէն այն ունայն վախը վարատել, որ իրեն մերձաւոր թշուառութիւնն մը կը զուշակէր անկէց, վասն զի թէ և համոզուէր ալ անոր իրաւացի ըստածներուն, սակայն բոլորսին չէր կրնար հեռացնել իր մաքէն այն անհանգառութիւնը, որ շատ տարիներէ ի վեր սովորուեր էր սրտին մէջ: Աստուծոյ գործքերը գարմանալի են:

Առաւոտ մը երր ժողովրդապետը ձեռքը յունարէն զիրք մը առած խցին մէջ կը կարգար, յանկարծ մարդ մը ներս մտաւ զոր բնաւ տեսած չէր, որ և ըստ իրեն թէ ինքը Տորնհամին քաղաքը ծնած ըլլալով կը փափաքէր իր մկրտութեան վկայութեան զիւը ունենալ:

Ժաղովրդապետը. — Անունդ Բնչ է: Միւսը: — Մարտինս Լոպէր:

Ժաղովրդապետը. — Ուր կը բնակիս: Լոպէր. — Երէկ իրիկուն հասոյ հոս Անդզիսէն ուր նաւաստի մըն էի, և մեռած եղրօրմէս ինծի ընկած պղտի ժառանգութիւն մը ունիմ ձեռք ձգելու. անոր համար ծննդեանն վկայութեանը կարօտութիւն ունիմ: Երբոր այս բանս յաջողի հոս պիտի հաստատուիմ և հոս պիտի ապրիմ իմ ունեցած քիչ մը ստացուածքովս:

Ժաղովրդապետը. — Անդվիս Պիւզման անունով նաւաստիին հետ ճանչուորութիւն մը ունի՞ս:

Լոռեր. — Անունը լսեր եմ, բայց վիճակը չեմ տեսած և հսու իմացայ՝ որ հիմա Տօրն հակէն կը բնակի, և թէ հին ժողովրդապետին եղարքին է եղեր Ֆրանց սրիկան՝ որուն հետ միատեղ դարձոց ալ կ'երթայի: Թէ որ Անգղիա իմացած ըլլայի այս բան ամեն ջանք կ'ընէի իր նաւը մտնալու, բայց Տօրնհակէն քաղքէն մեկնելու ժամանակս ինքը գեռ համարսարանն էր, և երրոր նաշւապետ եղաւ Անգղիա, չի կրցայ մտքէս անցնել որ այն սրիկայ Ֆրանցը այն պաշտօնին հսանի:

Ժաղովրդապետը. — Անշուշտ շատ պիտի ուրախանայ ինքը թէ որ զձեղ վերստին տեսնելու ըլլայ, բայց հրամմէն նորէն քիչ մը, մինչև երթամ ձեր մկրտութեան վկայագիրը գտնեմ: — Ժաղովրդապետը զնաց փնտուելու արձանագիրը, և հարցուց թէ երբ ծնած է:

Լոռեր. — 1754ին:

Ժաղովրդապետը. — Ան ատեն սկսք է որ փնտուեմ ձեր մկրտութեան թուականը այն հին զիրքին մէջ, որ անմիջապէս Պիւզմանին հօրեղօրը մեռած տարին լեցուեցաւ: Մկրտութեան յիշասակարանաց արձանաշ գիրը բերաւ, և թղթերը զարձնելով գտաւ Լոռէրին անունը, և նոյն երեսին վրայ նաև Ֆրանց Պիւզմանին եղարքորդապետն ալ, այն

տեղը տուանձին թուզթ մըն ալ կար՝ զոր ժողովրդապետը բնաւ չէր տեսած, վասն զի զրքին այն մտածին մէջ բան փնտուելու աշենեին առիթ մը չէր ունեցած: Կարդաց զայն և զարմանալով մը գոչեց: ինչ զարմանալի գիտուած: Ծալեց շտապաւ թուզթը և զրպանը զրաւ, իսկ Մարտինոս Լոռէրի մկրտութեան վկայականը օրինակեց, և ըստ առ Վաղը կէսօր եկուր որ զքեղ նաւապետին տունը տանիմ: Լոռէր հազիւ թէ գնաց, ժողովրդապետը շտապաւ պարտիզին կողմէն նաւապետին տունը հսաւ, ներս մտաւ առ անց դուռը զարնելու, և գոչեց: Բարեկամ, փառք տուր Աստուծոյ, վասն զի տեսալս մը բերի: Նաւապետը՝ որ զբաղած էր հոգեւոր զիրք մը կարդալու, ոտք ելաւ յանկարծ, և հարցուց թէ ինչ կայ: — Կարդայ, բատ, այս թուզթը:

Նաւապետը կարդաց, և սկսաւ գողալ, շուարեցաւ, և ծոնկ չողելով սկսաւ գոչել: Ով աստուծած իմ, ազատիչ իմ, կը ճանչնամ քու սուրբ ճամբաներդ սրոնք ինծի խստաշէն գէպ ՚ի լոյս կ'ասացնորդէն:

Անշուշտ սիրելի ընթերցողք կը բաղձաք գիտնալու այս թղթիս մէջի զրուածը, ահաւասիկ լսեմ ձեղի: « Կ'աղաչէմ յանուն Աստուծոյ որուն ձեռքը որ իյնայ այս թուզթս, ապահով հացնէ այն մարդուն ձեռքը սրուն որ զրուած է, այսինքն իմ խեղճ Ֆրանց եղարքորդապոյս, եթէ զեռ ողջ ըլլայ: Սաստիկ բարկացած ըլլալով իր անհնազանգութեան

և յամառութեան վրայ որ ինծի զէմ ցըցուց՝
անիծեցի զի՞նքը, բայց ետքէն զզջալով ըրա-
ծիս վրայ, այս տողերովս յետս կը կոչեմ
ըրած անէծքս, վասն զի անդուլ աղօթք ը-
նելով ապահով եղայ որ Աստուծոյ անհուն
ողորմութեամբը իմ Ֆրանց եղբօրորդիս պի-
տի շգաստապարտուի, բայց կը գուշակեմ
ալ որ փրկութեան արժանի պիտի չըլայ՝
մինչեւ որ ծանր և գծուարին դէպքեր և ալէ-
կոծութիւններ. զիմին չանցնելու ըլլան։ Կը
փափաքիմ որ այս իմ զրուածքս իր ձեռքը
հասնի որպէս զի իր ամեն տառապանցը
վրայ չաւելնայ նաև հօրեղբօրը անիծից տադ-
նապը։ Այս թուղթը մկրտութեանց արձու-
նագրին մէջ կը պահեմ, որովհետեւ կը գու-
շակեմ թէ ժամանակ պիտի դայ որ ալ թա-
փառական և գասարկապորտ պտըսուէն պի-
տի դադրի, և պիտի ընտրէ տռանձին տեղ
մը իր կինաց մնացած օրերը անցնելու, ու
րով և իր ծննդեան օրը վնսուելու տակեն ըն-
դունի թող միանդամայն իր հօրեղբօրը օրհ-
նութիւնը։ Կատարեալ և լի հաւասար կ'ը-
սեմ այս խօսքերս, որովհետեւ զիտեմ որ
բարի հովիւը պիտի գտնայ նորէն այս մո-
լորեալ ոչխարը, որչափ ալ չեռու ըլլայ իր
կորսուած տեղը։

14 Յունիսար 1780.

Ֆեր Պիւդմանը այս զիրը զրեէն երեք
օր վերջը յանկարծական մահուամբ վախ-
ճանեցաւ, որով և չի կրցաւ մարդու ալ

յանձնել իր եղբօրորդւոյն թողութեան մուր-
չակը։

Նաւապեաը տեղեկանալով թէ ինչպէս ժո-
ղովրդապեաը գտած էր այս թուղթս շատ
ուրախացաւ, որով երախտագիտութեամբ և
միանդամայն ուրախութեամբ լեցուեցաւ
խեղին սիրտը. ալ տմենայն վշտերէ և տագ-
նապներէ խալսեցաւ, և անցածը իրեն եր-
կայն և ձանձրացուցիչ երազ մը կ'երեար,
և քանի որ թղթին վրայ կը նայէր ուրա-
խութեան արցունք թափելով կը թրչէր զայն,
որով միայն կրնար միաքը համոզուիլ թէ
զիմին այնպիսի բաներ անցեր էին։ Այս
թուղթը պէտք էր ոսկի շրջանակի մէջ գնել
ըստ ժողովրդապետին։ — Այս, ըստ ա-
նիկա, վասն զի լի է ոսկւով հաւատոյ և
վստահութեան առ Աստուծ։ աշխարհին
գանձերը չեն կրնար անոր բովանդակածին
տեղը բանել։ Նաւապեաը խօսքը շարունա-
կելով ըստաւ. Օր մը լըսեցի որ ժողովրդա-
պետին մէկը կ'ըսէր. Մարդուս կեանքը մ-
ռեղծուած մըն է և իր մահը անոր բանա-
լին. կրնամ հշմարտի ըսել թէ իմ կեանքս
ալ առեղծուած մըն էր, և այս առեղծուա-
ծին բանալին այս թղթիս մէջն է եղեր։

Երկայն ատեն իրարու հետ հոգեւորական
նիւթոց վրայ խօսակցութիւն ըրին և երախ-
տագէտ չնորհակալութեամբ օրհնեցին զԱս-
տուած, ինչուան որ ճաշու ատենը եկաւ.
Ճանը մէջ եղող մեկալ անձինքն ալ իմացան
որ այս եղական զէպքը, մէծ ուրախութիւն

և սրտի հանգստութիւն պատճառեց այն սիրելի և յարդելի ծեր նաւապետին։

Վերջ բանիս

Երկրորդ օրը Մարտինոս Լոպեր՝ ժողովրդապետին գալով, հետը մեկտեղ նաւապետին տունը եկաւ։ — Բարեաւ եկիր Մարտինոս, ըստ իրեն նաւապետը, երեսը նայելով և ձեռքը երկնցնելով։ Դու ալ ուշիմն նաւահանգիստը մտար, բայց ես կանչեցի քան զքեզ, պէտք է որ դու ալ ձգես հոս նաւուգ խարիսխը. և մնացածը թող տուր ուր որ է, վասն զի հոս հարկաւոր եղածէն աւելի վաճառք կայ։

Լոպեր. — Ինչ զրօշի տակ է քու նաւուգ։ Նաւապետը. — Յիսուսի թագաւորութեան զրօշին տակը, որ բոլոր ձերմակ է մէջտեղը կարմիր խաչ մը կայ։

Լոպեր. — Շատ աղէկ, ըստ անոր, ես ալ քեզի կը հետեւիմ, վասն զի կը տեսնամ որ այդ զրօշով խիստ աղէկ և ապաշ հով նաւարկութիւն կ'ըլլուի։

Նաւապետը վեմ և ծանր կերպով մը կը խօսէր Լոպէրին հետ՝ մանաւանդ երբ իմացաւ որ Խոլանտացի քահանայ մը, զինքը ուղղափառ ըրեր էր, իր սխալմունքները ճանչնելով իրեն, որուն նաւապետը շատ ուրախացաւ, ևս առաւել որ իրեն այնպիսի կարեւոր թղթի մը գտնուելուն պատճառը ինքն եղած էր։

Միւս կողմանէ կ'ուրախանար տեսնաւ լով որ տղոց ընկերութեան մէջ էր. և իրեն կուղար որ ինքն ալ երիտասարդանար անոնց հետ։ Ատեն տունը կոչունք կ'ընէր ուր կը ժողուէին բոլոր զրացի տղաքը, որոնցմէ իւրաքանչիւրը իր զիմացը բերնուց հատուած մը պէտք էր որ ըսեր զոր ինքը սորվեցուցած էր անոնց. ետքը ամեն մէկին ըստ արդեանցը, մէյմէկ զիրք և քիչ մըն ալ սաակ ընծայ կու տար։ Անկէց ետքը կը ձգէր զանոնք որ իր տանը զիմացի պարտիզին մէջ վաղեն և խաղան ինչուան իրիկուն, ետքը իրենց անուշեղէն կը բաժնէր, ինչպէս նաեւ պտուղ և մրգողի։

Իսկ ժողովրդապետութեան մէջի եղած ծերերը հոն կը ժողուէին այս միջոցիս և կը զուարձանանային իրենք ալ տեսնելով իրենց տղայոց ուրախութիւնը։ Երկու ամիս բեղին մէջ տղայոց վերջին կոչունքէն զատ՝ գեղին մէջ տղայոց վերջին կոչունքէն զատ՝ ուրիշ խօսակցութեան նիւթ չկար, և երկու ամիս ալ երկորդ կոչունքին պատրաստութիւն։ Մեծ մարդիկը տղոցմէ աւելի կարծես այս բանովս կը զբաղէին։ Կոյնապիսի հանդիսի մը վրայօք նաւապետը իր յիշատակարանին մէջ զրեց անդիմարտին այս հետեւեալ հատուածը զոր թարգմանարար գնենք հոս։

« Առաւօտը երբ արտոյտները կ'երգեն իրիկունը երբ ստուեները կը սկսին երկըննալ, թէ բարձրաւանդակ տեղերը, և թէ ծառոց տերեւներուն տակ, կը սիրեմ

լսել այն տղայական քաղցր ձայները։ Ծեր
մըն եմ և մաղերս ճերմկցած, բայց կ'աւ-
խորժիմ աշքովս զձեղ դիտել, սիրեցեալ
մանկունք, ձեր կերպարանքը սիրտս քաղցր
գդացմամբ մը կը լեցնեն։

« Կ'ուզեմ ձեր խաղալը տեսնալ գարնանա-
յին գեղցիկ դաշտի մը վրայ, և դալարուտ
մարգագետիններու վրայ, բայց ձեզմէ ա-
ւելի՝ ապագայ տարիններուն ցաւոց և անձ-
կութեանց վրայ կը մտածեմ, վասն զի ծեր
մըն եմ, ծերութիւնը նախատես է։ Բայց
զուք երջանիկ արարածներ, զուք անտե-
ղեակ էք տակաւին անձկութեանց, այսօր
զուարթ էք և վաղոււնը չէք մոտածեր։

« Թող ըլլայ ինչ որ պիտի ըլլույ, զուք
զուարթութեամբ խաղացէք, և երբ լմեցը-
նէք ձեր խալը, գացէք քնացէք և ծաղիկ-
ներ՝ շաղ և արևե երաղեցէք։

« Աստուած մը կայ որ ձեր վրայ կը
հսկէ, և կը հրամայէ իր հրեշտակացը որ
ձեր անկողնին քով զտնուին։ Կարելի է
արգեօք որ ծերու մը օրչնութիւնը ազգե-
ցութիւն մը չունենայ։ Երջանիկ եղէք,
վասն զի ինծի ամենէն աւելի փափաքելի
մաղթանքս այս է ձեզի։»

Հիւանդները և աղքատները անսպառ
օգնականութիւն կը գտնային նաւապետէն,
և իր ամեն բարեացը մասնակից կ'ըլլային։
Ի՞նչ կը կարծէք որ իր մահուընէն ետքը
մնացած ըլլայ այն մեծ և անբաւ հարըս-
տութենէն. հաղիւ հինգ հարիւր ֆրանգ պա-

արաստ սոտակ։ Ի խոր ծերութեան մեռաւ
նախանձելի ու բարի մահուամբ մը, և զե-
րեզմանին վրայ ուրիշ բան մը չկար բայց
եթէ պարզ քար մը առանց արձանագրու-
թեան, Տօրնհակէնի եկեղեցւոյն դրանը ե-
տեւ։ Ծերերը իրեն գերեզմանին քովէն
անցներու ատեն կ'ըսէին։ Հոյ կը հանգչի
ձեր Պիւքմանը որ աղոց վրայ այնչափ սէր
ունէր։

ԶԱՏԿԱԿԱՆ ՀԱԻԿԻԹՆԵՐ

ԶԱՏԿԱԿԱՆ ՀԱԼԻՒԹԵՐ

Ա

Դեռ հաշեր միան հոս

ԴԱՏՎՈՒՄ ՄԱՍԻՆ

Հարիւր տարիի մը չափ կայ, որ պզտիկ
ձորի մը խորը, որուն չօրս կողմը մեծամեծ
անտառներով և ահաւոր ժայռերով պատաժ
էր, աղքատին հիւգերու մէջ կը բնակէին
աղքատ և ողորմելի ածխագործներ, որոնց
հարստութիւնը ածուխ շինելէն զատ քանի
մը պտղատու ծառերու վրայ կը կայանար:
Երկրին մէկ անկիւնն ալ քիչ մը ցորեն,
կանեփ և կտու կը բերէր, որով իրենց
հարկաւոր եղած պիտոյքը կը լեցնէին. ու
նէին նաեւ քանի մը կով և նոյնչափ ալ
այծ: Իրենց այս աղքատութեամբը հան-
դերձ երջանիկ էին, վասն զի ուրիշ մեծա-

մեծ բաներու չէին փափաքեր. ժուժկալ և շարքաշ կեանք կսնցընէին, և հանապագութեայ աշխատանքը առողջ և առոյդ վիճակի մէջ կը պահէր զիրենք, որով և այս աղքատին չիւղերուն մէջ՝ հարիւր տարեկանէն աւելի ապրողներ կային որ մեծամեծաց պալատներու մէջ չեն գանուիր:

Որ. մը այն եղանակին որ վարսակը հասնելու վրայ էր և արեւուն տաքութիւնը սաստիկ էր երանց վրայ. այծարած օրիսրդ մը վազելով եկաւ տուն, և զարմանալով մը իմացուց իր ազգականացը թէ երենց ձորը այնպիսի օտարականներ եկած են՝ որոնց լեզուն և հազուստը բոլորովին օտար է իրեն: Չորս հոգի են, ըսաւ. վայելուչ կին մը երկու որդւովքը և հետը ծեր մարդ մը, որ թէպէտ մաքուր գգեսաններ հագած է, բայց կարծեմ իրենց ծառան պիտի ըլէտ, սաւ յանդ ճամբորդները, կրկնեց աղւայ: Այս խեղճ ճամբորդները, կրկնեց աղւայ: Այս խեղճ ճամբորդները, կարսութեան ջիկը, սաստիկ յօդնած և կարսութեան մէջ կը տեսնուին, որոնց ես ալ դիպուածով պատահեցայ, երբոր հօտէն փախած այծ մը ընտաելու գացած էի և զիրենք հետառած ցըցուցի մեր ձորին ճամբան: Երթանք հիմա քիչ մը կերակուր և ջուր տաշնիք խեղճներուն և նայինք թէ կրնան արդեօք այս գիշերս հոս և կամ մեր զրացեացը քոլ անցնել:

Ան ատեն օրիորդին ազգականները շուտով մը վարսակի հաց, քիչ մըն ալ կաթ և այծու պանիր հետերնին տառած ճամբայ

ելան, այս նոր օտարականներուն տանելու, որոնք գեղեցիկ ծառի մը տակ նստած էին. որուն գագաթը ծաղիներով զարդարուած էր: Խաթունը մամուռով ծածկուած աւերակի մը վրայ նստած՝ երեսը ճերմակ քօղով մը ծածկեր էր, ծնկերուն վրայ ալ սիրուն պղտի աղջիկ մը կար: Խսկ այն պատուական ծերը, որ իրենց ծառան կերեւար՝ զրադած էր ջորիին վրայէն բեռները վար առնելու, որ հետերնին բերեր էին, խսկ միւս պղտի մանչ տղան աշխուժութեամբ մը ջորիին քիչ մը խոտ կուտար զոր խեղճ կենդանին շատ ախորժով կ'ուտէր:

Ոժխագործը և իր կինը սկսան յարգութեամբ մը մօտենալ օտարական խաթունին որուն արտաքին երեւոյթը կը ցուցնէր որ բարձր կարգէ մէկն ըլլայ:

Նայէ, ըսաւ ցած ձայնով մը ածխագործին կինը իր էրկանը, սա խաթունին ըստքանչելի վզնոցը և բածկոնին աղուոր թեւերը, որոնք հազիւ թէ մարմնոյն կէսը կը ծածկին: Ով՛ Ասուուած աս ինչ զեղեցիկ ճերմակ կերպասէ ոտքի ամաններ են, ինչ սիրուն զարդարուած, արծըթէ բանած ծաղիկներով: — Գու զարդարանքէ զատ ուրիշ բան չես մոտածեր, պատասխաննեց էրիշ կը. այս խաթունը որ կը տեսնես այնպիսի փառաւոր զգեստներ հագած, ատոնք իր աստիճանին համեմուտ են, բայց զիսնաս որ զգեստը չէ զմարդ երջանիկ ընողը, նոյն խսկ այս մեծուհին՝ իր փափուկ ոտքի ա-

մաններովը հանդերձ, ստիպուեր է տաժաշնելի ճամբորգութիւն մը ընելու:

Երկուքն ալ իրենց բերած կաթը, հացը և պանիրը տուին օտարական խաթունին, զոր մեծ շնորհակալութեամբ ընդունելով, մէկդի ըրտ երեսին քողը, ասոնք ալ իրեն դէմքին փափուկ գծագրութիւնը և անուշութիւնը տեսնելով զմայլած մնացին. խըմցուց շուտով մը հոյէ ամանին մեջն քիչ մը կաթ պղոտի աղջիկ տղուն, որ ծնկերուն վրայ բոնած էր, և ցաւովից սրտով մը անոր երեսը նայելով, անձրեւի պէս արցունք կը թափէր. վերջապէս մանչ տղան ալ քիչ մը կաթ խմելէն ետքը, խաթունը հացը բաժնելով կերան ամենքը, ինքն ալ կտոր մը հաց և մնացած կաթը խմեց. իսկ ծերը միայն պանիր ուտելով գոհ եղաւ. բայց տեսնալու բան էր աս իրենց ընթրիքը վասն զի ան միջոցին ձորին բոլոր բնակիչքը իրենց չորս կողմերնին ժողուած մեծ զարմացմամբ և հետաքրքրութեամբ մը ասոնց վրայ կը նայէին:

Երբոր ծերը կերակուրը ընցուց, աղաչեց տեղացւոց որ եթէ կարելի է քիչ մը ատենուան համար իր սիկնոջը խուց մը պատրաստեն, խոստանալով որ ատենին առատապէս կը վարձատրէ զիրենք: — Ո՛վ մարդիկ, կանչեց ան ատեն խաթունը, գթթացէք խեղճ կնկան մը և այս երկու որդւոցս որ թշուառ դիպուած մը ստիպեց զեղ մեր հայրենիքը թողու: Աս որ լսե-

ցին հոն եղած գեղացիները ժողուեցան մեկէն և այս բանիս զարման մը մտածեցին ընելու :

Չորին վերի կողմէն առուակ մը կը բըղխէր, որ փրփրալից ալիքներով ժայռերու մէջն զուրս ցատկելով, պղտիկ ջաղացք մը կը զարձնէր: Այս առուակին եղերքը ջաղացանը պղտի անակ մը ունէր, որ թէպէտ ան կողմի ուրիշ տներուն պէս փայտէ էր, բայց արտաքին տեսքը և զիրքը շատ գեղեցիկ ու զուարձակի ըլլալով՝ չորս կողմը եղած կեռասի ծառերուն եւ պարտիզին պատճառաւան, կարծես թէ աս նոր հասած օտարական խաթունին համար շինուած էր: — Ոմենայն սիրով, բաւ, ջաղացպանը խաթունին, սա դիմացի անակը որ կը տեսնես՝ հրամանքիդ կու տամ, որուն մէջ գեռ մարդ չէ բնակեր, զոր թէպէտ ինծի համար շինեցի, որ եթէ սա ջաղացքը որդւոյս յանձնելու ըլլամ ես հոն քաշուիմ, բայց որովհետեւ բաղզը զիրամանքդ հոս ձկեց, հրամանքիդ կը յանձնեմ, գնա ուղածիդ չափ բնակիէ մէջը:

Այս բարեկամական հրաւերքը շատ հաճոյ անցաւ օտարական խաթունին և շնորհակալութեամբ ընդունելով, քիչ մը ոյժ առնելէն ետքը սկսաւ գէպ ի նոր բնակարանը երթալ:

Պղտի աղջիկը զիրկը առած ինքը կը բերէր, ծերունին ալ միւս տղուն ձեռքէն բռնած կու զար, իսկ ջաղացպանը ջորիին

Հետ կուգար: Վերջապէս հասնելով տեղը՝
մեծապէս ուրախացաւ այս բարի մարդս,
որ խաթունը իր սրտին համեմատ դժաւ,
տունը որ արդէն զարդարուած էր քանի
մը անկողնով, սեղանատախտակով մը և
քանի մը աթռոով. և որովհետեւ ճամբորդ-
ները իրենց հետ աղուոր օթոցներ և ծած-
կոցներ բերած էին, առանց նեղութեան
կրցան հանգիստ կերպով քուն ըլլալ. բայց
օտարական կինը զեռ չի պառկած Աստու-
ծոյ շնորհակալ եղաւ իր երկու որդուովքը,
որ յաջողեց իրենց ապաստանաբան մը գըտ-
նայու, այնչափ ատեն թափառելէն ետեւ:
Ով կրնար կարծեւ, կ'ըսէր խաթունը, որ
ես պալատներու մէջ մեծցած, հիմա երջա-
նիկ համարիմ զիս այսպիսի աղքատին ուը-
նակի մէջ բնակելու. ոչ որշափ ուրեմն գութ
պէտք է ունենայ մեծատուն մը արքատաց
վրայ. վասն զի ով զիտէ թէ ինքն ալ օր
մը այն վիճակին և խեղճութեանց չի հան-
դիպիր: Երկրորդ օրը խաթունը կանուխ
ելլելով շրջակայքը պտըտելու ելու երկու
տղոցը հետ: Ուշազրութեամբ մը կը զիտէր
այս սքանչելի ձորը ուր տեղ ածխագործ-
ներուն հիւղերը կը բարձրանային, որոնց
մէջէն կ'անցնէր չաղացքին առուակը. միւս
կողմանէ կը զարմանար տեսնալով այն թու-
փերով լեցուն բնական ժայռերը, որոնց
վրայ խումբ խումբ այծերը կ'արածէին, ու-
ռով և տեղույն զիւղական երեւոյթը կ'ա-
ւելցընէին:

Երբ ծերուկ ջաղացպանը խաթունը տե-
սաւ, գչալ ի անոր մօտիկնալով ըսաւ. Իրաւ
չէ մի խաթուն, որ շատ գժուարին է ասկէ
աւելի գեղեցիկ տեղ մը գտնալ. վասն զի
երբ արեւը կը ծագէ հոս, զեռ ձորին մէջ
եղած տնակները շուքի մէջ են, հոս գրեթէ
միշտ պարզ երկինք կը վայելենք, մինչդեռ
ընդ հակասակը հովիտը մառախլով ծած-
կուած կ'ըլլայ:

Տղաքը մեծ հետաքրքրութեամբ ջաղաց-
քին զմայլած, անւոյն դառնալը կը զի-
տէին. որոն անընդհատ ձայնը իրենց ա-
կանջին շատ ախորդելի կու գար. իսկ պըզ-
տիկ աղջիկը շատ կը գուարձանար, տեսնե-
րով անւոյն վրայէն ցատկած ջրին կաթիւ-
ները որոնք արեւուն ճառագայթներէն ծի-
րանի գօտիի երեւոյթ կ'առնէին: Խաթունը
զրեթէ բորբ օրը տունը տեղաւորելով ան-
ցուց, տեղացիք ալ ձեռքերնէն եկած օդ-
նութիւնը կը ջանային ընելու իրեն. որը
կերակուր բերելով, որը փայտ, որը խոհա-
կերոցի կազմածք և աստղ նման հարկաւոր
բաներ, իսկ պատի Մարթան, որ ամենէն
առաջ հովտին ճամբան ցըցուցեր էր՝ իրեն
քովը կեցած՝ կրցածին չափ կ'օգնէր իրեն
այս աշխատութեանցը:

Երբոր խաթունը կերակուր եփելու պա-
տրաստուեցաւ, խնդրեց Մարթայէն որ ի-
րեն քանի մը հաւկիթ բերէ: — Ի՞նչ ընե-
լու, հարցուց Մարթան. — Եփելու համար,
պատասխանեց խաթունը, շուտ ըրէ գտիր

ինծի քանի մը հստու: — Հաւկիթը եփելու համար, ըստու աղջիկը զարմացմամբ. թըռչունները այս եղանակին չունին հաւկիթ, բայց թէ և ունենային ալ սակայն ափառն կըլլար հարիւրաւոր սարեկի և կամ կարմը բազվսի հաւկիթներ զոհ ընել մէկ սեղանի մը համար: — Ի՞նչ կըսես, ըստու մէկէն խաթունը, քեզմէ թռչնոյ հաւկիթ չեմ ուղեր, այլ հաւու: — Թաղութիւն կ'ընես խաթուն այդ թռչունները ինծի անձանօթ են, ըստու Վարթա, զուկիւր շարժելով: — Ի՞նչ զժբախտութիւն, պատասխանեց խաթունը, գեռ ձեր երկիրը հաւ չկայ մի:

Հաւերը ի սկզբան արեւելքնեն բերուած ըլլալով, շատ ստկաւագիւտ էին և շատ տեղ չէին գտնուեր. ինչպէս որ են հիմա սիրամարգները: Եւ որովհետեւ հաւկիթներէն զատ, մսի ալ կարօտութիւն ունէր որ նոյնպէս չունէր, չէր զիտեր թէ ինչ կերպով կերակուր պատրաստէ: — Չիմ յիշեր որ բոլոր կենացս մէջ այս օրուան պէս հաւկիթի մը յարզը ճանչցած ըլլամ, կ'ըսէր ինքն կրեն, բայց հիմա կը տեսնամ, ինչպէս նաև տիսուր ճամբարգութեանս մէջ փորձեր եմ որ կարօտութիւնը կը սորուեցնէ մարդուս, պատուել Այսուժոյ այն պարզեները, որոնց ուրիշ անդամ անտարբեր կերպով նայեր ենք:

Այս ձորին աղնիւ բնակիչքը թէպէտ որչափ ալ կը չանալին օտարական խաթունին ամեն ուզածը ընելու, բայց այնու հանդերձ

շատ բանէ զուրկ էր: Երբ չաղացպանը քանի մը ձուկ կ'որսար և կամ ածխագործ մը քանի մը սարեակ կը բռնէր, մեկէն իւրեն կը բերէին: Հետը եկած ծեր ծառան ալ ամենայն սիրով կը ծառայէր իրեն, ու երբ խաթունը ստկի կարօտութիւն կ'ունենար, իրեն հետ բերած աղուոր զարդերէն և աղնիւ գոչարեղներէն և կամ մատնի մը կու տար ծառային ձեռքը որ տանի ու ծախէ. անիկայ ալ կ'երթար և հազիւ քանի մը շարթէն կը դառնար, տանը համար հարկաւոր եղած բաները բերելով: Տեղացիք մաննաւոր զիտեր էին, որ ծառային տուն դառնալու ատենը խաթունը սաստիկ տիսուր կերեւար, և աչքերն ալ շատ արցունքէ կարմրցած՝ որով և կարգէ զուրս հետաքրքրութեան մէջ ինկան և կ'ուզէին իրեն ով ըլլալը զիտնալ. և թէ միանգամայն ուսկից կուգար, բայց մեջերնէն մէկն ալ չէր համարձակիեր այս բանս հարցնելու: Երբ ծեր ծառային կը հարցընէին, այնպիսի անուն մը կ'ըսէր իրենց, որ հազիւ կ'ունային արտարերեւ, և քանի մը զայլկենէն եռեւ ան ալ կը մոռնային: Վերջապէս խաթունին աղուն երթալով, զուրցէ մեզի կ'ըսէին ինչ է մօրդ անունը՝ մի վախնար մարդու ալ չենք զուրցեր. անիկայ ալ իրենց ծածուկ կերպով Այսը կ'ըսուի ըստաւ, նոյն բանը աղջիկ աղուն ալ հարցուցին, անիկայ ալ մի և նոյն պատասխանը տուաւ որով և այն բարեսիրած մարդիկները որոշ բան մը

չիմանալով դարձեալ կը սպասէին հետաւ-
քըրքութեամբ թէ այս խորհրդաւոր բանե-
րը ինչ վերջ պիտի ունենան:

Բ

Փառք Աստուածոյ, վերջապէս հաւեր
ունեցանիք

Օր մը ծեր ծառան, որ Կիրակոս կը կո-
չուէր, իր սովորական ճամբորգութենէն
գառնալով հետը վանդակ մը բերաւ, որուն
մէջ ազաղաղ մը և քանի մը հաւեր կային:
Երբ հովտին տղաքը զինքը տեսան շուտով
ընդ առաջ վաղեցին, որովհետեւ ամեն ան-
դամ երբ տուն կը գառնար իրենց խաղա-
լիքներ և կամ անուշեղէններ կը բերէր:

Այս անգամ չորս կողմը ժողուած հե-
տաքրքութեամբ մը վանդակին վրայ կը
նայէին որ բարակ լաթով մը ծածկեր էր.
որով և մէջի եղածները չէին տեսնուեր:
Ինչուան խաթունին զրանը առջեը տղաքը
հետը մէկտեղ դացին, անիկայ ալ իր եր-
կու որդուովքը զիմացը ելաւ զինքը բարեե-
լու: Փառք Աստուածոյ կանչեց պատիկ աղ-
ջիկը ձեռքերը իրարու զարնելով, ահա վեր-
ջապէս հաւեր կը տեսնեմ: Ան ատեն կի-
րակոսը վանդակը զետին զնելով դուռը
բացաւ և մեջէն զեղեցիկ ազաղաղ մը
դուրս ելաւ, զոր տղաքը տեսնելով շատ
զարմացան: — Ո՞վ ինչ զեղեցիկ թոշուն է,

պոռացին ամենկը մէկտեղ. ամենեւին տառը
նմանը չէինք տեսած, ինչ ազուոր կարմիր
պսակ ունի զիմուն վրայ. ինչպէս կը փայ-
լին փետուրները, աս ինչ աղուոր պոչ ունի:
Նոյնպէս նաեւ հաւերն ալ շատ սիրեցին և
կուրախանային՝ տեսնելով որ խաթունին
տուած ցորենը կրացելով կը ժողուեն:

Երբ բոլոր ցորենը կերան, ագաղաղը
յանկարծ շտկուցաւ և թեւերը ուժով մը
թոթուելով երգեց: Ասոր վրայ տղաքը շատ
զուարձացան և ամենը մէկ բերան նոյնը
սկսան կրկնել՝ ըսկով կուկուչիկու. և ին-
չուան որ տներնին հասան բոլոր ճամբան
իրենց խօսակցութիւնը Կիրակոսին բերած
զեղեցիկ թոչուններուն վրայ էր, կրկնելով
միշտ կուկումբկու: Երբ տներնին եկան ի-
րենց ծնողացը պատմեցին տեսածնին, այն-
պէս որ անոնց ալ փափաքը շարժեցաւ զա-
րու և տեսնելու այս թոչունները, որոնց
վրայ իրենց որդիքներէն աւելի զարմա-
ցան:

Փիչ ատենէն, հաւ մը սկսաւ թխաել, ո-
րուն Մարթան ամեն օր կերակուր կու
տար: Օր մը խաթունը հովտին տղաքը իր
քովը ժողուած ցըցուց անոնց այն հաւուն
բոյնը, որոնք զարմացած մնացին տեսնելով
ածած հաւկիթներուն բազմութիւնը: —
Տասնըհինգ հաւկիթ, կանչեցին բազմու-
թեամբ, սարեկները քանի մը հաւկիթ ա-
ւելին չեն ածեր, մէկալ թոչուններն ալ
չնպէն աւելի: Ի՞նչպէս պիտի կարենայ այս
հաւը այնչափ ձագերը մեծցնել:

Երբ ձագերը սկսան հաւկիթներէն դուրս ելել, խաթունը ուղելով օտարական տղաքը դուրս ճացնել կանչեց զիրենք քողը, և ան օրը աօն ըլլալով իրենց հետ շատ մըն ալ չետաքրքիր մարդիկ եկան: Յըցուց անոնց հաւկիթ մը, որ մէջի եղած ձագը գեռ նոր սկսեր էր կեղեր կոտրել և կը ջանար մեջէն դուրս ելլերու դոր տեսնալով, կարգէ դուրս կը զուարժանային. միւս կողմանէ խաթունն ալ կ'օգնէր ձագին, որ խեղճը շուտով կարենայ պատիւ: Բայց տղոց զարմանքը շատցաւ երբ տեսան որ այն պզտի ձագերը հաւկիթէն ելլերու ատեն բոլորովին ծածկուած էին փետուրով և աշխուժութեամբ առզին անդին կը վաղէին, որովհետիւ ինչուան այն ատենը թռչուն մը չէին տեսած որ ծնուծ ատենը փետուր ունենայ և քալէ, այլ ընդհակառակը միշտ կոյլ տեսած էին և անկարող իրենց կերակուրը գտնելու: Բայց տեսնալու բան էր տղոց ուրախութիւնը երբոր այն փայլուն փետուրներով գեղեցիկ հաւը, իր տասնընկնդ ձագերովը սկսաւ դաշտը երթալ, ալ խնտումով լցուած սկսան ուրախութեան ձայներ հանելու: Ան միջոցին աղոցմէ մէկը ուղելով մօտէն զըննել աս ձագերը, բռնեց անոնցմէ մէկը՝ բայց դիտելու ժամանակ չունեցաւ վասն զի ձագը բանուելու ժամանակ սուր ձայն մը հանելով, մայրը վրայ հասաւ և թեւերը բացած կատաղութեամբ աղուն զիսուն վրայ յարձակեցաւ և անշուշտ տղուն աշքը

Հանած կ'ըլլար թէ որ շուտով մը ձագը ձեռքէն չի ձկեր: Աս որ տեսաւ տղուն հայրը յանդիմանեց անոր անխոհմութիւնը: Իսկ մայրը զարմանալով մը, ըստ: Ինչպիսի կարգէ զուրս խնամք է որ ունի այս կենդանին իր ձագերուն վրայ. իրաւցնէ բոլոր մարդկութեան գեղեցիկ օրինակ կը նայ ըլլալ:

Երբ հաւը կակուղ կեր մը կը գտնար մեկին ձայն հանելով իր ձագերը չորս կողմը կը ժողովէր, և կտուցով կտոր կտոր լնելով գտածը, ձագերուն կու տար որ ուտեն: Ամենը կը զարմանային տեսնելով այս պզտի կենդանիները, որոնք գեռ հազիւ օրուան մը ըլլալով ոչ միայն աշխուժութեամբ ասգին անդին կը վաղէին այլ և իրենք իրենց կերակուրը կը հոգային:

Ոլուը մտնային ետքը հաւուն ձագերը զիշերուան զովութենէ պատսպարելու համար, իրենց մօրը թեւերուն տակ մտան, որ ներկայ եղողները շատ զարմացուց, որոնց համար այս ամեն բանը բոլորովին նոր երեսոյթ մըն էր:

Զաղացպանը, որ ածխագործներէն իր խելքով աւելի քան թէ զգեստուցը գունով կը զանազանուէր, ըստ ներկայ եղողներուն. Այս օտարական թռչունը որ կը տեսնաք, իրաւցնէ հիանալի բան մըն է, բայց ասոր նման բնութեան մէջ եղած հրաշալիքները Ասուժոյ իմաստութիւնը և կարողութիւնը կը յայտնեն մեզի: Մտածեցէք

թէ որչափ հարկաւոր է որ այս ձագերը անմիջապէս իրենց ծնանելէն ետքը, մեկէն սկսին քաղել և իրենց կերակուրը ճարել, վասն զի անկարելի էր որ իրենց մայրը կարենար այնչափ բազմութեան կերակուր հասցնել: Կոյնպէս նաև ամենահարկաւոր էր իրենց մօրը ձայնին հնագանդինին, վասն զի առանց անոր կը ցրուէին և կը կորսուէին: Բայց ես ուրիշ բանի այնչափ չեմ զարմանար որչափ այս հաւուն իր ձագերը պաշտպանելու քաջարտութեանը վրայ, մինչդեռ ձագ չունեցած ժամանակը զինքը կը մեղադրէի իրեն վախկոտութեանը համար, աեսնելով որ քովը մօտեցածիս պէս մեկէն հեռուն կը փախչէր թէ և ամենեւին վիսս մը ընելու միտք չունենայի իրեն, բայց հիմա իր մայրական գութը, իրեն երկշուտութիւնը արիտութեան փոխեց: Առոցաւնաւ իր որկորսաւութիւնը որ հատ մը զարիթ համար՝ ուրիշ անգամ մեծամեծ կոիւներ կ'ընէր որպէս զի ինքը ուտէ. իսկ հիմա ընդհակառակը թէ որ բան մը զըտնալու ըլլայ կը կանչէ մեկէն իր ձագերը և տեղէն չի շարժիր ինչուան որ ամենքն ալ չի կշտանան: Եւ ով է ուրեմն որ այս կարգէ գուրս խնամքը դրեր է անոր բնութեանը մէջ, եթէ ոչ Աստուած: Ուրեմն թէ որ այս սողոմելի կենդանեաց վրայ այնչափ գութ ունի Աստուած, ինչպէս կը նանք մենք յուսահամել և տարափուսիլ մեր կենացը վրայ, միթէ մեր վրայ ալ ինքնին :

Հսկեր: Յուսանք ուրեմն առ Աստուած, սիւրելի բարեկամք իմ, վասն զի ինչ որ կ'ընէ բոլորն ալ աղեկ է, և թէպէտ բոլոր իր արարածոցը վրայ՝ բայց ևս առաւել մարդկանց վրայ մասնաւոր գութ և խնամք ունի որոնք իրեն ամենագեղեցիլ արարածներն են:

¶

Հիւա առատորեամբ հաւկիր ութիւնը

Օտարական խաթունը՝ ձորին բնակիչքը վարձատրելու համար, որոնք իրեն այնչափ սէր և խնամք ցըցուցին, միաքը դրաւ անոնց փոխարէն ընծայ մը ընելու, որով և կը յուսար քիչ մը լաւցնել վիճակնին ինչպէս որ ան ատենը շատ հաւեր և հաւկիթ ուներ, օր մը խարեց Վարթան որ ան տեղայն ընտանեաց մայրերը, երկրորդ օրը, որ կիրակի եր՝ իրեն կանչէ, որոնք շատ սիրով յանձն տախն խաթունին հրաւէրքը: Յաջական որը ամենքը տօնի օրուան զգեստները հագած եկան: Ծեր կիրակոսը, պարախզին մէջտեղը սեղուն մը և չորս կողմը քանի մը նստարանները պատրաստեց: Աշմենքը ժաղովելէն ետքը նստան, և Վարթան սեղանի վրայ հաւկիթով լեցուն կողով մը զրաւ: Բոլոր հաւկիթները ձեան պէս ճերմակ էին ու մէջերնէն մէկն ալ չիկար որ բիծ ունենար. հրաւիրեալ կանայք առջի

անգամ տեսնելով այնչափ հաւկիթ մէկտեղ զարմացած մնացին։ Որդնեալ է Աստուած, ըստ ան ատեն խաթունը, հիմա առասութեամբ հաւկիթ ունենալով ցուցընեմ ձեզի թէ ինչ օգտակար են անոնք մեզի, որոնց մով տեսակ տեսակ կերակուրներ կը շենուին, աժան և միսնգամայն առողջարար։ Աս ըսելէն ետքը հաւկիթները տուա և աննցմով զանազան ուտելիքներ շինեց զիմացնին։ Իսկ Վիրակոս՝ ուզելով անոնց զարմանքը շատցնել, խաշած հաւկիթները ներս բերելու ատենը անոնցմէ շատերը գետին ձգեց, զոր տեսնաբով օտարականները սասափի ձայն մը ձգեցին կարծերով որ բոլոր հաւկիթները փացան, ան միջոցին ապնւական խաթունը անտարբերութեամբ մը ժողուց զանոնք գետնէն և կեղեւը սուրկերով ցըցուց անոնց որ մէջի եղածները ամբողջ և անվնաս մնացեր են։

Երբ այս ամեն կերակուրները պատրաստուեցան, ամենքն ալ շատ ախորժով կերայ, խօսելով միշտ անոնց աղէկ համին վրայ։ Կերակուրէն ետեւ, խաթունը իրենց քանի մը ապազաղ և շատ մըն ալ հաւ ընծայ ըրաւ, զոր մեծ շնորհակալութեամբ ընդունեցան։

Բաւական ատեն այս հաւկիթները իրենց խօսակցութեանց նիւթ եղան վասն զի միշտ նոր բան մը կը գտնային վրանին զիտելու։

Ածխագործները շատ կը սիրէին ագաղաղին ձայնը, որովհետև կ'իմացնէր իրենց առաւոտեան գալը, և թէ աշխատութեան ժամանակը հասած է։ Կանայք մասնաւորապէս շատ կ'ախորժէին երբ հաւը կամացուկ ձայնով մը կ'իմացնէր իր հաւկիթ ածելը, ամեն անգամուն որ կը լսէին իրենց հաւուն այն ձայնը՝ մեծ ուրախութիւն կ'ըւլար բոլոր անեցուց։ Ոտէպ կը խօսէին մէջերնին, ըսելով թէ իրացնէ այս թռչունները մասնաւոր մեր պիտոյիցը համար ստեղծեց Աստուած։ Քիչ անգամ կը հեռանան անէն և ամեն մէկ կանչելուն կու գան, և իրիկունները իրենք իրենցմէ հաւուց կը մտնեն։ Ուրիշ օգտակարութենէ զուրս զրեթէ ոչ ինչ բանով կը կերակրուին, և միշտ ալ առասութեամբ հաւկիթ կ'ածեն։ Իրաւցնէ հաւը Աստուծմէ պարգև է աղքատաց :

Օտարական խաթունին երկու տղաքը որոնք սաստիկ արտմած էին այնչափ ժամանակ հաւկիթէն զրկուած ըլլալսուն համար, մեծ ուրախութեան մէջ էին որ հիմա առատութեամբ ունեցան, որուն համար չէին զիտեր թէ ինչ կերպով Աստուծոյ շնորհակալ ըլլան :

Դ

Զատկական հաւիրներուն հանդէսը

Վերջապէս աշունն ալ անցնելով ձմեռը եկաւ, որ այս կողմերս միշտ սոսկալի կ'ըւլայ: Հովտին անակները ամիսներով ձեան մէջ ծածկուեցան, ուրիշ բան չէր տեսնուեր, բայց միայն հիւղերուն ծխաններէն ելած մուխը: Բլուրներն ալ իրենց գեղեցիկ երեւոյթը չունեին. Հազարքն ալ չէր դառնար, և ամառը այնչափ ձայն հանող և սրբնթաց ջուրը՝ հիմա թանձր սասի մը տակ հանդարտած էր, որով և այս ցուրտ կողմերուն բնակիչքը օր մը առաջ կ'սպասէին գարնան գեղեցիկ օրերուն: Ինչ և իցէ, ձմեռը անցնելով գարնան սկիզբները այս ձորին տղաքը՝ հովտին առաջին մանուշակները և անպտուղ ելակներուն ծաղիկները ժողուելով խաթունին երկու որդուցը կտմնատին և Պլանշին ընծայ բերին, որոնց մով գեղեցիկ պսակներ շինելով, իրենց մօրը շատ հաճոյ անցաւ, և ուրախութեամբ մը ըսաւ. Չեմ զիտեր ինչպէս վարձատրեմ ևս այս ազնիւ տղաքը, որոնք այնչափ սէր և գութ ունին իմիններուս վրայ, պէտք է որ զատկին օրը իրենց հանդէս մը ընեմ, որովհետեւ զիտեմ որ տղաքը զուարձութիւն կը սիրեն, ընկոյզ և ինձոր տալ իրենց. բայց զատկին օրը, ամենեւին հասած պր-

տուղ չի գտնուիր և հաւկիթէն զատ ուրիշ բան չիկայ, որովհետեւ ասոնք են բնութեան առաջին ընծայները:

— Խաթուն, ըսաւ անդիէն Մարթան, թէ որ հաւկիթները զանազան զոյներով ըլլան կարծեմ թէ աւելի գեղեցիկ կը տեսնուին :

— Աղէկ միտքս ձգեցիր, ըսաւ խաթունը, հաւկիթները կը պնդացնեմ և այլ և այլ գունով ներկել կուտամ, յուսամ թէ տղոց շատ հաճոյ պիտի անցնի:

Այս խորհրդով հաւկիթները զանազան կերպով ներկեց, ոմանք կապուտակ գունով, ուրիշները ոսկեգոյն գեղին, ուրիշներն ալ փայլուն կարմիր: Ամանց վրայ տերեւներ շինել տուաւ, և ուրիշներուն վրայ ալ համառօտ գրուածք մը:

— Գունաւոր հաւկիթներ, պոռաց չազպանը զարմանալով մը, երբ տեսաւ զանոնք, իրաւոնէ կարծես թէ բնութեան զարթնուուր կ'ուղեն ասոնք իմացնել մեղի, որ իր ճերմակ զգեստը հանելով, աւելի ազուրո գոյներով հագնելու կը պատրաստուին: Ինչպէս որ Աստուած չէ թէ միայն համով, այլ նաև զանազան զոյներով պտուղներ կուտայ մեղի, որպէս զի մեր տեսութիւնն ալ զմայլեցնէ: Կեռասը կարմիր, սալորը կապուտակ, իսկ տանձը գեղին, ահաւասիկ այս բարի խաթունն ալ տեսակ տեսակ գոյներ տուաւ հաւկիթներուն:

Այն տարին զատկը շատ գեղեցիկ օր ըրաւ, արեգակը փայլուն և տաք էր եր-

կինքը պայծառ առանց մէկ ամպի մը, այնու պէս որ ամեն մարդ կը կարծէր թէ նորէն կը ծնանի, վերէն ի վար գաշտերը կանաչ խոտով ծածկուած էին, հաղարումէկ ծաղիկներով զարդարուած:

Այս գակը ծագելէն շատ տուաշ, օտարական խաթունը՝ և իր հաւասարիմ Կիրակոսը ճամբայ ելան եկեղեցին երթալու, որ իրենց բնակութենէն զրեթէ երկու փարասախ հեռու էր. հովտին բնակիչքն ալ իրենց հետ մէկտեղ գացին: Կեսօրուան մօտ խաթունը ջորիին վրայ հեծած տուն գարձաւ, իսկ գեղացիք հետեւակ ըլլալով շատ ուշացան տուն համնելու: Խաթունին տուն գառնալէն քիչ ետքը, հովտին տղաքը, որոնք իրենց պատիկութեանը համար իրենց ծնողացը հետ չկրցան ժամ երթալու՝ և որոնք Լամսնտին և Պլանչին հասակակից էին, ուրախութեամբ մը խաթունին տունը եկան, որ արդէն այն օրուան հրասիրեր էր զիրենք: Անիկայ ալ մեծ սիրով պարտէզը տարաւ զիրենք և ձուածե սեղանի մը դիմաց, որ խոտով շինուած նասարաններով պատած էր, մէկիկ մէկիկ նատեցուց. իրենց հետ նատան նաեւ Էտմոնտ և Պլան: Ամենուն երեսին վրայ ուշուխութիւնը կը փայլէր և անհամբերութեամբ կ'սպասէին իրենց համար պատրաստուած բաներուն:

Ան ատեն խաթունը սկսաւ մէկիկ մէկիկ պատմել իրենց թէ դատիկը ինչ է և թէ

ինչու համար մարդիկ այնպէս հանդիսաւոր կը տօնեն: Խօսքը լմնցնելէն ետքը, մեծ պնակ մը լեցուն կաթով ու հաւկթով խառն կերակուր մը բերել տուաւ սեղանին վրայ, ուսկից ամենքը ախորժով ուտելէն ետքը, տարաւ զիրենք պարտիզին մօտ եղած եղեւ մին ծառերու անտառ մը. բոլոր այս ծառերուն ոտքը թանձր մամուռով պատած ըլլալով խաթունը ըստ իրենց որ ամենքը մէյմէկ բոյն շինեն անոնցմով. սիրով յանձն առին տղաքը և սկսան ամենքը շինել, անոնցմէ ճարտարները օգնելով տկարներուն: Այս գործողութենէն ետքը, տղաքը նորէն պարտէզ մտնելով տեսան սեղանի վրայ հաւկթով շինուած պսակածեւ անուշեղէն մը, ուսկից ամենքն ալ կարելով կերան: Ան միջոցին Մարթան ծածուկ կերպով կուզով մը գունաւոր հաւկիթ առած՝ շիտակ անտառը վազեց և հոն տղոցը շինած բոյներուն մէջ զրաւ անոնցմէ: Երբ տղաքը իրենց անուշեղէնը լմնցուցին, ըստ իրենց խաթունը. Երթանք հիմա նորէն անտառը ձեր շինած բոյները տեսներու: Ամեն մէկ բոյնին մէջ հինգ հինգ հաւկիթ կար՝ մի և նոյն գունով և անոնցմէ մէկուն վրայ համառօտ բարոյական զրուած մը կար: Ան կարելի է պատմել տղոց ունեցած ուրախութիւնը ու խնտումը տեսնալով այն գունաւոր հաւկիթները: — Կարմիր հաւկիթներ աղաղակեց մէկը. — Ահա կապտագոյն հաւկիթները կանչեց ուրիշ մը. — Իմին-

ներս գեղին են ըսաւ երրորդ մը. — ՈՇ
չեմ կարծեր, ըսաւ Մարթային պղտի քոյրը
Աննան՝ որ այս գեղեցիկ հաւկիթները հա-
ւերը ածած ըլլան, անշուշտ նապաստակի
մը ձագը ածեր է զատոնք վասն զի երբ
ես իմ բոյնս կը շինէի, տեսայ որ նապաս-
տակ մը քովս եղած թռվիերուն մէջէն
ցատկելով փախաւ: Աննային այս միամիւ-
տութեանը վրայ մեկալ տղաքը սկսան խըն-
տալ:

Քիչ ատենէն տղաքը յայտնեցին խա-
թունին որ այն հաւկիթներէն զատ զատ
դոյներով կը փափաքին ունենալով, անիկա
ալ ըսաւ որ եթէ ուղենան իրենք իրենց
մէջ փոփոխութիւն ընեն, միայն ուշ զնեն
որ այն հաւկիթները ամեն մէկը պահէ
որոնց վրայ զրուած բան կայ, անոնք ալ
ըսածին համեմատ ըրին: — Տղաքս, ըսաւ
ան ատեն խաթունը, Աստուած ալ իրեն
պարգեները այսպէս բաժնեց մարդիկներուն,
որպէս զի մէկ մէկու հետ փոփոխութիւններ
ընելով, իրարու վրայ սէր և զութ ունե-
նան. միանգամայն և բարեկամութեան կա-
պը հաստատուի մէջերնին:

Պղտիկ խամոնաը իր հաւկիթին վրայի
զրուածը սկսաւ կարդալ, զոր տեսնալով
գեղացւոց տղաքներէն մէկը շատ զարմա-
ցաւ որովհետեւ նոյն ատենները զարոցները
քիչ էին և այսօրուան պէս կարդալու և
զրելու արուեստը յառաջացած չէր, ուստի
աղաչեց որ իրեն հաւկիթին վրայի զրուածն

ալ կարգացուի: Ան ատեն խաթունը ձեռքը
առնելով, ըսաւ իրեն, քովինիդ վրայի
զրուածը շատ գերազանց բան է, այսինքն
Շնորհակալ եղիր Աստուածոյ ամեն օրուան
կերածիդ համար: Կարդալէն վերջը հար-
ցուց տղոց թէ արդեօք այս կարգացածը կը
կատարեն մի, որոնք երբ պատախաննեցին թէ
չէ, համկցուց իրենց թէ անհրաժեշտ պէտք
է Աստուածոյ շնորհակալ ըլլալ իր տուած
պարգեւացը համար: Բոլոր տղաքը ուղելով
իրենց հաւկիթին վրայի զրուածը գիտնալ,
օտարական խաթունին չորս կողմը ժողուե-
ցան և թախանձանօք կ'աղաչէին որ ամենուն
հաւկիթին վրայի զրուածը կարդայ և բա-
ցատրէ իրենց, անիկայ ալ զիրենք հանդար-
տեցընելէն ետքը՝ առաւ իւրաքանչիւրին
հաւկիթը և սկսաւ կարդալ, որոնց վրայ այս
յաջորդ զրուածքը կար:

1. Սիրել զԱստուած, տղաս, իր առաջին
օրէնքը և պատուիրանն է.
2. Փախիր մեղքէ, որովհետև Աստուած
կը տեսնէ զքեղ.
3. Շնորհակալ եղիր Աստուածոյ իր ամենու-
րեայ պարգեւացը համար.
4. Երախտագէտ սիրաը երկնքի կը մօ-
տեցընէ զքեղ.
5. Յուսա՞ առ Աստուած, եթէ կ'ուղես
որ կարօտութեանդ ատեն օգնէ քեղի.
6. Դժբախտ է անիկա, ուսկից Աստուած
իր օգնութիւնը կը հեռացընէ.

7. Ով որ զՅիսուս կը սիրէ, իր պարտքը կասարած կ'ըլլայ.
8. Այօթքը և աշխատութիւնը զմարդ իմաստուն և բարի կ'ընեն.
9. Գթութիւնը, հեղութիւնը և բարեգործութիւնը իրեք ամենահարկաւոր առաջնութիւններ են.
10. Յամառութեամբ մարդ բան չի վաստըկիր.
11. Հլու տղան առանց ընդդիմութեան կը հնապանդի.
12. Մաքուր սիրտը շատ տեսակ վշտեր կը նուազեցնէ.
13. Որդեսակ, երբ կ'ամնաս, ըսել է թէ Աստուած ազդեցութիւն մը կ'ընէ քեզի.
14. Մեղքէ հեռու կեցող տղան վարդի պէս կը փայլի.
15. Համեստութիւն սիրողը յարգելի կ'ընէ իր անձը.
16. Ստախօսին ըսածներուն մարդ չի հաւատար.
17. Կեղծառորութիւնը ատելի ախտ մըն է.
18. Համեստութեամբ ստացուած բանը կ'ուրախացընէ զմարդ.
19. Յաւը անկարգութեանց հետեանքն է.
20. Ագահութիւնը մարդուս սիրտը կը պընդացընէ.
21. Առաքինի մարդը միշտ արգահատող է.
22. Բարկութիւնը, ատելութիւնը նախանձը՝ անկարդ սէր կը պատճառեն մարդուս.

23. Անուշութիւնը և բարեգործութիւնը գովասանաց արժանի են.
24. Անիկա որ երկայնմասութեամբ կը համբերէ վշտաց՝ երկնից արքայութեան արժանի է.
25. Ոսկին չէ որ զմարդ մեծարելի կ'ընէ, այլ առաքինութիւնը.
26. Մաքուր խոճմտանքը մեծ հանգստութիւն կը պատճառէ.
27. Ով որ աղէկութիւն մը կ'ընէ՝ մեծ ուրախութիւն սրտի կ'զգայ.
28. Միշտ պաարաստ եղիր Աստուծոյ տոջեւելելու.
29. Զուարճութիւնը շուտով կ'անցնի, առաքինութիւնն է միայն որ հաստատ կը մնայ.
30. Ընարելոց երջանկութիւնը առաքինի մարդու կը սպասէ:

Տղաքը ամենայն կարելի եղած ջանքը ըրին՝ իրենց հաւկիթներուն վրայ գրուածները սորուելու համար և որպէս զի չի մոռնան ստէպ կը կրկնէին զայն:

Խաթունը կարգաւ ըսել տուաւ ամենուն իրենց մասը ինքն ալ քիչ մը օգնելով իրենց, քիչ ատենէն չէ թէ միայն ամեն մէկը իրենին վրայի գրուածքը սկսաւ կարգալ այլ և իրենց պղտիկ ընկերներունն ալ. և կը զարմանային որ կեանքերնուն մէջ այնպէս զիւրութեամբ և ախորժով բան չէին սորուած:

Այս իրենց ուրախութեան ձայնը ան առաջնանի բարձրացաւ որ աղաղակը մինչեւ ձորը կը լսուէր, որով և տղոց ծնողքը բազմութեամբ խաթունին քովը եկան հարցնելու թէ ինչ կայ. ու երբ իմացան իրենց տղայոց ուրախութեան պատճառը՝ զարմացած կ'ըսէին թէ հոս կէս ժամուան մէջ աւելի սորուեցան քան թէ քովիրենիս վեց ամսուան մէջ. ասկէ ուրեմն յայտնի կը տեսնուի որ երբ մէկը սրանց կ'աշխատի, որ և իցէ գժուարութեան կը յաղթէ և ամեն բան կը դիւրիննայ իրեն։ Հրամեր ես, ըստ անդիէն ջաղացալնը իր չորս կողմը եղողներուն, բայց աշխատանքը իրենց դիւրեցընեն է վարպետութիւնը։

Երբոր տղաքը սուն երթալու կը պատրաստուէին, խաթունը ըստ իրենց որ գունաւոր հաւկիթները ուտեն. իսկ որոնց վըրայ գրուած կայ զգուշութեամբ պահեն։ Կը պահենք, աղաղակիցին ամենքը մէկ բերան, որովհետեւ այն գրուածքը բոլոր հաւկիթներէն աւելի կ'արժին։

Խաթունը պատուիրեց նաեւ իրենց ծնողացը որ ստէպ կրկնել տան աննաց սորվածնին՝ որպէս զի մտքերնուն մէջ աղէկ մը տպաւորուելով չըլլայ թէ մոռնան խաթունին յանձնածը. տղոց ծնողքը անվրէպ կատարելով՝ այնպիսի աղէկ սկզբունքներով մեծցան որ աննաց պէս շատ քիչ կրնար գտնուիլ այն կողմէրը։

Անդադար կ'ըսէին որ այն օրուան պէս դեռ ուրախութիւն մը չեն ունեցած որով և բարեսիրտ խաթունն ալ խոստացաւ, որ եթէ աղէկ ըլլան ամեն տարի իրենց այն պիսի հանդէս մը ընէ։

Ե

Երկու հաւկիր՝ որոնք թէ և ուկի ըլլային աւելի չին արժեր

Այն բազմութեան մէջ որոնք տղոց հանգիսին ներկայ էին, խաթունը օտարական մը տեսաւ որուն երեսին տրտմութիւնը կարծես թէ այն հասարակաց զուարթութեան չէր յարմարեր։ Ասիկայ մօտ 16 տարեկան երիտասարդ մըն էր որուն զգեստները կ'իմացընէին իր վիճակին խեղութիւնը, բայց միւս կողմանէ երեսին վրայ այնպիսի աղնոտութիւն մը կար որ ամենուն նայուածքը իրեն կը ձգէր։ Այս տղան ձեռքը ճամբորդի գաւազան մը ունէր։ Տղոց երթալէն ետքը՝ խաթունը ասոր մօտեցաւ, և արգահատելով մը հարցուց իրեն տիրութեան պատճառը, որուն խեղճ տղան արտաստելով մը պատասխանեց. « Հայրս որ քարակոփ մըն էր, խեղճը երեք շաբաթ է որ մեռաւ, որով և մայրս՝ մեծ թշուառութեան մէջ թողուց երկու պղտի տղոցմով որոց մէկը աղջիկ և միւսը մանչ է։ Մօրեղբայրս խոստացաւ ինծի որ զիս իմ հօրս արուեստին

մէջ դնէ, որ նսեւ իրեն արուեստն էր, որպէս զի կարենամ ես ալ իմ ընտանիքս պահէլ, ուստի հիմա շիտակ իրեն քող կ'երթամ : Մինչեւ հիմա քսան փարսախ տեղ քալեր եմ և դեռ նոյնչափ մըն ալ ընելիք ունիմ, որովհետեւ այս կողմի լեռներուն ամենէն հեռուն կը բնակի » :

Խեղճ որբոյն պատմութիւնը՝ որ քիչ շատ նմանութիւն մը ունէր իրեն զլխուն եկած ներուն, կարգէ գործ սիրտը շարժեց, ուստի մէկէն կերակուր տուաւ իրեն և քիչ մըն ալ ստակ դժբաղդ մօրը համար : Իր երկու տաղաքն ալ կտմոնտ և Պլանշ մէյմէկ գունաւոր հաւկիթ առին իրեն որ տանի մէկը քրոջը և միւսն ալ պատիկ եղորը : Մայրերնին ժապեցաւ որդւոցը ըրածին վըրայ, գնաց ինքն ալ հաւկիթ մը բերաւ և ձեռք տալով ըսաւ, այն բանը որ գրուած է այս հաւկիթին վրայ կարծիմ ամենէն լաւագոյն մխիթարութիւն է « Յուսա առ Աստուած երե կ'ուզես որ կարօտորքեանդ տանե օգնէ քեզի » :

Ֆրիտոյէն երիտասարդը (այս էր ճանապարհորդին անունը) չնորհակալ եղաւ խաթունին : Այն զիշերը ջաղացպանին քովը անցուց և երկրորդ օրը առաւօտը կանովս ճամբայ եւաւ, իր բարերարէն քիչ մը վարսակի հաց և այծու պանիր առնելէն եւ տեւ :

Երբորդ օրը երեկոյեան դէմ, որ քեռին տունը հասնելու դեռ երկու փարսախ մեաւ

յեր էր, մեծ գահաւանդի մը խորը ձի մը տեսաւ իր գեղեցիկ թամբովը և ճոխ զարդերովը : Կենդանին զինքը տեսնելուն պէս զլուխը վեր վերցուց և սկսաւ իրինչալ ու բախութեամբ : Ի՞նչպէս կ'ըլլայ, ըստ ինքն իրեն, որ այս ձին առանց իր տիրոջը հսուանուի . քիչ մը առաջ երթանք, նայինք արդեօք զիբաղդութիւն մը չէ՞ մի պատահած : Այս ըսելով սկսաւ այն անդունդներուն մէջ վեր վար ինչնալով դէպ ի ձիուն մօտենալ, բայց ան աստիճանի գժուարին և վտանգաւոր տեղերէ պէտք էր անցնիլ, որ անշուշտ ետ զարձած կ'ըլլար թէ որ հեղեղներուն վազած տեղէն ճամբայ մը չի գտնար առաջ երթալու : Այս գտած ճամբայէն երթալով յանկարծ ժայռի մը վրայ աղնուական գէմքով մարդ մը տեսաւ, որ փայլուն զրահներ հազած գետինը տարածուեր էր, նկատկը և զլխուն սաղաւարտը քովը դըրուած : Այս անծանօթ մարդուն երեսին դոյնը ան աստիճանի նետած էր որ երիտասարդ Ֆրիտոյէնը չի կրցաւ ճանչնալ որ ողջ է արդեօք չէնէ մեռած . ուստի քովը մօտենալով, բարեկամաբար ձեռքը բռնեց հարցնելով իրեն . Պարոն, Բնչ ունիս : Աս խօսքին վրայ օտարականը աշքերը բանալով սկսաւ երիտասարդին վրայ նայել, խօսիլ կ'ուզէր հետը, բայց բառ մը ըսելու կարողութիւն չունէր . վերջապէս ձեռքը դէպ ի բերանը տարաւ և ետքը ցըցուց սաղաւարտը որ քովին էր : Ֆրիտոյէն, հասկցաւ որ

ջուր կ'ուզէր, ուստի շուտ մը սաղաւարտը առած ջուր բերելու գնաց, որ իրենցմէ քիչ մը անդին կը վաղէր: Օտարականը ջուրը խմելէն ետև երիտասարդին դառնալով. Ահ օրհնեալ է Ասուած, ըստ իրեն. շնորհաւ կալ եմ քու խնամոցդ, ով բարի երիտասարդ, Ասուած անշուշտ խաւրեց զքեղ հոս որ զիս մահուրնէ ազատես. բայց կտոր մը հաց ունիս ինձի տալու, վասն զի անօթութենէս կը մեռնիմ: — Ոհ սիրելի բարեկամ շատ կը ցաւիմ որ ունեցածս լրջնցաւ, բայց քովս երեք հաւկիթ ունիմ ահա զանոնք քեզի կ'ուտամ. այս ըսերով հաւկիթները իրեն տուաւ, որ մեծ ախորժով մը անոնցմէ երկուքը կերաւ: Երբ Ֆրետոյն միւս հաւկիթն ալ մաքրել կ'ուզէր. Բաւական է ըստ օտարականը, որովհետեւ շատոնց կերակուր չուտելով կը վախնամ չըլւայ որ յանկարծ վնասուիմ. ոհ ինչ փառք պէտք է տամ ես Ասուածոյ որ զքեղ հոս խրկեց, որովհետև ես առանց քեզի՝ այս զիւել մեռած կ'ըլլայի:

Պատմէ ուրեմն ինձի ով աղնուական, ըստ իրեն երիտասարդը. ինչպէս եղաւ որ դուն այս կողմերը ընկեր ես: Ես զինուոր մըն եմ, ըստ օտարականը, և շատոնցուընէ ի վեր տիրոջս հրամանովը ասդին անդին կը պարտիմ, մէյմըն ալ, այս լիոներուս վրայ եղած ժամանակս զիշերը վրայ հասնելով, զժբաղգաբար այս գահավէժս ինկայ. ձիս ողջ առողջ ելաւ ասկէ, բայց իմ ոտքս

վիրաւորուելով, և վերքս պատելէն ետեւ ասստիկ ջերմ մը վրաս գալով չկրցայ ասկէ գուրս ելլել, և գուցէ մեռած կ'ըլլայի թէ որ զուն, ով բարի երիտասարդ, եկած չըլլայիր խալըսելու զիս. բայց ըսէ կ'աղաչեմ, ինչ զէպք զքեղ հոս ձգեց: Ֆրետոյն ալ կը զիսէն անցածները, մանրամասնաբար պատմեց անոր, նաեւ ան ալ ըստ որ զիւշեր մը ամբողջ ջաղացպանին քովը անցուց: — Տուր ինձի, կաղաչեմ, մէկալ հաւկիթն ալ, նայիմ ինչ զրուած կայ վրան:

Օտարականը կարդալով վրայի զրուածը, աղաղակեց եռանդուն սրտով մը. յիրաւի ով որ կը յուսայ առ Ասուած կ'աղատի նեղութենէն: Շատ անգամ խնդրեր եմ իւրեն օգնութիւնը, և ահաւասիկ ինքը խաւը զքեղ զիս ազատելու համար: Որհնեալ բայց զքեղ զիս ազատելու համար՝ որ տուին քեզի այս հաւըլլան այն տղաքը՝ որ տուին քեզի այս հաւըլլան ալով անցեր էր մտքերնէն որ կիթները. արդեօք անցեր էր մտքերնէն որ ասոնք մարդու մը կեանքը պիսի աղատեն: Որհնեալ ըլլայ այն խաթունն ալ որ ասոր վրայ այս միսիթարական խօսքերը զրեց: Տուր ինձի այս հաւկիթը, ըստ օտարականը, որպէս զի պահեմ միշտ յիշատակի համար և աւանդեմ իմ տղոցս, որպէս զի իրենք ալ սորուեցընեն ուրիշներուն թէ ինչպէս երկու հաւկիթ մարդու մը կեանքը աղատեցին: Կերած երկու հաւկիթներուս համար, մէյմէկ ոսկի կուտամ քեզի, իսկ որոն վրայ զրուածքը կայ երկու ոսկի: Ֆրետոյն հաւկիթը չէր ուզեր տալ բայց շատ

աղաչելուն համար վերջապէս տուաւ։ Ահաւ
ւասիկ գիշերը կը մօտենայ, ըսաւ զօրաւ
կանը, պիտք է որ փութանք այս տեղէս
դուրս ելլելու, ես ձիուս վրայ կը հեծաւ։

Ֆրիտոլէն օգնեց անոր՝ և ձիուն սանձէն
բռնելով, բարեբախտաբար այն վասնգաւոր
տեղէն դուրս ելաւ։

Ոտարականը շատ ուրախացաւ՝ տեսնելով
գարձեալ արևը, անտառները ու լեռները,
զորոնք արևը իր վերջին ճառագայթներով
կը զարգարէր։ Երթանք քեռիս տունը,
ըսաւ **Ֆրիտոլէն**, դիտեմ որ ուրախութեամբ
պիտի ընդունի զքեզ, և իրեն քով կը կե-
նաս ինչուան որ բոլորտին առողջանաս։

Այն զիշերը հասան բարի քարակոփին
սունը որ շատ ուրախացաւ և զովեց իր
եղրօրորդին, օտարականին ըրած բարեգոր-
ծութեանը համար։ Ֆրիտոլէն կը ցաւէր որ
չի կրցաւ խաւըել իր մօրը, հավաքին խա-
թունին տուած հաւկիթը։ Պէտք չէ որ ցա-
ւիս անոնց վրայ, պատասխանեց իրէն քե-
ախն, որովհետեւ մարդու մը կեանքը աղա-
տեցին։ Հիմա ալ ինծի կ'իյնայ զինքը հո-
գալ որուն համար ամենեւին փոխարէն մը
չեմ ուղեր։ օտարականին քեզի տուած ու-
կիները մօրդ աւելի ախորժելի կ'անցնին
քան թէ այն հաւկիթները։ Իսկ վրայի գը-
րուածքը, իրաւցնէ թէպէտեւ անգին է
բայց անիկա առանց հաւկիթին ալ կրնայ
պահուիլ՝ և դու ալ պէտք չէ մոռնաս զա-
նիկա բոլոր կենացգ մէջ։

Այս Օտարականը Ֆրիտոլէնի քեռիին քովը
կեցաւ, ինչուան որ բոլորովին առողջացաւ
և անկէց երթալէն տուած այն տանը ձոխ
բնծաներ տուաւ։

Զ

Իրաւցինէ ուկիէ և մարդրահ հաւկիր մը

Ամբողջ գարունը և ամառը անցաւ, ա-
ռանց մասնաւոր դէպք մը պատահելու հով-
ակն մէջ։ Ածխագործները իրենց զաշոր կը
մշակէին, և սոէպ անտառը կ'երթային ա-
ծուխ շինելու։ Իրենց կանայքն ալ տնական
բաներու զբաղած էին, և մասնաւոր փոյթ
մը ունէին հաւեր մեծցնելու։ Իրենց տը-
զաքն ալ սոէպ կը հարցնէին թէ «Զատիկը
երր պիտի զայ»։

Օտարական խաթունը շատ տխուր էր,
որովհետեւ իր ծեր և հաւատարիմ ծաւան,
որ իրեն ընկեր էր, և իրենց հօն համնելուն
սկիզբները սոէպ ճամբորդութիւններ կ'ը-
նէր, հիւանդացաւ և ալ հովիտը չէր կրնար
թողուկ։ Աշունը եկած էր, և հազիւ կրնար
խեղճ ծերը ինչուան տանը զրան առջեւը
երթալ արևէն տաքնալու համար։ Թշուառ
խաթունը սոէպ արցունք կը թափէր վախ-
նալով որ չըլայ թէ իր միայնակ նեցուկը
կորսնցընէ։ և իր արտամութիւնը աւելի կը

սաստկանար իր հայրենիքէն լուր մը չոռա-
նելուն համար:

Այս միջոցս նոր դիպուած մըն ալ պա-
տահելով իր վախը աւելի սաստկացուց,
վասն զի ածխագործները որ մը անտառէն
դասնալով պատմեցին որ նախընթաց գիշերը
չորս զինեալ տեսեր են, որոնք բախն թէ
Աքրովընէդ կոմսին մարդիկներն են, իմացը-
նելով նաև որ իրենցմէ ետքը շատ մը զի-
նեալ բազմութիւն ունին, և թէ զիւղին
վրայօք իրենցմէ տեղեկութիւն ուզեր են:
Զաղացպանը փութաց իմացնելու խաթունին
այս բանս որ Կիրակոսին անկողնոյն քովը
նատած էր: Երբ չաղացպանը Աքրովընէդ
անունը ըսաւ, խաթունը՝ գոյնը նետելով
աղաղակեց. Ամենակալ Աստուած իմ, ամե-
նէն մեծ թշնամիս ետևէս ընկած զիս մեռ-
ցընել կ'ուղէ, արդեօք ածխագործները իմ
նատած աւելս իմացուցէր են: Զաղացպանը
զինքը ապահովուց թէ բան մը չեն ըսած,
և թէ այն մարդիկը այս զիշեր կրակի քով
անցուցէր են և թէ առաւօտը կանուս չե-
ացէր գացէր են անկէ, բայց յայտնի է
որ զես լեռներու մէջ կը թափառին:

Սիրելիդ իմ Օալալտ, ըսաւ խաթունը
չաղացպանին, զիս քու տունդ ընդունելէն
ի վեր ճանչցեր եմ զքեզ որ համեստ և
ջերմեռանդ մարդ մըն ես. կ'ուղեմ չիմա-
տեղնիտեղ իմացնել քեզի իմ թշուառու-
թեանս պատմութիւնը:

Ես Որողալիս կ'ըսուեմ, Պուրկոյնի դքսին
աղիկներէն մէկը: Երկու դքսեր կը փա-
փաքէին փեսայանալ ինժի, մէկը Հաննօ
ուը-Աքրովընէդ, և միւսը Արնօ-առը-Լեն-
տամպուրկ: Հաննօն հարուստ էր և զօրա-
ւոր, որ և ընդարձակ բերդեր ունէր և բազ-
մութիւն զինուորականաց, բայց ոչ աղնուա-
կանութիւն և ոչ աղէկութիւն մը ունէր:
Իսկ Արնօն քաջ էր, և քաղաքին ասպե-
տաց մէջ ամենէն աղնուական, բայց ոչ
այնչափ հարուստ ինչպէս Հաննօն, որով-
հետեւ հօրմէն մինակ փած բերդ մը ժա-
ռանգեր էր և ամենէն ետևէ չէր եղած
բանութեամբ ուրիշ մըն ալ ձեռք ձգելու:
Հօրս կամացը համեմատ՝ իրեն հետ կար-
գուեցայ հանդերձ շատ մը բերդեր և ըն-
դարձակ երկիրներ օժիտ ունենալով, որով
շատ երջանիկ կեսնք կ'անցընէխնք մէկտեղ:
Հաննօն սաստիկ ոխ պահեց ինժի և էր-
կան դէմ և մեր սոսկալի թշնամին եղաւ,
թէպէտ արտագուստ ամեննեւին չէր ցուցը-
ներ: Այս ատեններս էրիկս մասնակից պի-
տի ըլլար այն պատերազմին որ կայսրը
Տաճկաց զէմ պիտի ընէր: Հաննօն ալ այս
պատերազմին մէջ պիտի մտնէր, բայց շատ
գանգաղ շարժեցաւ իր պատրաստութեամբը
և խոստացաւ որ իր բանակն ալ հոն հաս-
ցընէ երբ բոլոր զօրքը հոն ժողուին: Մինչ-
դեռ իմ էրիկս կը պատերազմէր Տաճկաց
զէմ, մատնիչ Հաննօն յարմար առիթ զըտ-
նելով սկսաւ մեր հպատակներուն և մեր

կալուածներուն վրայ յարձակիլ, կրցածը այրեց և շատ ալ մարդ սպաննեց, անկէց ետքը սկսաւ նաեւ մեր բերդերուն վրայ յարձակիլ զորոնք տառաւ մէկմէկու ետեւ: Ես ալ աս բաները տեսնելով՝ սիրելի տղաքս հետո առած փախայ տունէն: Բարի Կիրաւ կոսը այս տափնապողական փախուստիս մէջ մեր պահապան հրեշտակն եղաւ որ զիս երեկու որդուովքս այս լիններս բերաւ, ուր որ ինչուան այս օրս դժբախդ կեանք մը կ'անցընեմ:

Կ'ուզէի հոս կենալ ինչուան որ իմ էր րիկս սպատերազմէն գառնալով՝ կարենայ նորէն մեր ստացուածքը թշնամոյն ձեռքէն ետ առնուլ: Կիրակոսը երբեմն երբեմն կ'երթար լուր մը բերելու, բայց խեղճը միշտ տիսուր էր: Չար Հաննօն օր առուր կը ջանար տարածել իր եշխանութիւնը մեր երկրին և մեր հպատակացը վրայ, և աշնընդհատ սպատերազմելով կը ջանար բոլոր պային չնջել զմեկ: Տարիէ մը ի վեր որ իմ խեղճ Կիրակոս հիւանդ պառկած է, ալ հայրենիքս և էրկանէս ամեննեին լուր մը չունիմ: Զեմ գիտեր արդեօք խեղճ էրիկս ողջ է մի չենէ մեռած թշնամեաց անգութ հարուածներէն, արդեօք անգութ Հաննօն ետեկս չը ընկեր վիս փնտաելու որ սպաննէ, ինչ պիտի ըլլամ ես չեմ գիտեր, լու էր որ ես ալ մեռած ըլլայի: Այրելիդ իմ Օսլաւտ, ըսէ ածխապործներուն որ չի մատնեն զիս: Մատնել զքեկ, Տիկին աղա-

դակեց չաղացպանը, ապահով եղիր, որ Աքրովընէ ինչուան որ հոս հասնի, առաջ պէտք է որ զմեկ սպաննէ:

Չաղացպանը խաթունին վախը ածխաւ գործներուն պատմելով ամենքը նոյն լեզուն բանեցուցին: Թող գայ այն անօրէնը, ըսին ամեննքը մէկ բերան, քանի որ ունինք մենք այս կացինները, որնցնցով գիտենք մենք ալ պաշտպանել զմեկ և մեզի սպաւինողները: Թէպէտեւ ձորին բնակիչքը խաթունը ամենայն կերպով կ'ապահովցնէին, բայց օտարական խաթունը իր օրերը տըխրութեամբ կ'անցընէր: Երբեք չէր ուղեր տնէն զուրս ելլել և իր աղոց ալ չէր թուզուր զրանը առջե խաղալու: Խոկ երբ խաղաղութիւնը տիրեց լերան վրայ և այն զինեալ մարդկանց վրայ խօսակցութիւն մը չէր լսուիր, ուզեց պղտիկ շրջան մը ընել դաշտը, ուստի աշնան գեղեցիկ օր մը սնէն զուրս ելաւ և զնաց իր հիւզէն քիչ մը չեսաւ, ուր որ զիւղական մատուռիկ մը կար եղեինի մը կոսզին վրայ շինուած: Հոն զրուած էր Կիրակոսին համբորգութեանց ժամանակ բերած պատկերը որ սուրբ ընտանեաց եղիպառու փախչիլ կը ներկայացընէր: Մատուռը բարձր ժայռի մը վրայ էր, և մուտքը քանի մը նոճեօք ծածկուած էր: Այս տեղերուս խորունկ լուռթիւնը զմարդ աղօթքի և մատուռթեան կը հրաւիրէր: Ուղարկիսն իր շրջանը ընելէն ետքը չոքեցաւ հուսնդեամբ մը խորանին առջեւ և լալով

Աստուածածնայ ջերմեռանդ աղօթք մը ը-
րաւ, այն միջոցին տղաքը ժաղիկ ժողուե-
լու զբաղերով անկէ քիչ մը հեռացան:

Երբ խաթունը մինակ մնաց՝ յանկարծ
պանդխոտի զգեստով մարդ մը ելու ժայռե-
րուն մէջէն և իրեն մօտեցաւ: Երկայն սեւ
զգեստ մը ձգած էր վրան և կարճ մեկնոց
մը հագած. զիսարկը խեցեմորթով զարդա-
րուած և ձեռքը երկայն գաւազան մը կար:
Թէպէտ մօրուքը և մաղերը ձեան պէս ձեր-
մակ էին, սակայն երեսներուն գոյնը երի-
տասարդի մը գաղափար կու տար: Ոսղա-
վան յանկարծակիի գալով վախցաւ: Օտառ-
ականը յարգանօք ողջունեց խաթունը և
սկսան խօսիլ. բայց որովհետեւ օտարականը
անախորժ կերպ մը կը ցուցընէր, խաթունն
ալ անոր համեմատ ցուրտ կերպով մը խօ-
սցաւ հետր, վերջապէս ըսաւ օտարականը.
Ազնիւ խաթուն մի վախնար, վասն զի այն-
չափ անծանօթ չես ինծի որչափ որ կը
կարծես: Դու Ոսղափա — աը — Պուր-
կոյն ես, գետեմ թէ ինչ արկածներ սովի-
պեցին զքեղ այս լեռներուս վրայ քեղի ա-
պաստան մը գտնալու. կը ճանչնամ ես է-
րիկդ, յորմէ երեք տարիէ ի վեր բաժնուած
ես. թէ որ Արնօ — աը լիտէնպուրի քեղի
գետ սիրելի է, կրնամ իրեն վրայօք ճիշդ
տեղեկութիւններ տալ քեղի: Վիտնաս որ
խաղաղութիւն եղաւ, և քրիստոնեայ բա-
նակը յաղթական գամփնիով գարձաւ: Երիկդ
ես առաւ այն բերդերը որոնց մէջ իր թըշ-

նամին ապաւինած էր: Չար Հաննօն այս
լեռներս վախաւ, ուսկից ստիպուեցաւ ա-
ւելի հեռու վախչիլ: Քու էրկանդ ամենէն
մեծ փափաքը ան է որ սիրելի ամուսինը
նորէն աւենայ: Ի՞նչ ուրախութիւն աղաղա-
կեց, Ռողալիան ծունկ չոքելով: Շնորհակալ
եմ քեղի, Աստուած իմ, որ վերջապէս տե-
սար իմ արտասուբքներս և լսեցիր աղօթիցս.
Ի՞նչ ուրախութեամբ պիտօր տեսնամ զքեղ
սիրելիդ իմ Արնօ, ահ ինչ ուրախութիւն
քեղի համար ալ երբ զքեղ հաղիւ ճանչող
տղաքդ տեսնելու ըլլաս:

Ով պանդուխտ, կարծեմ թէ կը տարա-
կուսիս դու, ըսաւ գարձեալ խաթունը, որ
ես իմ սիրելի էրիկս մոսցած ըլլամ և կամ
իրեն սէրը բոլորովին պաղած ըլլայ սրտիս
մէջ. մօտեցէք տղաքս, ըսաւ խամոնախն և
Պլանչին, որոնք մատրան զրանը առջև կե-
ցած, կէս մը վախով և զարմացմամբ օտառ-
ականը կը զիտէին: Երկու տղաքը մեկէն
վաղեցին իրենց մօրը ձայնին: Արելի կտ-
մոնտ, ըսաւ մայրը զինքը զրկելով, ըսէ
առանց վախնալու այս ծեր պանդխոտին առ-
ջև այն համառօտ աղօթքը որ կ'ընենք ամեն
առաւօտ քու հօրդ համար: Տղան ձեռքերը
միացուց և աչքը երկինք վերցնելով ըսաւ
այս հետեւնալ աղօթքը:

« Ով Աստուած, որ երկինքն ես, զար-
ձնուր աչքդ երկու զժբաղդ որդիքներուս
վրայ: Հայրենիս պատերազմի է, մի թողուր
զինքը որ թշնամեաց ձեռքը մեռնի. կը

իսոստանանք քեզի միշտ չերմեռանդ ըլլալու,
որպէս զի մեր հայրը զմեղ տեսնելով ուրաւ-
խանայ: Ով աէր, ընդունէ այս մեր տ-
ղօթքը »:

Դու ալ, Պլանչ, ըստ աղջկանը, լոէ այն
աղօթքը որ ամեն իրիկուն կ'ընենք հօրդ
համար:

Աղջիկը ձեռքերը միացնելով ըստ հե-
տեւել աղօթքը: « Ամենակալ Աստուած, գեռ
չի քնացած ընդունէ մեր հօրը համար ըրած
աղօթքնիս: Տուր իրեն որ հանգիստ գտնայ
թշնամեացմէ՝ և հրեշտակներէդ մէկը խաւ-
րէ, որ միշտ հսկէ վրան: Մեր սիրելի մօրը
հանգիստ քուն մը պարզեէ, որ մոռնայ գի-
շերը իր տիրութիւնը: Տուր որ մեր հօր-
մէն բաժանման վերջի գիշերը ըլլայ այս՝ և
ծագէ շուտ մը այն օրը որ իրարու հետ
նորէն միացնէ զմել »:

Ամէն ամէն, ըստ մայրենին՝ արտա-
սուալից աչօք:

Ան միջոցին պանդխատին աշքերէն հեղեղի
պէս արցունք կը վազէր, և ալ չկարենալով
զիմանալ, վրան առած սե զգեստը, ճերմակ
մօրութք և մազերը մէկդի նետելով, երե-
ցաւ իրենց իր ասպետական զգեստովը որ
տակէն հագած էր, և թեերը բանալով,
կանչեց ուրախութեամբ:

Աիրեմիդ իմ Ասգալիա, ահ որդեալք իմ
անձկալիք, եկէք որ համբուրեմ զծեղ, մօ-
տեցէք ձեր հօրը:

Ոտզալիան և տղաքը գիրկը վազեցին, ո-
րոնք ուրախութեան արցունքներով թրջեցին
իրենց հայրը, և ան աստիճան խնտուամի մէջ
էին այն երկու ժամը, երբ մատրան զի-
մացը անցուցին՝ որ իրենց վայրկեանի մը
պէս երեւցաւ: Արնօն պատմեց իր կնոջը որ
թէպէտ բազմութեամբ եկեր է զինքը փըն-
տուելու, բայց ճամբուն զժուարութեանը և
վտանգներուն համար գեռ լեռները չի մը-
տած զաննանք հոն թողուցեր և ինքը միայն
առաջ եկեր է. և թէ պանդխատի զգեստով
ծածկուած ըլլալուն պատճառը, ուրիշ բանի
համար չէր, բայց որպէս զի գիւրաւ կա-
րենայ իրենց քով հասնիլ և գեռ չինչ-
ցուած ապահով ըլլայ զիրենք գտնալուն
վրայ: Ասգալիան հարցուց իրեն թէ ինչպէս
գտեր է իրեն այս զժուարին բնակարանը:
Աիրեմիդ, իմ ըստ Արնօն, մեր գիրար
գտնելը քու ըրած բարեգործութեանդ պը-
տուզն է, զոր ըրիր աղքատաց և մասնաւ-
րապէս այս ձորիս տղոցը, վասն զի առանց
անոր թերեւս երկայն ատեն զիրար չէինք
կրնար տեսնել, և ով զիտէ թերեւս ցյաւե-
տեան ալ, որովհետեւ զու ամեն կոզմանէ
պաշարուած էիր թշնամեացմէ, և չար Հան-
նօն իր յաղթուելէն ետեւ, այս լեռներս ե-
կաւ ապաւինելու: Կը ճանչնաս ասիկա,
ըստ Արնօ իր կնկանը հաւկիթ մը ցուցը-
նելով իրեն, որուն վրայ զրուած էր « Յու-
սս առ Աստուած եթէ կ'ուզիս որ կարօ-
տութեանդ ատեն օգնէ քեզի »: Այս հաւ-

կիթն է ահաւասիկ որ զմեղ Աստուծոյ մասնաւոր նախախնամութեամբը նորէն միացուց գտնելով զքեղ որ այնչափ ատենէ ի վեր փնտոել տուեր եմ, ետեէդ մարդիկ խրկելով։ Վերջապէս օր մը տեսայ Էգրէտ անունով զինուորներէս մէկը զոր շատ ատենէ ի վեր չի տեսնալուս համար մեռած կարծեցի, անիկա պատմեց ինծի որ զքեղ փնտուելու ժամանակը գժբաղդութեամբ անզունդներու մէջ իյնալով քիչ մնաց որ կը մեռնէր անօթութենէ եթէ չի հասնէր երիտասարդ մը, որ երկու հաւկիթով զինքը մահուլնէ ազատեց, երրորդ հաւկիթ մըն ալ տուեր է իրեն ի յիշատակ այս իր բարերարութեանը։ Էգրէտ ցըցուց ինծի այս հաւկիթը և ափշեցայ մնացի երբ քու զիրդ տեսայ վրան։ Մէկէն ձի հեծանք և շիտակ Էգրէտին բարերարին տունը գացինք, որ սիրով ցուցուց ինծի այս ձորին ճամբան։

Աը տեսնան ուրեմն սիրելիդ իմ Ռոզալիա, որ եթէ այս ձորին աղոց զատկական հաւկիթներուն հանդէսը ըրած շըլայիր, և կամ խամոնաը և Պլանը երիտասարդ օտարակիանին ողբունութիւն շընէին, այս օրս մեղի գեռ տիրութեան և ցաւոց օր մը պիտի ըլլար։ Սստուած կը վարձատրէ մեր ոչինչ բարերարութիւնն ալ, բաւական է որ փառասիրութեան և ցուցամոլութեան համար շըլայ ըրածնիս։ Մեր բարեգործութիւնը հատ մը ցորենի կը նմանի որ ճոխ հասկ մը կը բերէ։ Ոիրելի աղաքս, բոլոր

կեանքերնուդ մէջ երբեք մի մոռնանք մեր կրօնից սկզբունքը, ողբումեցէք աղքատաց, թեթևուցէք անոնց խեղձութիւնները և օգնեցէք իրենց, թէ որ կ'ուզէք դուք ալ օգնութիւն տանել, զութ ունեցէք վրանին, և ապահով եղիք որ զուք ալ ձեր կարծութեանը ժամանակ նոյնը կը գտնաք մարդկանցմէ։ Հաստատուն յոյս ունեցէք Աստուծոյ վրայ, և կը տեսնէք որ այս հաւկիթին կեղեկին վրայի զրուածը կը կատարուի վրանիդ։ Ագուցանեմ պիտի այն հաւկիթը բոլոր մարդարանով զարդարուած ոսկիէ ամանի մը մէջ և մեր զղեկին մատրան խորանին վրայ պիտի զնեմ, մեր նորէն զիրար գանալնուս յիշատակին համար։

Այս խօսակցութեանց ժամանակ իրեկունը վրայ հասնելով, Արնօ կոմսը կնկանը ձեռքէն բանած ջաղացպանին տունը դարձան, երկու աղաքն ալ իրենց ետեէն կուգային։ Հոն ուրիշ ուրախութեան մը հանգիպեցան, վասն զի կոմսին զինակիրը Էգրէտ և Ֆրիտոլէնը հասած ըլլալով՝ Կիրակոսին հետ կը խօսէին, որն որ քիչ մը աւելի աղեկցեր էր տիրոջը զալուստը լսելով։ բարի Ֆրիտոլէնը գէպ ի խաթունը մօտենալով բարեկեց զինքը, նոյնպէս նաև մնոր երկու աղաքը։ Էգրէտ ալ մօտեցաւ խաթունին և ուզեց ձեռքը պազնել, որուն պարտական էր իր կեանքը։

Կոմսը պաքաւ զիիրակոս, իսկ ջաղացպանին ձեռքը սիսմեց բարեկամարար, որ

իր ամենէն փառաւոր զգեստները հազած էր, և ամենը մէկտեղ նոյն իրիկունը ու բախութեամբ կերան ընթրկնին:

Երկրորդ օրը ապրածուելով գեղին մէջ անձանօթ խաթունին էրկանը զալսուեան լուրը՝ զամենը շվամթութեան մէջ ձգեց: Բուրոր գեղացիները վաղեցին զինքը տեսնելու, որով և ճիւղին չորս կողմը լեցուեցաւ ամեն տեսակ մարդիկներով:

Կոմսը իր կնջը և երկու տղոցը հետ գուրս ելլալով, բարեկց բարեկամաբար այս բարի մարդիկը և իրենց շնորհակալ եղաւ իր ընտանեաց վրայ ցըցուցած սիրոյն համար: Տէր, պատասխանեցին անոնք, ոչ մենք, այլ ինքն է մանաւանդ մէր բարերարը: Կոմսը երկայն բարակ իրենց հետ խօսալցելով մեծ ուրախութիւն պատճառեց անոնց իր աղնիւ կերպովը:

Այս միջոցին, կոմսին մարդիկներէն ու մանք քանի մը ածխագործներու օգնութեամբը ձորին ճամբան գտած ըլլալով հոն հասան: Ուրիշ շատ մեծամեծներ ալ՝ ինչպէս նաեւ զինուորներ որը ձիսոր և որը փողերու ձայներով գեղը մտան որոց սաշաւարտները և աղեղները փայտակի պէս կը ցոլային: Ան աստիճանի ուրախութեան ձայներ արձակեցին տեսնելով իրենց տիրուչին՝ որ չորս կողմի ժայռերը իրենց ձայնէն կը հնչէր:


Կոմսը գեռ քանի մը օր ալ ձորը կենալէն ետքը, անոնցմէ բաժնուելու նախըն-

թաց օրը փառաւոր սեղան մը տուաւ բոլոր զեղին ածխագործաց, որոնց հետ սեղանի նստան նաև կոմսը բոլոր իր մարդիկներովը: Աեղանէն ետքը առաս ընծայներ տուաւ բոլոր սեղանակիցներուն, և մասնաւորապէս չաղացպանին. իսկ զՄարթան իր կնկանը ծառայութեան տուաւ: Նոյնպէս մասնաւոր ինամք ունեցաւ նաև Գրիտալէնի մօրը, եղբարցը և քայլերուն վրայ: Իսկ ածխագործներու տղոցը ըստ. Իմ կնկանս ձեր քոլ բնակելուն յիշատակին համոր կ'ուզեմ որ ամեն տարի, զատկին օրը, այս ձորիս աղոց ամեն տեսակ գունաւոր հաւկիթ բաժնուի: Ես ալ, ըստ կոմսուհին, կ'ուզեմ հաստատել այս հանդէսը բոլոր կոմսութեանս մէջ: Այս հաւկիթները Զատկական հաշկիր կոչուեցան, և այս սովորութիւնը կամաց կամաց ամեն կողմ տարածուեցաւ:

Ա Ե Ւ Զ



100
101
102
103
104
105
106
107
108
109
110
111
112
113
114
115
116
117
118
119
120
121
122
123
124
125
126
127
128
129
130
131
132
133
134
135
136
137
138
139
140
141
142
143
144
145
146
147
148
149
150
151
152
153
154
155
156
157
158
159
160
161
162
163
164
165
166
167
168
169
170
171
172
173
174
175
176
177
178
179
180
181
182
183
184
185
186
187
188
189
190
191
192
193
194
195
196
197
198
199
200
201
202
203
204
205
206
207
208
209
210
211
212
213
214
215
216
217
218
219
220
221
222
223
224
225
226
227
228
229
230
231
232
233
234
235
236
237
238
239
240
241
242
243
244
245
246
247
248
249
250
251
252
253
254
255
256
257
258
259
260
261
262
263
264
265
266
267
268
269
270
271
272
273
274
275
276
277
278
279
280
281
282
283
284
285
286
287
288
289
290
291
292
293
294
295
296
297
298
299
300
301
302
303
304
305
306
307
308
309
310
311
312
313
314
315
316
317
318
319
320
321
322
323
324
325
326
327
328
329
330
331
332
333
334
335
336
337
338
339
340
341
342
343
344
345
346
347
348
349
350
351
352
353
354
355
356
357
358
359
360
361
362
363
364
365
366
367
368
369
370
371
372
373
374
375
376
377
378
379
380
381
382
383
384
385
386
387
388
389
390
391
392
393
394
395
396
397
398
399
400
401
402
403
404
405
406
407
408
409
410
411
412
413
414
415
416
417
418
419
420
421
422
423
424
425
426
427
428
429
430
431
432
433
434
435
436
437
438
439
440
441
442
443
444
445
446
447
448
449
450
451
452
453
454
455
456
457
458
459
460
461
462
463
464
465
466
467
468
469
470
471
472
473
474
475
476
477
478
479
480
481
482
483
484
485
486
487
488
489
490
491
492
493
494
495
496
497
498
499
500
501
502
503
504
505
506
507
508
509
510
511
512
513
514
515
516
517
518
519
520
521
522
523
524
525
526
527
528
529
530
531
532
533
534
535
536
537
538
539
540
541
542
543
544
545
546
547
548
549
550
551
552
553
554
555
556
557
558
559
550
551
552
553
554
555
556
557
558
559
560
561
562
563
564
565
566
567
568
569
570
571
572
573
574
575
576
577
578
579
580
581
582
583
584
585
586
587
588
589
580
581
582
583
584
585
586
587
588
589
590
591
592
593
594
595
596
597
598
599
590
591
592
593
594
595
596
597
598
599
600
601
602
603
604
605
606
607
608
609
610
611
612
613
614
615
616
617
618
619
620
621
622
623
624
625
626
627
628
629
630
631
632
633
634
635
636
637
638
639
640
641
642
643
644
645
646
647
648
649
640
641
642
643
644
645
646
647
648
649
650
651
652
653
654
655
656
657
658
659
660
661
662
663
664
665
666
667
668
669
660
661
662
663
664
665
666
667
668
669
670
671
672
673
674
675
676
677
678
679
680
681
682
683
684
685
686
687
688
689
680
681
682
683
684
685
686
687
688
689
690
691
692
693
694
695
696
697
698
699
690
691
692
693
694
695
696
697
698
699
700
701
702
703
704
705
706
707
708
709
710
711
712
713
714
715
716
717
718
719
720
721
722
723
724
725
726
727
728
729
720
721
722
723
724
725
726
727
728
729
730
731
732
733
734
735
736
737
738
739
730
731
732
733
734
735
736
737
738
739
740
741
742
743
744
745
746
747
748
749
740
741
742
743
744
745
746
747
748
749
750
751
752
753
754
755
756
757
758
759
760
761
762
763
764
765
766
767
768
769
760
761
762
763
764
765
766
767
768
769
770
771
772
773
774
775
776
777
778
779
770
771
772
773
774
775
776
777
778
779
780
781
782
783
784
785
786
787
788
789
780
781
782
783
784
785
786
787
788
789
790
791
792
793
794
795
796
797
798
799
790
791
792
793
794
795
796
797
798
799
800
801
802
803
804
805
806
807
808
809
810
811
812
813
814
815
816
817
818
819
820
821
822
823
824
825
826
827
828
829
820
821
822
823
824
825
826
827
828
829
830
831
832
833
834
835
836
837
838
839
830
831
832
833
834
835
836
837
838
839
840
841
842
843
844
845
846
847
848
849
840
841
842
843
844
845
846
847
848
849
850
851
852
853
854
855
856
857
858
859
860
861
862
863
864
865
866
867
868
869
860
861
862
863
864
865
866
867
868
869
870
871
872
873
874
875
876
877
878
879
870
871
872
873
874
875
876
877
878
879
880
881
882
883
884
885
886
887
888
889
880
881
882
883
884
885
886
887
888
889
890
891
892
893
894
895
896
897
898
899
890
891
892
893
894
895
896
897
898
899
900
901
902
903
904
905
906
907
908
909
910
911
912
913
914
915
916
917
918
919
920
921
922
923
924
925
926
927
928
929
920
921
922
923
924
925
926
927
928
929
930
931
932
933
934
935
936
937
938
939
930
931
932
933
934
935
936
937
938
939
940
941
942
943
944
945
946
947
948
949
940
941
942
943
944
945
946
947
948
949
950
951
952
953
954
955
956
957
958
959
960
961
962
963
964
965
966
967
968
969
960
961
962
963
964
965
966
967
968
969
970
971
972
973
974
975
976
977
978
979
970
971
972
973
974
975
976
977
978
979
980
981
982
983
984
985
986
987
988
989
980
981
982
983
984
985
986
987
988
989
990
991
992
993
994
995
996
997
998
999
990
991
992
993
994
995
996
997
998
999
1000



3 May 2.

2-9

61

0004008

2013



